

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ

«ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՆԱԿ» ՈՒՋԱՍԳԻՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՍԻ ՀԱՎԵԼԱԾ 3-4 (31-32), 2014



ՀՀ ԴԱՇԵՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴՐԱՏԱՏԱՍ ԱԿՏԱՅԱՆԻ ԱՆՎԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ՈՒՋԱՍԿԱՐԱԿԱՆ ՇԵՏԱԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՏԻՏՈՒՏ



ԱՐՑԱՆ.

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ

ԵՎ ՏԵՂԱՆԿԱՆԱԿԱՐԳԻ ՀԻՄՆԱՆԴԻՐՆԵՐԸ

ԼՂՀ ԱՆԿՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ



ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԵՏՐԵՐ

Լույս է տեսնում 2007 թվականից տարին չորս անգամ 3–4 (31–32), 2014

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Քոբանջյան Հ. Ս.
քաղաքական գիտությունների
դոկտոր (Ռ-Դ), քաղաքագիտության
պրոֆեսոր, Ռ-Դ Ռազմական
գիտությունների ակադեմիայի
ընտրված իսկական անդամ,
հակահարկաբեկչության գծով
գիտական փորձագետ (ԱՄՆ)
(նախագահ)

Չիլինգարյան Գ. Ս.
(գլխավոր խմբագիր)

Ալեքսանյան Ա. Ջ.

Այդինյան Ռ. Ա.

Այվազյան Լ. Գ.

Ապրիամով Է. Ա.

Ավետիսյան Վ. Ն.

Գավթյան Ա. Մ.

Իսախանյան Մ. Ռ.

Խաչատրյան Տ. Վ.

Խաչատուրով Յու. Գ.

Կարապետյան Մ. Ն.

Մարգարյան Վ. Հ.

Մարտիրոսով Լ. Ա.

Միրզաբեկյան Ա. Ռ.

Մուրադյան Կ. Ռ.

Յալանուզյան Ա. Կ.

(գլխ. խմբագիր տեղակալ)

Յուլյան Ն. Ի.

Նազարյան Ա. Ս.

Շիրինյան Մ. Ա.

Մեղրակյան Մ. Գ.

Վարդանյան Ա. Գ.

Տեր-Գրիգորյանց Ն. Գ.

Տոնոյան Գ. Է.

Բ Ո Վ Ա Ն Դ Ա Կ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

ԱՐՑԱԽ.

ԺՈՂՈՎՐԳԱԳՐՈՒԹՅԱՆ

ԵՎ ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ

ՀԻՄՆԱԽՆԳԻՐՆԵՐԸ ԼԳՀ

ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

(ԿՈԼԵԿՏԻՎ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ)

Հ. Ս. Քոբանջյան, Մուտքի խոսք 5

ՀԻՄՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ

Պ. Ա. Չոբանյան, 19-րդ դարի առաջին երեսնամյակում Արևելյան Հայաստանում տեղի ունեցած էթնիկական տեղաշարժերն ու տեղանվանակարգը և դրանց շահարկումները 11

ՀԱՐԱԿԻՑ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

Ս. Գ. Ասարյան, Արցախի տեղա-
նունների դասակարգման հարցի շուրջ . . . 31

Գ. Մ. Բաղալյան, Հայոց արևելից
կողմերի տեղանուններն ըստ հայկական
սկզբնաղբյուրների 36

Ը. Պ. Կոստրիկյան, Արցախի տեղա-
նուններն ըստ պարսկական աղբյուրների . . 70

Հ. Յ. Կիրակոսյան, Հայոց արևելից
կողմերի տեղանունությունը. իրանական
հետք 81

Պ. Ա. Չոբանյան, Ա. Ս. Վիրաբյան, Արցախի 1832–1833 թթ. մարդահամարի տվյալները և դրանց պատմաքաղաքագիտական նշանակությունը 87

Գաբրիելյա Ուլուխոճյան, Գանձասարի կաթողիկոսության սրբավայրերը ըստ Երեմիա Չելեպի Ջլոմուրճյանի քարտեզի (1691 թ.) 94

Ա. Կ. Յալանուզյան, Տեղանվանագիտությունը և քաղաքականությունը 99

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ 111

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 115

ԳԻՏԱԽՈՐՀՐԳԱՏՎԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԳ

- Ռ. Վ. Աղուզումջյան*, հոգեբանական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր,
Ն. Հ. Առաքելյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Լ. Ա. Արզումանյան, բանասիրական գիտությունների դոկտոր,
Գ. Ե. Բաղդասարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ս. Ա. Գալստյան, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Ս. Գ. Գալստյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Հ. Ա. Գևորգյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Կ. Ա. Դանիելյան, կենսաբանական գիտությունների թեկնածու,
 աշխարհագրական գիտությունների դոկտոր,
Բ. Ն. Հարությունյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Վ. Մ. Հարությունյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Հ. Հ. Մաթևոսյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Ա. Հ. Մանթաշյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Մ. Մ. Մարգարյան, քաղաքական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Է. Գ. Մինասյան, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Մ. Մ. Միրիջանյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Կ. Ա. Մոսոյան, տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր,
Յու. Ս. Չիլինգարյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ռ. Ա. Սաֆրասյան, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս,
Ա. Հ. Միսոնյան, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ,
Հ. Ա. Միսակյան, բժշկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր

ԱՐՅԱԽ.

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅԱՆ

ԵՎ ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՐԳԻ

ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

ԼՂՀ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

ՄՈՒՏՔԻ ԽՈՍՔ

Հ. Ս. ԲՈԹԱՆԶՅԱՆ, գեներալ-մայոր, քաղաքական գիտությունների դոկտոր (ՌԴ), քաղաքագիտության պրոֆեսոր, ՌԴ Ռազմական գիտությունների ակադեմիայի ընտրված իսկական անդամ, հակասահաքեկչության գծով գիտական փորձագետ (ԱՄՆ), ՀԱՊԿ-ի գիտափորձաքննական խորհրդի անդամ, ՀՀ ՊՆ ԱՌ-ՀԻ-ի պետ



ՀՀ-ի և ԼՂՀ-ի նկատմամբ տարածքային ոտնձգությունների հիմնավորման աղբրեջանական ռազմավարության էական բաղադրատարր է Հայաստանի և առաջին հերթին Արցախի պատմության խեղաթյուրումը: Արցախի պատմության խեղաթյուրման գործում Աղբրեջանն զգալի ուշադրություն է դարձնում հայ բնակչության «եկվորության» ու միայն 19-րդ դարի առաջին քառորդում Արցախում հայտնվելու թեզի «ապացուցմանը» և միջազգային գիտական ու հասարակական շրջաններում

դրա տարածմանը: Արցախում հայ բնակչության ի հայտ գալը Աղբրեջանը պայմանավորում է բացառապես 1826–1828 թթ. ռուս-պարսկական պատերազմից հետո ստորագրված Թուրքմենչայի պայմանագրի համաձայն իրականացված քրիստոնյա բնակչության ներգաղթով: Աղբրեջանի պատմագիտական և քաղաքագիտական միտքը միտումնավոր կերպով շրջանցում է 19-րդ դարի առաջին երեսնամյակի ընթացքում Ռուսական կայսրության եռանդուն աջակցությամբ Արևելյան Հայաստան և Արցախ մահմեդական բնակչության ներգաղթի փաստը:

Այս խնդրում իր տեսակետի առաջնդման նպատակով Աղբրեջանն ակտիվորեն օգտագործում է 19-րդ դարի առաջին քառորդում Ռուսական կայսրության կազմում Արցախի հայտնվելուց հետո նրա քարտեզներում մեծամասամբ թյուրքական տեղանունների առկայության փաստը՝ դա ներկայացնելով որպես հայերի «եկվորության» ապացույց: Այս թեզը միջազգային շրջանառության մեջ է դրվում Աղբրեջանի Նախագահի մակարդակով՝ Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանն ուղղված գործընթացում աղբրեջանանպաստ տրամադրությունների ձևավորման նպա-

տակով: Տվյալ համատեքստում 19-րդ դարի առաջին կեսին Ռուսական կայսրությունում կազմված Արցախի քարտեզներում հիմնականում թյուրքական տեղանունների առկայության փաստի գիտական վերլուծությունը և դրա իրական պատճառների վերհանումը ՀՀ-ի և ԼՂՀՀ-ի համար ձեռք են բերում ոչ միայն պատմագիտական, այլև կարևոր քաղաքագիտական և անվտանգային-քաղաքական նշանակություն:

Հարկ է նկատել, որ մինչ այժմ ՀՀ ո՛չ պատմագիտական, ո՛չ էլ անվտանգային-քաղաքագիտական միտքը համապատասխան ուշադրություն չի դարձրել այս խնդրին:

ՀՀ ՊՆ Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտը, նախաձեռնելով սույն կոլեկտիվ մենագրության պատրաստումը, խնդիր է դրել պատմական փաստերի, գիտական շրջանառության մեջ առաջին անգամ դրվող արխիվային նյութերի ներբերմամբ անվտանգային քաղաքագիտության տեսակետից վերլուծել նշված հիմնախնդիրը և այս առումով ևս գիտականորեն ապացուցել ադրբեջանական պատմագիտության կողմից կատարվող խեղաթյուրումների հակագիտականությունը: Սույն կոլեկտիվ մենագրությունում փաստական նյութի գիտական վերլուծության հիման վրա ներկայացվում են 19-րդ դարի առաջին քառորդում Արցախում եղած ժողովրդագրական պատկերը և տեղանվանական համակարգի ձևափոխման դինամիկան:

Կոլեկտիվ մենագրությունը բաղկացած է հիմնական մշակումից, հարակից գեկուցումներից և փաստաթղթային-փաստագրական հավելվածից:

Հիմնական մշակումն ամփոփում է հիմնախնդրի էությունն ու դրա բաղադրիչները, իսկ հարակից մշակումներում վերլուծված են հենքային այն ոլորտները, որոնք ուղղակիորեն պայմանավորել են Արցախի տեղանվանական համակարգի ձևափոխումն ու վերափոխումները: Հավելվածում ներկայացված են սկզբնաղբյուրային նշանակություն ունեցող փաստաթղթեր ու վավերագրեր, որոնք կարևոր նպաստ են բերում հիմնախնդրի անաչառ լուսաբանման առումով:

Առանցքային նշանակություն ունի այն իրողության ընդգծումը, որ, ի տարբերություն Հայաստանից և Վրաստանից, Ադրբեջանի տեղանունության ուսումնասիրման համար միջնադարյան սկզբնաղբյուրներ չկան, և ադրբեջանական տեղանվանագիտական «ձեռնածություններում» օգտագործվում են 19–20-րդ դարերում ստեղծված տեղանունները կամ հայկական տեղանունների աղավաղված տարբերակները:

Սույն կոլեկտիվ մենագրությունում գիտական շրջանառության մեջ դրված արխիվային փաստերից հարկ է առանձնացնել հայերեն բնագիր օրինակի հիման վրա բերված պայմանագրերը, որոնցով Գանձասարի կաթողիկոսությանը պատկանող հայկական գյուղերի հողատարածքները ժամանակավոր վարձակալության են տրվել 1817 թ. Արցախ փոխադրված եկվոր մահմեդական ցեղախմբերի առաջնորդներին՝ Գանձասարին հարկ վճարելու պայմանով:

Առանձին գիտական արժեք ունեն 16–19-րդ դարերի բնագրերով կամ պատճեններով պահպանված հայերեն վավերագրերը, որոնցում պարունակվում են Արցախի հայկական տեղանունները, որոնք նախորդում են 19-րդ դարում նոր բնակություն հաստատած քյուրքախոս ցեղապետերի աղավաղումների հիման վրա ռուսական իշխանությունների հրահանգած նկարագրությունների ժամանակ արձանագրված անվանումներին:

Կարևոր եզրահանգում է այն դրույթը, որ հայկական բնակավայրերի որոշ պարսկա-քյուրքական անվանումներ, որոնք Հայաստանում շրջանառում էին մինչև 19-րդ դարի սկիզբը, չեն արտացոլել բնակավայրերի էթնիկական կազմը, այլ Պարսկաստանի կազմում Արևելյան Հայաստանի լինելու հետևանք են, քանի որ այնտեղ կենտրոնական, ինչպես նաև տեղական վարչաքաղաքական ղեկավար կազմի լեզուներն են եղել պարսկերենը և քյուրքերենը:

Արժեքավոր են դեռ 19-րդ դարում հրապարակված այն վավերագրերը, որոնք ներկայացնում են դարի առաջին քառորդում մահմեդականների ներհոսքը Արցախ, և որոնք, սակայն, մինչև այժմ չէին դրվել գիտահետազոտական շրջանառության մեջ:

Կոլեկտիվ մենագրության հավելվածում ներառվել է նաև Արցախում 1823 թ. ռուսական իշխանությունների հապճեպորեն ձեռնարկած և հետագայում լայն շրջանառություն ստացած Նկարագրության թերությունների վերաբերյալ դրա հեղինակների այն խոստովանությունը, որ Նկարագրությունը կազմելու ժամանակ տեղեկությունները հիմնականում քաղվել են ոչ թե բնակավայրերն այցելելու և բնակչության մեջ հարցումներ կատարելու միջոցով, այլ մահմեդական բեկերի կողմից ներկայացված հաղորդումների հիման վրա (հավելված 12): Հայ մեղիքների կալվածքներին ու բնակավայրերին տիրացած քյուրքախոս բեկերի հաղորդումների հիման վրա ներկայացված տեղանունների արձանագրումը ամմիջականորեն սկզբնաղբյուր է ծառայել նաև քարտեզների կազմման համար:

Առանձնապես կարևոր են առաջին անգամ գիտական շրջանառության մեջ դրվող Արցախում 1832/1833 թթ. կատարված մարդահամարի նյութերը (հավելված 17), որոնք հստակորեն և գիտափաստագրական ճշգրտությամբ լուսաբանում են ոչ միայն Արցախի, այլև ամբողջ Ղարաբաղի մահանգի* տեղանվանական համակարգը և ժողովրդագրական պատկերը: Բուն Արցախի բնակչությունը շարունակում էր լինել հայազգի, իսկ մահմեդականները կազմում էին բացարձակ փոքրամասնություն: Բերվող վավերագրերը հաստատում են այն փաստը, որ Ղարաբաղի մահանգում մահմեդական բնակչության թվային գերակշռությունն ստեղծվել է հիմնականում 1812–1827 թվականներին տարբեր վայրերից ներգաղթած, այդ թվում նաև 1827 թ. Մեհտի Ղուլի խանի բերած, և գերազանցապես Դաշտային Ղարաբաղում տեղաբաշխված քոչվոր մահմեդական բնակչության շնորհիվ, որը, չունենալով մշտական բնակատեղի, դեռևս գտնվում էր քոչատեղիներում (кочевья):

Կոլեկտիվ մենագրության վերջում բերվում են եզրակացություններ, որոնք կարող են ուղենիշային նշանակություն ունենալ սույն խնդրի ինչպես պատմագիտական, այնպես էլ անվտանգային-քաղաքագիտական ոլորտներում կատարվելիք հետազոտությունների համար:

Ամփոփելով սույն ներածականը՝ ցանկանում եմ արդյունավետ համագործակցության համար շնորհակալություն հայտնել Հայաստանի Ազգային արխիվի տնօրեն, պատմական գիտությունների դոկտոր *Անսյունի Վիրաբյանին*, Բոլոնիայի համալսարանի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ *Գարրիելլա ՈՒլուհոջյանին*, Մաշտոցի անվան Մատենադարանի ավագ գիտաշխատողներ՝ պատմական գիտությունների թեկնածու *Զրիսյրինե Կոստիկյանին* և բանասիրական գիտությունների թեկնածու *Հասմիկ Կիրակոսյանին*, Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնի ասիստենտ *Գեղամ Բաղայանին* և ԵՊՀ Արևելագիտության ֆակուլտետի գիտաշխատող, բանասիրական գիտությունների թեկնածու *Սարգիս Ասատրյանին*:

* Ընդգրկում էր մինչև Կուր գետը ձգվող այսպես կոչված Դաշտային Ղարաբաղը, Արցախը և Սյունիքը:

ՀԻՄՆԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՄ

19-ՐԴ ԴԱՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՐԵՍՆԱՄՅԱԿՈՒՄ
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ
ԷԹՆՈԿԱԿԱՆ ՏԵՂԱՇԱՐԺԵՐՆ ՈՒ
ՏԵՂԱՆՎԱՆԱԿԱՐԳԸ ԵՎ ԴՐԱՆՑ
ՇԱՀԱՐԿՈՒՄՆԵՐԸ

*Պ. Ա. ՉՈՐԱՆՅԱՆ, պատմական գիտությունների դոկտոր,
ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի ավագ գիտնական-վերլուծաբան,
ՀՀ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող*

ԽՆԴԻՐԸ

Ադրբեջանական պետական քարոզչությունը ԼՂՀ-ի և ՀՀ-ի նկատմամբ տարածքային հավակնությունները հիմնավորելու նպատակով, ի թիվս այլոց, շահարկում է նաև այն դրույթը, թե իբր Երևանի ու Նախիջևանի խանություններում և Արցախում հայ բնակչությունը մշտապես կազմել է փոքրամասնություն և ավելացել է միայն 1828–1830 թթ. Պարսկաստանից և Օսմանյան կայսրությունից հայերի ներգաղթի հետևանքով: Մինևույն ժամանակ, Ադրբեջանի նախագահը, շահարկելով 19-րդ դարում ռուսաստանյան իշխանությունների անցկացրած մարդահամարների հիման վրա կազմված քարտեզներում Արևելյան Հայաստանում (Հայկական մարզի ու Արցախի տարածքում) թյուրքական տեղանունների առատության հանգամանքը, Հայաստանը հայտարարում է մտացածին Արևմտյան Ադրբեջանի տարածք¹: Ադրբեջանն այդ ուղղությամբ ծավալել է լայն ռազմամոլական քարոզարշավ. աշխարհի տարբեր լեզուներով տարածվում են ադրբեջանական կեղծիքները, որոնք կոչված են ստեղծելու ադրբեջանամալաստ միջազգային հասարակական կարծիք²:



¹ Տես «Ильхам Алиев выступил на сессии Парламентской Ассамблеи Совета Европы», 24.06.2014 (<http://ru.president.az/articles/12149/images#.U611A2nRrUU.google>); «Выступление президента Азербайджана И. Алиева во время летней сессии ПАСЕ», 24 июня 2014 г. (<https://www.youtube.com/watch?v=ywWAgqq5i7g>):

² Տես *В. А. Захаров*. История Кавказской Албании в исследованиях акаде-

Բացի ակնհայտ կեղծիքներից, ինչպիսիք են, օրինակ, հայերեն արձանագրություններն ու հայկական ճարտարապետական հուշարձանները օտար ընթերցողին որպես «աղվանական» ներկայացնելը, աղբբեջանական կողմը, փորձելով իր հավակնությունները տարածել ոչ միայն Արցախի, այլև Արևելյան Հայաստանի մյուս տարածքների վրա, շահարկում է նաև ռուսական իշխանությունների հանձնարարությամբ 1823 թ. Արցախում Երմոլովի ու Մոգիլևսկու և Հայկական մարզում 1829–1832 թթ. Ի. Շուպենի կատարած նկարագրությունները, որոնցում տեղանունների մի զգալի մասը ներկայացված է թյուրքական տարբերակներով:

Այսպիսով՝ 19-րդ դարի սկզբին Արևելյան Հայաստանում էթնիկական տեղաշարժերի, տեղանվանական համակարգի ու նշված նկարագրությունների՝ որպես պատմական սկզբնաղբբյուրների գիտական հետազոտությունն ու արժեքավորումը ձեռք են բերում ոչ միայն զուտ պատմագիտական, այլև քաղաքագիտական և անվտանգային-քաղաքական նշանակություն:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ

ԵՎ ԴՐԱՆՑ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՆՆԵՐԸ

Հայաստանում տեղանունների ուսումնասիրման համար առկա է հարուստ աղբբյուրագիտական հենք՝ մեծ թվով վավերագրական սկզբնաղբբյուրներ ինչպես հայերեն, այնպես էլ հարևան ժողովուրդների լեզուներով³: Տեղանունները կարևոր սկզբնաղբբյուր են յուրաքանչյուր երկրի պատմության ուսումնասիրման համար, քանի որ, որպես կանոն, կարող են պահպանվել դարերի և նույնիսկ հազարամյակների ընթացքում: Սակայն դրանք նաև կարող են կրել այլ էթնիկ հանրությունների լեզվական ազդեցությունը և անճանաչելիության աստիճանի փոխվել*:

Հազարամյակների ընթացքում լինելով իրանական ու հելլենիստական մշակութային աշխարհների հետ սերտ շփումների մեջ՝ հայերենը դեռ հնագույն շրջանում պահլավերենից ևս փոխառել է տեղանունների վերածված

мика И. А. Орбели и проблема искажения истории Армении и Арцаха в Азербайджане. М., 2012, сс. 32, 44:

³ Տես *Ս. Տ. Երևմյան*, Հայաստանը ըստ «Աշխարհացոյց»-ի: Ե., 1963:

* Երևույթը բնորոշ է բոլոր լեզուներին: Վրացերեն Ախալցխի տեղանունը, օրինակ, թուրքերենում հնչում է «Աիսկա»:

մի շարք բառեր: Ըստ այդմ, Հայաստանի և, մասնավորապես, Արցախ-ՌԻՖիքի տարածաշրջանում որոշ տեղանուններ ստուգաբանվում են իրանական լեզուներով: Այդպիսին է, օրինակ, Ջևանշիր տեղանունը⁴, որտեղ 18–19-րդ դդ. բնակություն հաստատած քյուրքախոս բնակչությունը կոչվել է ջևանշիրլու*:

Մինույն ժամանակ, Ադրբեջանում ստիպված են խոստովանել, որ իրենց համար «Դժվարությունը նաև այն է, որ, ի տարբերություն Հայաստանի և Վրաստանի տեղանունություններից, որոնք հնարավորություն ունեն տեղանունների վերաբերյալ նյութ ստանալու հին հայերեն և վրացերեն գրավոր սկզբնաղբյուրներից, Ադրբեջանի տեղանունության համար չկա նման նյութ, որը հնարավորություն տալիս է հետևելու նշված ժամանակաշրջանում բնակչության էթնիկ կազմին»⁵, և որ «Ադրբեջանում քյուրքականի հետ մեկտեղ առանձնանում են երեք տեղանվանական տարածաշրջաններ՝ քալիշական, հայկական և ավարա-լեզգիական»⁶: Ընդ որում, ադրբեջանցի հեղինակները նշում են, որ «Լեռնային Ղարաբաղում, որտեղ գերազանցապես բնակվում են հայեր, հայկական տեղանուններն ստուգաբանվում են ավելի հեշտությամբ և ունեն Հայաստանի տեղանունների հետ շատ զուգահեռներ, ինչը հնարավորություն է ընձեռում դրանց վերլուծության ժամանակ օգտվելու համեմատական մեթոդից: Լեռնային Ղարաբաղում հաճախ են հանդիպում տեղանվանական տերմիններ՝ ձոր, գոր, գուր, սար, վանք, շեն, կերտ, բերդ և այլն»⁷: Թեև նրանք այդպիսի խոստովանություններ են

⁴ Տես *Степан Бурнашев*. Историческое сведение о начале и происхождении армянских пяти меликов и каким образом подошли оне в зависимость Ибраим хана. Российский государственный архив древних актов, ф. 23, дело 13, ч. 11, л. 231–232: «Акты, собранные Кавказской археографической комиссией» («АКАК»), т. IV, Тифлис, 1870, с. 560, 723 (<http://www.runivers.ru/bookreader/book9489/#page/1/mode/1up>); «АКАК», V, Тифлис, 1873, с. 131, 581 (<http://www.runivers.ru/bookreader/book9490/#page/2/mode/1up>):

* Տեղանուններից են ծագում Մուղանլու, Շիրվանլու, Շամլու, Ռումլու, Այրումլու, Ղարաբաղլու, Խոյլու, Թավրիզլու և այլ ցեղանուններ և տոհմանուններ ընկալվող շատ անվանումներ:

⁵ Տես *Г. А. Гейбуллаев*. Топонимия Азербайджана (историко-этнографическое исследование). Баку, 1986, с. 4:

⁶ Տես *Р. М. Юзбашев*. Характеристика современной Азербайджанской топонимии. «Топонимика Востока». Исследования и материалы. М., 1969, с. 163:

⁷ Տես նույն տեղում, էջ 164:

անում, սակայն Ադրբեջանում մեծ տեղ է հատկացվում հայկական աղբյուրներից քաղած Հայաստանի, այդ թվում նաև Արցախի և ՌՖՏիքի հայկական տեղանունների կեղծ «ստուգաբանությունների» միջոցով «ադրբեջանական» ժողովրդի ձևավորման գործընթացը վաղ ժամանակներից վերագրելու գործելաոճին⁸:

Տարածաշրջանի տեղանունների նախնական շերտի և դրա կրած փոփոխությունների, տեղանունների ու էթնիկ կազմի կապի ուսումնասիրությունը հնարավորություն է ընձեռում պատմական սկզբնաղբյուրների և փաստաթղթերի հիման վրա լուսաբանելու Ռուսաստանի տիրապետության ժամանակաշրջանում տեղի ունեցած տեղանվանական փոփոխությունների պատճառները և, մինևույն ժամանակ, բացահայտելու երկրամասի պատմության ադրբեջանական կեղծարարություններն ու վերացնելու պատմաքաղաքագիտական շահարկումների հիմքը:

Հայաստանի տեղանունները ներկայացված են միջնադարյան վիճակագիր արձանագրություններում, ձեռագրերի հիշատակարաններում, պատմիչների երկերում և բազմաթիվ վավերագրերում: Առավել մեծարժեք են բնագրով պահպանված վավերագրերը կամ դրանց հետագա պատճենները: Դոփյան իշխանների 13-րդ դարի հրովարտակում թվարկված են բնակավայրեր և կարվածքներ (թվով՝ 23), որոնցից գանձված հարկը հատկացվում էր հայկական վանքերին: Բնակավայրերի մի մասի անվանումները պահպանվել են նաև 18-րդ դարի երկրորդ կեսին և արձանագրված են այլևայլ սկզբնաղբյուրներում, մասնավորապես՝ Սիմեոն Երևանցի կաթողիկոսի «Ջամբո» աշխատության մեջ:

Տեղանունների թվարկման քանակի առումով մեծարժեք են 1691 և 1763 թթ. համախոսականները, որտեղ առկա են Արցախի և հարակից տարածքների զանազան հայկական բնակավայրերի հոգևոր ու աշխարհիկ ներկայացուցիչների կնիքներով հաստատված հավաստագրերը:

Կարևոր սկզբնաղբյուր է Երեմիա Չելեպի Էյոմուրճյանի 1691 թ. կազմած քարտեզը, որտեղ նշված են Հայաստանի, այդ թվում նաև Արցախ – ՌՖՏիքի տեղանունները այնպես, ինչպես դրանք գործածում էր բնիկ ժողովուրդը:

⁸ Տես Գ. Ա. Гейбуллаев. Топонимия Азербайджана ...; *նույնի՝* К этногенезу азербайджанцев (историко-этнографическое исследование). Баку, 1991:

ՀԱՅՎԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ՝ ՈՐՊԵՍ ՀԱՅՈՑ
ԱՇԽԱՐՀԻԿ ՈՒ ՀՈԳԵՎՈՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱՆԸՆԴ-ՀԱՏՈՒԹՅԱՆ ԱՐԳԱՍԻՔ

Հայկական և օտար սկզբնաղբյուրներում արձանագրված են Արևելյան Հայաստանում՝ այդ թվում Արցախ–Ուտիք նահանգներում, ինչպես նաև ամբողջ տարածաշրջանում քաղաքական իրադարձությունները: Հայերեն սկզբնաղբյուրներն ու վավերագրերը վաղագույն ժամանակներից ընդհուպ մինչև 19-րդ դար արտացոլում են նաև հայկական հոգևոր ու աշխարհիկ պետական կառույցների ռազմաքաղաքական, արտաքին ու ներքին տնտեսական ու հոգևոր-մշակութային հարաբերությունների բոլոր հիմնական ոլորտները: Հայկական տեղանունների օգտագործման հարատևությունը Արևելյան Հայաստանում պայմանավորված է հայկական իշխանապետությունների հարատևությամբ, և, մինևույն ժամանակ, հազարամյա տեղանուններն իրենց հերթին ապացույց են հայկական տեղական իշխանապետությունների մշտական առկայության: Մասնավորապես՝ Արցախում իշխանապետությունների հարատևությունն ուղեկցվել է արտաքին (այդ թվում՝ հաջորդաբար արաբական, սելջուկյան, մոնղոլական ու պարսկա-թյուրքական) ուժերի դեմ տարբեր հաջողությամբ մղված դարավոր պայքարով, ինչի վկայություններ պահպանվել են ինչպես հայկական, այնպես էլ արաբական, պարսկական և թյուրքական աղբյուրներում: Հայտնի է, որ 850-ական թթ. Բուղայի գլխավորությամբ արաբական արշավանքի անհաջողությունն զգալի չափով պայմանավորված էր նաև Արցախում նրա կրած ձախողումներով, իսկ մոնղոլական արշավանքների ժամանակ Արցախ–Ուտիքը (Հայկական Աղուանք) Աբխազիայի հետ համարվում էր Արևելքի այն միակ քրիստոնյա երկիրը, որը կարողացել էր դիմակայել մոնղոլներին և դարձել քրիստոնեության պատվար⁹:

⁹ «Այնուհետև առին և գալլ քաղաքս և գուանս, և կալան գմեծն Ասիա ողջոյն, բաց ի թագաւորութենէն Ափխազաց, որ ի Վիրս և բաց ի գաւառէ **անտի թագաւորութեան հայոց, որ ռամկօրէն կոչի Հալօյէն**: Այս երկու նահանգք զդեմ կալան սարակինոսաց և ոչ կամեցան բնաւ հպատակիլ նոցա. և այնպէս գտան ապաստան և պատսպարան ամենայն քրիստոնէից, զորս հալածէին սարակինոսք՝ ստիպելով գնոսա հնազանդիլ օրինաց Մահմէտի» (տես «Հեթում պատմիչ թաթարաց», յեղեալ ի լատին օրինակէ ի հայ բարբառ ի հ. Սկրտիչ Արգերեան: Վենետիկ, 1842, էջ 24): «Predicti quidem Sarraceni

Արաբ պատմիչի վկայությամբ, երբ Ջալալ աղ-Դինի զորքերը 1225 թ. ներխուժեցին Հարավային Կովկաս, Արցախի իշխան, Գանձասարի նշանավոր վանքի հիմնադիր Ջալալ Դուլայ Հասանը մեկնագամյա գումարի վճարումով և մահմեդական գերիներին ազատելու միջոցով կանխել է իր երկրի նկատմամբ Շարաֆ ալ Մուլքի սպառնալիքները¹⁰: Հասան Ջալալը (Խոխանաբերդում և Հավքախաղացում), իսկ հետագայում Հասան Ջալալյանները ունեցել են իրենց դրամահատարանները¹¹: Գրամահատարաններ են ունեցել նաև հայկական մյուս իշխանապետությունները¹²:

Լենկ Թեմուրի արշավանքների ժամանակ երկարատև գերության մեջ հայտնված գերմանացի Շիլլերերգերը իր ուղեգրության մեջ խոսում է Ղարաբաղը¹³ հայկական լիներու և հայկական գյուղերի մասին. «Ես երկար

civitates ceperunt et villas, et totam terram Asye Majoris eorum dominio subdiderunt, preter regnum Abcas, quod est in Georgia et preter quamdam aliam **regionem regni Armenie que Aloen vulgariter appellatur**. Iste due regiones tenuerunt se contra Sarracenos prefatos, nec unquam voluerunt eis modo aliquo obedire, et sic fuerunt refugium et tutamen omnibus Cristianis quos Sarraceni persequebantur, ubique compellentes illos obedire Mahometi falsissimis documentis» (տես «Recueil des Historiens des Croisades», Tome Second. Documents Latins et Francais relatifs à l'Arménie, Paris, MDCCCCVI. P. 276): «Les avant dits Sarazins pristrent seigneurie de tote la terre d'Aise la Major, for que le roiaume de Abcas, qui est en Jorgie, e une contrée du **regne d'Ermenie qui est apellée Aloen**: Cestes ii contrées se tindrent contre les Sarazins; ne onques n'en orent la seigneurie; e là s'enfuirent touz les Crestiens, por doutance des enemis» (տես նույն տեղում, էջ 139):

¹⁰ «(Շարաֆ ալ Մուլքը) կանգ առավ Խաչեն ամրոցի մոտ, որտեղ գտնվում էր Ջալալ աղ Դինը...և սկսեց սպառնալ, մինչև համաձայնեցին հաշտության շուրջ՝ պայմանով, որ վճարեն տաս հազար դինար բերրերի և ազատեն նախկին և վերջին ժամանակների յոթ հարյուր մուսուլման գերիներին: Նրանց մեջ կային և այնպիսիք, որոնք գերվել էին դեռ մանուկ հասակում և գերությունից էլան արդեն ծեր տարիքում» (տես *Шихаб ад-Дин Мухаммад ан-Насави*. Жизнеописание султана Джалал ад-Дина Манкбурны. Перевод с арабского, предисловие, комментарии, примечания и указатели З. М. Бунятова. Баку, 1973, сс. 212–213):

¹¹ Տես *A. Akopyan*. About earliest coins of Xaçen (Qarabagh). «Journal of Oriental Numismatic Society» (հանձնված է տպագրության):

¹² Տես *A. Акопян*. Ильханы и ишханы. Монеты армянских княжеств периода заката Хулагуидского государства. «Нумизматика и эпиграфика», 2015 (հանձնված է տպագրության):

¹³ Մայրաքաղաք Բաղդադի գրավումից և Սյունիքի, կամ Բաղաց (Բաղքի)

Ժամանակ Հայաստանում էի: Լենկ Թեմուրի մահից հետո [1405 թ.] ես ընկա նրա որդու մոտ, որ տիրում էր Հայոց երկու թագավորություններին: Շահ-Ռոխ անունով այդ որդին սովորություն ուներ ձմեռելու Ղարաբաղ կոչվող ընդարձակ հարթավայրում, որ ուներ լավ արտավայրեր: ...Այդ հարթավայրը թեև գտնվում է Հայաստանում, սակայն պատկանում է անհավատներին, որոնց հայկական գյուղերն ստիպված են հարկ վճարել: Հայերը միշտ իմ նկատմամբ լավ էին վերաբերվում, ... նրանք ինձ սովորեցրին իրենց լեզուն»¹⁴:

16–18-րդ դարերում Արցախի իշխանական տները միասնաբար ներկայացնում և նրանց անունից հաճախ հանդես էր գալիս Գանձասարի կաթողիկոսը: Ըստ վրաց պատմիչ Փարսադան Գորգիջանիձեի՝ Գանձակ և Արցախ Թեյմուրազ Առաջինի կատարած արշավանքի ժամանակ նրա մոտ է ժամանել Գանձասարի կաթողիկոսը՝ առաջարկելով հայկական գյուղերը կողոպտելու փոխարեն համատեղ արշավել Պարսկաստան և վերականգնել քրիստոնեական անկախ թագավորությունը՝ խոստանալով տրամադրել 40000-ոց հայկական բանակ¹⁵:

17–18-րդ դարերում Հայաստանի ազատագրության վերաբերյալ դիվանագիտական գրագրություն էին վարում նաև Գանձասարի Պետրոս Խանձքեցի, Եսայի Հասան Ջալալյան և Հովհաննես Հասան-Ջալալյան կաթողիկոսները:

Ռուս զեներալ Պ. Պ. Շաֆիրովը 1733 թ. ռուսական արքունիքին առաջարկում էր Սղնախի հայերի միջոցով գրավել Շամախը, որպեսզի այնուհետև վերցնեն Փոքր Հայաստանը, որը բնակեցված է հայազգի քաջ քրիստոնյա բնակչությամբ¹⁶:

թագավորության, անկումից (1170 թ.) հետո Հայաստանի արևելից նահանգներում աստիճանաբար գործածության մեջ է մտել Կարաբաղ/Ղարաբաղ անվանումը՝ ստանալով նոր իմաստ: ՌԷՀագրավ է, որ Հասան Ջալալը ընկալվում և ներկայացվում էր որպես Բաղաջ թագավորի թոռ (տես «Դիվան հայ վիմագրության», պր. V, Արցախ: Կազմեց Ս. Բարխուդարյան: Ե., 1982, էջ 29):

¹⁴ Տես Պ. Мурадян. История – память поколений. Е., 1990, с. 126:

¹⁵ Տես Պ. Горгиджанидзе. История Грузии. Пер. Р. К. Кикнадзе и В. С. Пугридзе. Исследование и указатели Р. К. Кикнадзе. Тбилиси, 1990, с. 85:

¹⁶ «...через армян сыгнацких сей город (Шемаху) не упуская времени, взяты, то б мочно всею Малою Армениею, или ныне называемыми армянскими Сыгнаками завладеть, которые земли все армянскими храбрыми христианами населены,

1734–1735 թթ. Թահմասապ Գուլի խանը (հետագայում՝ Նադիր շահ), Արցախի հինգ մելիքությունները (Խամաս) վարչական առումով առանձնացնելով Գանձակի բեկլարբեկությունից, դրանք վերածեց ինքնուրույն և միայն շահի գերակայությանը ենթակա իշխանության՝ Մելիք Եզանի գլխավորությամբ¹⁷:

1769 թ. Հերակլ Երկրորդը, նկարագրելով Արցախը, գրում էր, որ Խամասն բնակեցված է բացառապես հայ բնակչությամբ և այնտեղ է գտնվում Հայոց Պատրիարքը (իմա՝ Գանձասարի կաթողիկոսը)¹⁸:

16–18-րդ դդ. Արցախի մելիքները ներկայանում էին որպես Բագրատունյաց և Արշակունյաց թագավորական տոհմերի ներկայացուցիչներ¹⁹:

Գանձակի հայոց եկեղեցուն գտնվող Բարսունի մելիք Առուստամի տապանաքարին ևս նշվում է.

«Անմոռաց յայս տապան քաջ անուանի
Հանգչի մարմին Մելիք - Առուստամի,
Յազգէն Բագրատունի Հայկազանց տոհմի
Տիրող Բարսուն Գանձակ նահանգի.
Ծնեալ 1722, վախճանեալ 1794 ամի»²⁰:

и оные сами собою несколько лет как от турок, так и от персиян оборонялись...» (տես «Армяно-русские отношения» (Сборник документов), т. III. Под ред. В. Восканяна. Е., 1978, с. 35):

¹⁷ Տես Հ. Փափագյան, Մելիք Եզանի ընդունարանի վիմագիր արձանագրությունը: «Լրարբեր հասարակական գիտությունների», 1985, հմ. 5, էջ 75–78:

¹⁸ «Хамс составляет владение и во оных сем воеводских правлений, народ весь армянского закона, в том владении находится армянской патриарх; Армяне имеют большую крепость, места гористые, лесные, а притом поля плодovitые; жаванширского народу выступить на воину две тысячи пять сот человек, а армян четыре тысячи пять сот...» (տես «Грамоты и другие исторические документы XVIII столетия, относящиеся к Грузии», т. I (с 1768 по 1774 год). Под ред. А. А. Цагарели. СПб., 1891, сс. 435–436):

¹⁹ 1532 թ. հիշատակարանում արձանագրված է. «...և զիշխանութիւն մերոյ ազգիս, որ դեռևս կան կամակցութեամբն աստուծոյ մեծաւ իշխանութեամբ յանառ և հուպ երկրին Արցախու և են ազգաւ Բագրատունիք...» (տես Բ. Ուլուքաբաջան, Խաչենի իշխանությունը X–XVI դարերում: Ե., 1975, էջ 350–351):

²⁰ Տես Մակար Կպու. Բարխուդարեանց, Աղուանից երկիր և դրացիք: Արցախ: Ե., 1999, էջ 324: Մելիքները ներկայանում էին որպես Կյուրիկյան թագավորների ժառանգներ:

Ադամ և Բեգլար մելիքները 1781 թ. սեպտեմբերի 2-ին Եկատերինա Երկրորդին ուղղած նամակում նշում էին. «Մենք՝ Հայոց ազգի Արշակունյաց տանից և Աղվանքի արքունական գահից մնացած ազնիվ զորականների ժառանգ մելիքներս և մեր ողջ երկիրը իշխաններով հանդերձ...»²¹:

Վարանդայի մելիք Ջիմշիդը 1799 թ. սեպտեմբերի 22-ի կայսր Պավել Առաջինին ուղղած նամակում պահանջում է, որ Աստրախանում գտնվող իր ազգականներն անվանվեն Արշակունի իշխաններ, այլ ոչ ռուսականացված Իվանովներ և նրանց թույլատրվի կրել իրենց տոհմական զինանշանը: Մելիք Ջիմշիդը ստորագրում էր. «Малой Армении Шушинской и протчих провинций владелец мелик Чемшит Шахназаров, князь Аршакунянский» («Փոքր Հայքի Շուշիի և այլ գավառների տիրակալ մելիք Ջիմշիդ Շահնագարի, Արշակունի իշխան»)»²².

Ամբողջ միջնադարի ընթացքում Արցախը, դիմակայելով օտար ուժերին, կարողացել է պաշտպանել իր պետականության հատկանիշները և պահպանել սոցիալ-տնտեսական ավատատիրական համակարգը:

Թեև պարսից իշխանությունների կողմից ընկալելի թյուրքական կամ աղավաղված հայկական տեղանունների օգտագործումը նկատվում էր նաև 18-րդ դարում, սակայն 19-րդ դարի երկրորդ կեսին թյուրքական տեղանունների զանգվածային պաշտոնականացումը հայ բնակչության համար դարձավ խնդրահարույց, և անհրաժեշտ եղավ օտարալեզու նորաստեղծ տեղանունների նույնականացման համար կազմել հատուկ ցուցակ, իսկ վավերագրերում հայկական տեղանուններից հետո նշել նաև դրանց պաշտոնական անվանումը:

Տարածաշրջանում սելջուկյան, մոնղոլական ու թուրքմենական ցեղերի առաջնորդները իրենց գերակայության պայմաններում ստիպված են եղել համակերպվել Արցախում հայ աշխարհիկ ու հոգևոր իշխանությունների գոյության փաստի հետ և ճանաչել նրանց իրավասությունները²³: Այդ են վկայում ինչպես պահպանված բազմաթիվ վիմագիր, վավերագրական ու պատմողական հայկական սկզբնաղբյուրները, այնպես էլ արաբալեզու

²¹ «Մեք՝ ի ազգաց հայոց ի տանիցն Արշակունեաց եւ Աղանից ի արքունական գահոյից մնացեալ ազնիւ զինատորացէն ժառանգ մելիքներս եւ մեր բոլոր երկիրս իշխանօվքն հանդերձ» (տես նույն տեղում, էջ 181):

²² Տես նույն տեղում:

²³ Տես Բ. Ուլուբաբջյան, Նշ. աշխ.:

պատմողական երկերն ու հայ իշխանավորներին Ալ-կոյունլու և Սեֆյան իշխանավորների շնորհած պարսկալեզու հրովարտակները: Վավերագրերում արձանագրված հայկական տեղանունների կենսունակությունը և մինչև մեր օրերը նրանց պահպանվածությունը իրական ապացույց են դարերի խորքից մինչև 19-րդ դարի սկիզբ հայկական իշխանապետությունների ու հոգևոր կառույցների անընդմեջ գոյատևման:

16-րդ դարում Սեֆյան պետության կազմում Հարավային Կովկասի արևելյան հատվածի ներառումը թեև որոշակի կնիք է թողել տեղանվանական համակարգի վրա, այն էլ միայն առանձին տեղանունների միջոցով, սակայն նորաստեղծ անվանումները կիրառվել են հիմնականում պաշտոնական գրագրության մակարդակում և չեն կրել համատարած բնույթ ու չեն փոխարինել ու կասեցրել հայկական տեղանունների գործածությունը:

1763 թ. կազմված հայ հոգևոր ու աշխարհիկ իշխանությունների ներկայացուցիչների կողմից ստորագրված համախոսականում, որտեղ նրանք միասնաբար իրենց վճիռն են հավաստում կաթողիկոսական թեկնածուների նկատմամբ ունենալիք դիրքորոշման վերաբերյալ, արձանագրված են բազմաթիվ հայկական տեղանուններ (Յոր, Ավետարանոց, Ննգի, Դռնավարգ, Մուշկապատ, Տող, Խնձրստան, Ախբերքան, Հազագ, Ջրկուս, Ամարաս, Գանձասար, Խաչեն, Խանձք, Առաջածոր, Քոլատակ, Կիչան, Հացի և այլն), որոնք 19-րդ դարի քարտեզներում նշված են թյուրքերեն թարգմանություններով: Գանձասարի կաթողիկոսությունը օտարի լծից Հայաստանի ազատագրական պայքարի ոգեկոչողն ու համակարգողն էր:

Պահպանելով իրենց ժառանգական տիրույթները՝ հայ մելիքները շարունակում էին ներկայանալ որպես Արցախի հինգ գավառների տիրակալներ, ինչն իր արտացոլումն էր գտնում վարչական ու տեղանվանական համակարգում՝ ապահովելով տեղանունների հարատև գործածությունը:

Արցախի պետական կառույցների հարատևության ու անընդհատության վկայությունն է այն փաստը, որ դեռ 5–10-րդ դդ. արձանագրված հայկական Ամարաս, Գիս/Գիշ, Պարտավ, Խաչեն, Բերդածոր և այլ տեղանուններ անխաթար պահպանվել են մինչև մեր օրերը, իսկ 1204 թ. հիշատակված հայկական Մատաղիս գյուղը հիշատակվում է նաև 1817 թ. պայմանագրում²⁴:

²⁴ Տես «Գիվան հայ վիմագրության», պր. V, Արցախ, էջ 121–122:

ՄԱՀՄԵՂԱԿԱՆՆԵՐԻ ՆԵՐՂՈՍԹԸ ՀԱՅԱՍՏԱՆ ԵՎ ԴՐԱ
ԱՐՏԱՑՈՒՄԸ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՈՒՄ (19-ԲԳ Գ.)

Թեև Հայաստանը դեռ 16-րդ դարի կեսերից նվաճվել և բաժանվել էր Օսմանյան և Մեֆյան տերությունների միջև և կառավարվում էր երկու օտար իշխանությունների նշանակած պաշտոնյաների (փաշաների ու խաների) գլխավորությամբ օտար վարչական համակարգի (էյալեթ, բեկլար-բեկություն ու խանություն) միջոցով, սակայն հիմնական բնակչությունը մնում էր հայկական: Պահպանված հարկամատյաններում միանշանակ կերպով արձանագրված է Հայաստանում բնիկ հայ բնակչության բացարձակ գերակշռությունը: Հայկական լեռնաշխարհում քոչվոր ցեղախմբերի տեղաշարժերը միայն մասամբ են ազդեցություն գործել Հայաստանի էթնիկական պատկերի վրա, ինչը հետևանք էր փաշայանիստ քաղաքներում, խանությունների կենտրոններում մահմեդական թյուրքախոս, իսկ որոշ լեռնային մասերում նաև քրդախոս բնակչության առաջացման: Մշտական մատակյաց բնակչությունը եղել է ազգությամբ հայ՝ ընդհուպ մինչև Հայոց ցեղասպանությունը: Սակայն օտար վարչակազմը հայկական տեղանունները գործածում էր կա՛ն թարգմանաբար, կա՛ն վերաիմաստավորելով ու աղավաղելով, ընդամին հայ բնակչությունը հիմնականում շարունակում էր օգտագործել բնակավայրի հայկական անվանաձևը: Փաստորեն, հայկական տեղանվանական համակարգին զուգահեռաբար առաջացել են նույն բնակավայրերի աղավաղված անվանաձևեր, որոնք էլ պաշտոնապես գրանցվել են մարդահամարների²⁵ ու նաև տեղանքի քարտեզագրումների ժամանակ: Ընդամին որպես բնակավայրեր են ներկայացվել նաև արոտավայրերում ստեղծված ամառանոցներն ու ժամանակավոր կացարանները:

17–18-րդ դդ. Արցախում և Երևանի խանությունում հայ բնակչության կողմից օգտագործվող տեղանունների բուն հայկական անվանումների համակարգից զատ աստիճանաբար առաջանում էր երկրորդ շերտը՝ հայկական տեղանուններից ածանցված անվանումներ, որոնք թարգմանաբար կամ հնչյունափոխված ձևով մահմեդական իշխանությունները դյուրացնում էին թյուրքերեն արտասանության համար:

²⁵ Տես *И. Шонен*. Исторический памятник состояния Армянской Области в эпоху ея присоединения к Российской империи. СПб., 1852; «Описание Карабагской провинции, составленное в 1823 году по распоряжению главноуправляющего в Грузии Ермолова действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-м». Тифлис, 1866:

19-րդ դարի առաջին քառորդում ռուս-պարսկական հակամարտության կիզակետում հայտնված Հարավային Կովկասի տարածաշրջանում, մասնավորապես՝ Արցախում ու Երևանի խանությունում, ռուսական զինվորական անձնակազմի համար առաջնահերթ նշանակություն էին ստանում բնակչության հաշվառումն ու տեղանունների համակարգի արձանագրումը: Ռուսական պաշտոնական գրագրություններում լայնորեն կիրառված տեղանունները առանձին փոփոխություններով շրջանառեցին նաև հետագայում:

Մահմեդական վերնախավի տրամադրած տեղեկությունների հիման վրա ռուսական իշխանությունների անցկացրած առաջին մարդահամարների ու նկարագրությունների միջոցով շրջանառության մեջ զանգվածաբար նոր տեղանունների դրվելու հանգամանքով է թելադրված եղել հայ իրականության մեջ զուգադիր ցուցակներ կազմելու անհրաժեշտությունը, որտեղ ներկայացված էին բնակավայրերի թե՛ հայկական, թե՛ 19-րդ դարում հորինված անվանումները: Նշված ցանկից²⁶ ևս ակնհայտ է դառնում, որ հայկական բնակավայրերի անվանումները թյուրքերենում ներկայացված են կամ թարգմանաբար, կամ թյուրքական ընկալումներին համապատասխան (Ավետարանոց–Չանախչի և այլն):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՆ ՈՒ 1823 Թ. ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ-ԱՇԽԱՐՀԱԳԻՐԸ

Աղա Մահմեդ խանի 1795 թվականի արշավանքը մեծ հարված էր հատկապես Արցախի հայոց ներուժի համար: Հայագգի մեղիքական տների նկատմամբ Աղա Մահմեդ խանի զանգվածային հաշվեհարդարից²⁷ փրկվ-

²⁶ Տես Հավելված հմ. 20:

²⁷ «...[1797 թ.] գազանն արեանարբու [իմա՝ Աղա Մուհամմադ շահը] հրամայե շինել կրագանգ ուղղագիծ գորմն միակողմանի, ի նմա զծակս յխուներկու մարոյ Չիաստանի, այնքան նեղագոյն, յորում հագի միայն անցցե գլուխ մի մարդոյ. անցուցեալ ի նմա զգլուխս յխուներկու հայագգի մեղիքաց. գորս կալեալ ի գաւառաց՝ Արցախայ, եղեալ էր կապանօք ի բանարի, յեք փախստեան Իբրահիմ խանի նոցա (ընդգծումը մերն է.՝ Պ. Չ.), որոց համախոհությամբ համարէր փախուստն Իբրահիմ խանի, ի պարանոց կապեալ եռապատկեալ ճուպան ամրացուցեալ հանգուցիք յամենի ջորիս, տայ հարկանել զջորիս, մինչև զատեալ լինին գլուխք նոցա...» (տես *Ղուկաս կաթողիկոս*, Գիւան հայոց պատմութեան, գիրք Գ: Թիֆլիս, 1899, էջ 741–742 (<http://serials.flib.sci.am/openreader/divanhayocpatm4/book/index.html#page/411/mode/1up>)):

ված հայ մելիքները Հերակլ թագավորի հրավերով տեղափոխվեցին Վրաստան²⁸: Արցախի բնակչության մեծ մասը սովի ու համաճարակների հետևանքով ցրվեց հարակից խանությունների (Շաքի, Շիրվան) և Վրաստանի տարածքում²⁹: Մելիք Շահնազարի մահից հետո Ղարաբաղի Իբրահիմ խանը նախաձեռնեց իշխանությունը լիովին բռնազավթելու գործողություններ և 1793 թ. թողարկեց պղնձե, իսկ 1794 թ.՝ արծաթե դրամներ՝ թողարկման վայրը նշելով հորինված Փանահաբաղ «տեղանունով»^{*}: Այդ փաստը վկայում է խանի հավակնությունների³⁰ և հայ մելիքների, մասնավորապես՝ Մելիք Շահնազարի իրավահաջորդ Մելիք Ջիմշիդի հետ նրա հարաբերությունների փոփոխման մասին: Աղա Մահմեդ խանի սպանությունից հետո Արցախ վերադարձած Իբրահիմ խանը ձեռնամուխ եղավ հայ մելիքների ժառանգական սեփականությունը յուրացնելու գործին՝ այդ նպատակով հավաքելով կեղծ վկաների ստորագրություններ, որոնք «հաստատում են» իր կալվածատիրական իրավունքները³¹:

1806 թ. Իբրահիմ խանի սպանությունից հետո Մեհտի Ղուլի խանը,

²⁸ Տես Մելիք Արովի՝ Սինաս Լազարյանին ուղղված նամակը՝ «Кавказская старина», ежемесячный журнал. Под редакцией А. Д. Ерицова. Тифлис, 1872, с. 43: Միայն Վարանդախի ու Գյուլիստանի մելիքություններում մինչ այդ կար 11 հազար ծովա հայ բնակչություն:

²⁹ «Люднощем онаго владения в настоящем положении дел весьма различна с прежнему, ибо до нашествия Ага Мамед хана, яко эпохи подения Карабагскаго владения одних армян находилось до 40 тысяч домов. Я же имея обязанность в привлечении протчих ханов сего новаго верноподданнаго В. И. В. деятельным образом покровительствовать, намерен у Мустафы хана Ширванскаго сей осени взять всех Карабагских жителей от прихода Ага Мамед хана туда бежавших, коих число простирается до 8000 домов» (տես «Всеподданнейший рапорт князя Цицианова Его Императорскому Величеству от 22 мая 1805 года за № 19». «АКАК», т. II. Тифлис, 1868, с. 703 (<http://www.runivers.ru/bookreader/book9487/#page/1/mode/1up>)).

^{*} Խանի կողմից դրամների շարունակվեց նաև ռուսական տիրապետության փայնամներում մինչև 1822 թ.: (Տես *А. Аюбян*. Монеты Нахичеванского и Карабахского ханств (տեսիլիս)):

³⁰ *П. Чобаян*. Проблема легитимности Карабахских ханов в контексте политической истории Шуши. «Աշխատանքային տետրեր», 2013, հմ. 1–2:

³¹ Տես *Р. М. Шукурова*. Новый документ о Хачыньских владениях Карабахского хана Ибрагим Халил хана. «Известия Академии наук Азербайджанской ССР». Серия истории, философии и права. Баку, 1988, N 3: Տես նաև Հավելված հմ. 10:

ռուսական իշխանությունների կողմից նշանակվելով Ղարաբաղի խանի պաշտոնում և ժառանգելով հոր իրավասությունները, օգտվելով ռուս-պարսկական առաջին պատերազմի հետևանքով ստեղծված իրադրությունից, շարունակեց Արցախի հայ մելիքներին զրկել հողատիրության իրավունքից, յուրացնել նրանց կալվածքները և Արցախում ու նրան սահմանակից տարածքներում վերաբնակեցնել այլևայլ մահմեդական ցեղերի: Այսպես. եթե 1805 թ. Ղարաբաղի խանությունում եղել էր 10000 ծուխ, իսկ մինչև պատերազմի ավարտը՝ 1812 թ., մնացել էր 3080 ծուխ, ապա 1817 թ. մահմեդականների ներգաղթի շնորհիվ բնակչության թվաքանակն աճել էր՝ հասնելով 7872 ծխի: 1817 թ. Արցախի տարածք ներթափանցած մեծաքանակ մահմեդական քուլանիներ վարձակալության են վերցնում Մատաղիսում Գանձասարի վանքին պատկանող հողատարածքները և փորձում բնակություն հաստատել այնտեղ³²: Ռուսական իշխանությունները հանդուրժողաբար վերաբերվեցին այդ վերաբնակեցումներին՝ դրանք դիտելով որպես տարածաշրջանում Ռուսաստանի վարկանիշի բարձրացման ցուցանիշ և հարկատու բնակչության թվաքանակի ավելացման միջոց³³: Մահմեդականների ներհոսքը Արցախի տարածք³⁴ հանգեցրեց ոչ միայն հայկական տեղանունների աղավաղման, այլև նոր տեղանունների առաջացման, ինչը հատկապես ցայտուն կերպով արտացոլվեց 1823 թ. ռուսական իշխանությունների կատարած «Նկարագրության» մեջ:

Հայկական վանքերի ու մելիքների հողային կալվածքների յուրացումները թաքցնելու նպատակով Մեհտի Ղուլի խանն ընդհուպ մինչև 1822 թ. իր փախուստը կասեցնում էր Արցախում Հայոց եկեղեցու և ռուսական իշխանությունների նախաձեռնած գույքագրման ու հաշվառումների փորձերը³⁵:

Մեհտի Ղուլի խանի փախուստից հետո ռուսական իշխանությունների կողմից 1823 թ. հապճեպ կատարված «Նկարագրությունը» Արցախի բնա-

³² Պայմանագրերի բնագրերը տես Հավելված հմ. 11 (1817 թ.), 19 (1833 թ.):

³³ Զոլանիների հետ 1833 թ. ստորագրված պայմանագիրը հաստատվեց իշխանությունների կողմից արքունիքին և վանքին հավասար քանակով հարկ (բահրա) վճարելու պայմանով (տես Մ. Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 240, վավ. 92):

³⁴ Տես «Описание Карабагской провинции, ...», сс. 84–89: Արձանագրված են 2 և ավելի տարիներ առաջ վերաբնակված մահմեդականների բնակավայրերը:

³⁵ Տես «Присоединение Восточной Армении к России», т. 1. Е., 1972, сс. 105–106:

կավայրերի առաջին ընդարձակ ցուցակագրումն էր³⁶, որը հիմք դարձավ հետագա քարտեզագրական աշխատանքների համար: «Նկարագրությունն» արտացոլեց այն իրավիճակը, որն Արցախում ստեղծվել էր մինչև 1823 թ.՝ 1804–1822 թթ.: «Նկարագրության» ուսումնասիրությունն ի հայտ է բերում մի շարք էական հանգամանքներ.

1. «Նկարագրությունը» կազմվել է ոչ թե բնակավայրեր այցելելու և տեղում հաշվառում կատարելու միջոցով, այլ խանական իշխանավորների, բեկերի ու գյուղապետերի տված տեղեկությունների հիման վրա: Այդ մասին ասվում է «Նկարագրության» մեջ՝ Շուշիի քաղաքային դատարանին ուղղված մուտքի խոսքում. «մեր ցուցակներում մասֆները (ոչ հարկատուները.– Պ. Չ.) նշված են *միայն մահալային բեկերի ու գյուղերի կառավարիչ քենդիուդների վկայություններով, որոնցից ոչ բոլորը կարող են հիմնավոր լինել* (ընդգծումը մերն է.– Պ. Չ.)»³⁷:

2. Նկարագրության մեջ հայկական բնակավայրերը մեծ մասամբ ներկայացված են որպես մահմեդական բեկերին պատկանող կավածքներ, որոնք մեկ տասնամյակ առաջ դեռ պատկանում էին հայ մելիքներին ու վանական հաստատություններին³⁸:

3. Նշված բնակավայրերը արձանագրված են մահմեդական բեկերի և նրանց պատկանող ժամանակավոր կացարանների առաջնորդների անուններով կամ բնակության վայրի հայկական անվան խիստ աղավաղումով, ինչն ստեղծում է թյուրքական բնակավայրերի քանակական գերակշռության կեղծ տպավորություն:

4. Հայկական տեղանունները ներկայացված են թյուրքերեն թարգմանությամբ, ինչը քարտեզներում նվազեցնում էր հայկական տեղանունների

³⁶ Նախորդ հաշվառումների մասին (1805, 1812 թթ.) վկայությունները տես «ԱԿԱԿ», տ. VI, Վ. I. Тифлис, 1874, с. 836 (<http://www.runivers.ru/bookreader/book9491/#page/2/mode/1up>): 1823 թ. «Նկարագրությունը» կատարվել է Ռուսական տիրապետության պայմաններում 1806 թ. Ղարաբաղի խան նշանակված Մեհտի Ղուլի խանի՝ Պարսկաստանի տարածք փախուստից (1822 թ. նոյեմբեր) հետո և ավարտվել է մինչև 1823 թ. ապրիլ ամիսը, այսինքն՝ կատարվել է հիմնականում ձմռան ամիսներին՝ շատ կարճ ժամանակում, ինչն ունեցել է սկզբունքային նշանակությամբ հետևանքներ:

³⁷ Ств «Описание Карабагской провинции, ...», с. 3; նաև՝ Հավելված հմ. 12:

³⁸ 17–18-րդ դարերում Հայաստանի ազատագրական պայքարի կենտրոններից մեկը՝ նշանավոր Անգեղակոթ գյուղը, 12 ծուխ մահմեդականներով բնակեցված լինելու հետևանքով ներկայացված է հետևյալ բացատրությամբ՝ Татарская деревня– «Сия деревня назад тому 2 года выведена из Эривани Аджи – Агалар-беком» (տես «Описание Карабагской провинции, ...», с. 88).

քիվը: Այսպես, օրինակ, դեռ 7-րդ դարի հայկական «Աշխարհացոյց»-ում հիշատակվող հայկական Բերդաձորը թարգմանաբար ներկայացված է Կալադարասի³⁹:

Ինչպես նշվում է «Նկարագրության» առաջաբանում, կազմողները հնարավորություն չեն ունեցել այցելելու շատ բնակավայրեր, և «Նկարագրությունը» կազմվել է ոչ թե վարչատարածքային բաժանման, այլ Արցախում հողային կալվածքներ ստացած մահմեդական բեկերի ունեցվածքի հաշվառման սկզբունքով: Այդ բնակավայրերի թվաքանակն ու անվանումները արձանագրվել են այն բեկերի հաղորդած տվյալների հիման վրա, որոնց միջև Մեհտի Ղուլի խանը մինչ այդ վերաբաշխել էր Արցախի մելիքների հողային կալվածքները:

Այսպիսով՝ Արևելյան Հայաստանի (այդ թվում՝ Արցախի) տեղանունների համակարգն առաջին անգամ ամբողջական կերպով ներկայացվել է Ռուսական իշխանությունների կազմած «Նկարագրության» հիման վրա, որը նաև սկզբնաղբյուր է դարձել հետագայում եվրոպացի հետազոտողների քարտեզագրական աշխատանքների համար:

1832–1833 ԹԹ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԸ ԵՎ ԴՐԱ
ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

1827 թ., երբ ռուսական զորքը Երևանի բերդը գրավելու վերջին պատրաստությունն էր տեսնում, և արդեն վճռված էր պատերազմի ելքը, Մեհտի Ղուլի խանը դիմում է ռուսական իշխանություններին՝ Արցախ վերադառնալու թույլտվություն ստանալու համար: Ռուսական իշխանությունների համաձայնությունն ստանալուց հետո նա վերադառնում է Շուշի՝ իր հետ բերելով մահմեդականների մոտ 3000 ընտանիք: Նրանք՝ որպես նորաբնակներ, 6 տարով ազատվում են արքունական հարկերից և Ղարաբաղի տարածքում ստեղծում են իրենց բնակավայրերը⁴⁰:

Ի տարբերություն 1823 թ. «Նկարագրությունից», 1832–1833 թթ. արքունական հարկատու բնակչության մարդահամարն անցկացվել է ավելի հստակ կերպով ձևակերպված հարցաթերթիկի հիման վրա, և բնակավայ-

³⁹ Ств «Описание Карабагской провинции, ...». «Имена ханской фамилии», N 1, Армянская деревня Каладараси:

⁴⁰ Ств «АКАК», т. VII. Тифлис, 1878, сс. 453–454 (<http://www.runivers.ru/bookreader/book9493/#page/470/mode/1up>):

րեր կատարված այցելությունների միջոցով արձանագրվել են ծխերի բոլոր անդամների անունները՝ ըստ ազգության, դավանանքի, տարիքի ու սեռի և ըստ վարչաքաղաքական բաժանումների, ինչպես նաև ըստ հարկային պարտավորության (արքունի և մասնավոր-կալվածատիրական): Այս մարդահամարի նյութերը խիստ կարևոր են Արցախի պատմության և, հատկապես՝ ժողովրդագրական պատկերի ուսումնասիրության համար: Մարդահամարի տվյալների ուսումնասիրությամբ պարզվում է, որ.

1. մահմեդական բնակչությունը տեղաբաշխված էր Ղարաբաղի նահանգի դաշտային հատվածում, ինչպես նաև Դիզակում և Ջանգեզուրում, որոնք հիմնականում քոչատեղիներ էին*:

Արցախի լեռնային մասերում, այն է՝ հայկական մեղիքությունների տարածքում, արքունական հարկատու բնակչության բացարձակ մեծամասնությունը (90–95 %) հայեր էին:

2. Կան թյուրքերեն անվանումներով գրառված բազմաթիվ հայկական բնակավայրեր, որտեղ, բացի հայազգի բնակչությունից, չէր ապրում ոչ մի մահմեդական, օրինակ՝ Խանքենդը, Մամադ Ազարը, Դրվղըշլաղը, Հասանկայան, Դաշբուլաղը, Կարայախան, Հաջիքենդը, Ալիդուլիքենդը և այլն:

ԱՐՑԱԽԸ 19-ՐԴ Դ. ՌՈՒՄԱԿԱՆ ՎԱՐՉԱՔԱՂԱՔԱԿԱՆ ԲԱԺԱՆՈՒՄՆԵՐՈՒՄ

Ղարաբաղի խանությունը 19-րդ դարի սկզբին ներկայացված էր հետևյալ վարչական բաժանումներով. Շուշի քաղաք, Դիզակ, Վարանդա, Խաչեն, Գյուլիստան, Ջրաբերդ (Չարաբերդ, Չեյլաբուրտ), Ջանգեզուր, Օթուզիքի, Իգիրմիդորթ, Ջերբայիլ և Ջևանչիր: Ղարաբաղի խանության վերացումից հետո տարածքը 1823 թ. «Նկարագրության» մեջ բնակավայրերի նույն հերթականությամբ ներկայացված է որպես Ղարաբաղի նահանգ: Այդ վարչական բաժանումը պահպանված է նաև 1832–1833 թթ. անցկացված մարդահամարի ժամանակ:

1867–1868 թթ. Հարավային Կովկասի հերթական վարչական բաժանման ընթացքում, երբ ձևավորվում էր Ելիզավետպոլի նահանգը, Ղարաբաղը ներառվում է նորաստեղծ նահանգի մեջ, ընդամենը ընդարձակվում ու անվանափոխվում են նրա նախկին ներքին գավառները⁴¹: Տեղանվանա-

* Նահանգը (պրովինցիա) ընդգրկում էր նախկին խանության տարածքը:

⁴¹ Տես Գ. *Անսրիլյան*, Գանձակ-Ելիզավետպոլի բնակչությունը XIX դարում: Ե., 2003, էջ 10:

կան համակարգում կատարված փոփոխությունների հետևանքով վերջնականորեն անհետացան հայկական գավառանունները, թերևս՝ բացի Շուշուց: Արցախի տարածքը ներկայացված էր Ջևանշիր, Շուշի և Ջերբախի գավառների կազմում: Եթե մինչ այդ Ջևանշիր տեղանունը տարածվում էր միայն Դիզակից դեպի հյուսիս-արևելք գտնվող տարածքի վրա, ապա այն ընդարձակվելով ներառեց Արցախի հյուսիսային գավառները, այն դեպքում, երբ 1823 թ. «Նկարագրության» մեջ արձանագրված 32 բնակավայրից գյուղեր էին միայն 3-ը, իսկ 29-ը՝ ժամանակավոր քոչատեղիներ: Շուշին ընդգրկում էր հիմնականում Վարանդա և Խաչեն գավառները, իսկ Ջերբախիլը՝ Արցախի հարավային մասը⁴²:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Պարսկական և օսմանյան տիրապետությունների հետևանքով Արցախում և Հայաստանի այլ մասերում⁴³ հայկական տեղանունների աղավաղումների միջոցով ուշ միջնադարում առաջացած զուգահեռ տեղանվանակարգը չի արտացոլել բնակչության էթնիկ կազմը, և ընդհուպ մինչև 19-րդ դարը Արցախում հիմնականում եղել է միայն բնիկ հայազգի բնակչություն:
2. Ռուսական պաշտոնական փաստաթղթերի միջոցով օտարամուտ տեղանունների լայն շրջանառումը հետևանք է քոչվոր ցեղախմբերի ներկայացուցիչների հաղորդած տվյալներով կազմված նկարագրությունների, ուստի և այդ տեղանունների վերագրումը նախորդ պատմական ժամանակաշրջաններին ու նաև դրանք ստուգաբանելու փորձերը հակազիտական են ու մերժելի:
3. Հայ բնակչության և հայկական տեղանունների հազարամյա կենսակայունության պատճառը Արևելյան Հայաստանում աշխարհիկ ու եկեղեցական իշխանությունների հարատևությունն է և հայկական բազմադարյա պատմամշակութային հարուստ ժառանգությունը:

⁴² Ըստ Մակար Բարխուտարյանցի՝ Ջաբրայելը և Ջուանշիրը հայ իշխանների անուններ են (տես *Մակար եպո. Բարխուտարեանց*, Նշ. աշխ., էջ 374):

⁴³ Հաքստհաուզենի վկայությամբ՝ «Թիֆլիսից Էրիվան ուղևորության ամբողջ ճանապարհին եղած ու մեզ հանդիպած գյուղերն ունեին երկու անուն՝ թաթարական և հայկական» (տես *А. Фон Гакстгаузен. Закавказский край*, ч. I. СПб., 1857, с. 154):

ՀԱՐԱԿԻՑ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒՄՆԵՐ

ԱՐՅԱԽԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒԲՁ

*Ս. Գ. ԱՍԱՏՐՅԱՆ, քանասիրական գիտությունների թեկնածու,
ԵՊՀ իրանագիտության ամբիոն*



Տեղանունների համակողմանի քննությունը պատմության ուսումնասիրության համար ունի առանձնակի կարևորություն, որովհետև դրանք որոշ փոփոխություններով հանդերձ պահպանվելով դարերի ընթացքում, սկզբնաղբյուր են յուրաքանչյուր երկրի էթնիկ կազմի փոփոխություններն ու պատմաաշխարհագրական պատկերը պարզելու համար: Այսպիսով՝ տեղանվանագիտությունը, լինելով օնոմաստիկայի* մի ճյուղը, իր ուրույն տեղն ունի պատմագիտության մեջ: Միևնույն ժամանակ, հարկ է նշել, որ տեղանունների ուսումնասիրությունն ունի իր առանձնահատկությունները:

Տեղանունները կարող են պահպանվել անփոփոխ և կարող են ենթարկվել մասնակի կամ արմատական փոփոխությունների: Արմատական փոփոխության ենթարկվում են, օրինակ, օտար նվաճումների ժամանակ տեղի ունեցած հողային սեփականության վերաբաշխման հետևանքով, երբ հարկամատյաններում գրանցվում են ոչ թե բնիկ տեղանունները, այլ եկվոր սեփականատերերի տված անվանումները, ինչը հանգեցնում է տեղանվան կրկնակի շերտի առաջացման՝ առանց բնակչության էթնիկ կազմի էական փոփոխման: Այդ երևույթը նկատելի է պատմական Հայաստանի ամբողջ տարածքում՝ որպես բյուզանդական, օսմանյան ու պարսկական տիրապետության հետևանք:

Տեղանունների գիտական ուսումնասիրությունն ու դասակարգումը կատարվում են տեղանվանահիմքերի տեսակավորման իմաստային, ձևաբանական ու բառակազմական սկզբունքների հիման վրա: Տեղանունների

* Օնոմաստիկան՝ անվանաբանությունը, լեզվաբանության ճյուղ է, որն ուսումնասիրում է հատուկ անունները, դրանց ծագումն ու փոփոխությունը և սերտորեն առնչվում է պատմագիտության, աշխարհագրության, ազգագրության, մշակութաբանության, օնոմոլոգիայի և գրականագիտության հետ:

իմաստային վերլուծությամբ կարելի է հավելյալ տեղեկույթ ստանալ հատկապես այն դեպքում, երբ տեղանունն արտահայտում է իր անվանած օբյեկտի տարբերակիչ հատկանիշը: Ժամանակի ընթացքում տեղանվանահիմքերը կարող են ենթարկվել նաև հնչյունական փոփոխության, որը, առաջացնելով իմաստային փոփոխություններ, հաճախ դժվարացնում կամ նույնիսկ անհնար է դարձնում տեղանուններից գիտական տեղեկույթի կորզումը: Երբեմն միայն ծագումնաբանական քննության միջոցով է հնարավոր լինում վերականգնել տեղանվան նախնական հիմքը:

Կախված այն բանից, թե ինչ իմաստ է արտահայտում տեղանունը, լինում են էթնոտեղանուններ, անձնանուններից կազմված տեղանուններ, կենդանանունների, բուսանունների, բնակլիմայական պայմաններն ու աշխարհագրական դիրքն արտահայտող հասկացությունների, զբաղմունքի ու մասնագիտությունների անվանումների, մարդու ու կենդանիների մարմնամասերի անվանումների, մետաղների ու հանքատեսակների անվանումների հիման վրա կազմված տեղանուններ և փոխանվանաբար առաջացած տեղանուններ: Տարածքի նկարագրությամբ կազմված տեղանունները հաճախ պայմանավորված են տվյալ վայրում ջրային ավազանի, լեռան կամ ժայռի, անտառի կամ բնական իջվածքների՝ ձորերի, խորխորատների առկայությամբ: Ռևստի այս խմբի մեջ են մտնում օրոնիմները (լեռների, բլուրների, կիրճերի անվանումներ), ջրանունները կամ հիդրոնիմները (գետերի, աղբյուրների անվանումներ)¹, և այլն:

Անտրոպոնիմները, կամ անձնանուններից կազմված տեղանունները, առաջացել են բնակավայրի հիմնադրի կամ ավելի հաճախ՝ ցեղապետի անունից²: Տեղանվանական համակարգում հանդիպում են ցեղապետերի ու

¹ Սի առանձին խնդիր է տեղանունների ու ջրանունների (հիդրոնիմներ) փոխհարաբերության հարցը: Արցախի տարածաշրջանում գետերի և դրանց ավերին գտնվող բնակավայրերի անունները հաճախ համընկնում են: Եթե անվան մեջ առկա են ջուր կամ գետ նշող բառարմատներ, ապա միանշանակ է դառնում տեղանվան նկատմամբ ջրանվան առաջնայնությունը: Սակայն կան դեպքեր, երբ մնան «հուշող» տարրեր չկան: Ռևստի և հարց է առաջանում՝ գետանունն է սկզբնայինը՝ թե տեղանունը: Համա Կրահեն իր հայտնի հոդվածում հիմնականում դասական օրինակներով, համոզիչ կերպով ցույց է տվել, որ առհասարակ ջրանունների ու տեղանունների համընկնման դեպքերում որպես կանոն, առաջնայինը ջրանունն է (տես *H. Krahe. Völkernamen und Flussnamen. «Festschrift für Fr. Zucker».* Berlin, 1954, PP. 227–244): Այս սկզբունքը նկատելի է նաև Հայոց արևելից կողմերում:

² Տես *B. A. Никонов. Этнонимия. «Этнонимы».* М., 1970, с. 20:

տոհմապետի, գյուղի հիմնադրի կամ գյուղատիրոջ անունների և տարբեր տեղանվանակերտ ածանցների համադրությամբ ստեղծված բնականուններ: Անձնանունների հիմքի վրա կառուցված տեղանուններն զգալի մաս են կազմում Արցախի տեղանվանական համակարգում և ունեն հետևյալ կազմությունը.

1. Պարզ անուններ՝ ցեղապետի կամ հիմնադրի անունով:

2. Ածանցավոր անուններ՝ տեղանվանակերտ ձևությամբով (Պետրոսապակ, Գրիգորաթաղ, Մխիթարաշեն, Մադաթաշեն):

Կենդանանուններից առաջացած տեղանունները պատկանում են իմաստային սկզբունքով դասակարգված այն անունների շարքին, որոնք արտացոլում են օբյեկտի էությունը: Արցախի տարածքում կենդանիների անուններով ստեղծված տեղանունները հիմնականում ներառում են նշված իմաստային կադասյարները և կարող են դասակարգվել հետևյալ կերպ. ա) վայրի կենդանիների անվանումներից առաջացած տեղանուններ, որոնք արտացոլում են Արցախի հարուստ կենդանաշխարհը, բ) ընտանի կենդանիների անվանումներից առաջացած տեղանուններ, որոնց միջոցով երբեմն հնարավոր է պարզել, թե անասնապահության տեսանկյունից որ կենդանիներն են կարևոր եղել, գ) թռչանունների և դ) սողունների դասի անուններից կազմված տեղանուններ: Այս դասի տեղանուններից են՝ Աղավնատուն, Ծիծեռնավանք, Եզնագոմեր, Գառնաքար, Վարազարուն, Օձաբուն, Արծվաշեն և այլն:

Բուսանուններից տեղանունների կազմումը պայմանավորված է տարածքում տվյալ բուսատեսակի առկայությամբ կամ տվյալ բույսի պաշտամունքային նշանակությամբ: Նշենք նաև, որ բուսանուններից կազմված տեղանունները, հիմնականում կենսունակ տեղանվանահիմքեր են և մինչ այժմ էլ ծառայում են որպես նոր բնակավայրերի անվանակոչման կամ հների վերանվանման միջոց: Բուսանուններից են կազմված, օրինակ, Մշենի, Մուշկապատ, Քոլատակ, Վարդաձոր, Գիլուտ, Մխտորաշեն, Վարդեր, Թղկոտ և այլն:

Փոխանվանաբար առաջացած տեղանունները ձևավորվել են երկու ճանապարհով.

ա) Որոշակի բառեր և անուններ անվանադրման ժամանակ պայմանականորեն դարձել են օբյեկտի անուններ,

բ) Արդեն գոյություն ունեցող անվան փոխանցման ճանապարհով, օրինակ՝ Նախիջևանիկ, Հակարի և այլն:

Տեղանունների իմաստային հիմքերի մաս են կազմում մասնագիտություն, արհեստ նշանակող բառերը՝ սայլվոր, դարբին, նկարիչ, գրիչ և այլն, ազգակցություն ցույց տվող բառերը՝ մայր, հայր, աղջիկ, հարս, մետաղների ու հանքանյութերի անվանումները: Արցախի տեղանուններում դրանք նույնպես բավական շատ են, այսպես օրինակ՝ Պապենշեն, Չարդախաչ, Պառավաթումբ, Կավահեն, Առաքյալ, Մարջան, Դազանչի (հայ. պղնձագործ, կաթսայագործ) և այլն:

Գունանունները կազմում են տեղանվանահիմքերի առանձին իմաստային դաշտ: Տեղանուններում գունանունների գործածությունը պայմանավորված է շրջակա աշխարհի ճանաչման ընթացքում գույների կարևորությամբ. ընդ որում, գույնը երբեմն ուղղակիորեն բնորոշում է իրերի և երևույթների հիմնական տարբերակիչ որակը: Տեղանուններում գունանունները հանդես են գալիս որպես թե՛ ավանդական, երբեմն պաշտամունքային ոլորտն արտահայտող, թե՛ միայն օբյեկտի արտաքին կողմը բնորոշող ցուցիչներ: Ավանդական գունանունները պատմության ընթացքում ձեռք են բերում մեծ գաղափարական, փիլիսոփայական բեռնվածություն: Որոշ դեպքերում առկա է գունանվան միջնորդավորված տեղանվանացում, այսինքն՝ տվյալ բնակավայրը, լեռը կամ գետը նմանեցվում են որևէ առարկայի, որն էլ գուգորդվում է որևէ գույնի հետ, և այսպիսով տվյալ տեղանունն ստանում է այդ գունանունը: Արցախի տեղանուններում գունանուններով կազմված ձևերը կազմում են մի զգալի հատված, օրինակ՝ Սպիտակաշեն, Սև աղբյուր (Դարաբուլաղ), Սպիտակ աղբյուր (Աղբուլաղ), Կարմրաշեն (Մրխավենդ), Կարմիրական, Կարմիր Շուկա, Կանաչ Թալա, Սպիտակաջուր և այլն:

Քննարկվող կենսատարածքի տեղանունների այն հատվածը, որը հայկական, մասամբ նաև՝ իրանական և քյուրքական մեկնության չի ենթարկվում (այսինքն՝ նշված լեզվական նյութերի հիման վրա դժվար մեկնաբանելի է), ըստ էության, պատկանում է տարածքի ենթաշերտին և կարելի է պնդել, որ Արցախ տարածքի տեղանունների մի զգալի մասն ունի ենթաշերտային ծագում:

Տեղանունները, ի տարբերություն մյուս բոլոր անվանական դասերից, ունեն մի խոցելի տեղ, որն ի հայտ է եկել 20-րդ դարում: Հնում խոշոր կամ հանրահայտ բնակավայրերի կամ լեռների ու գետերի անունները հազվադեպ էին փոխվում: Լեզվական հարմարեցման դեպքերը, բնականաբար, այլ են, որովհետև պայմանավորված են օտար տեղանվան արտասանությ-

յան դժվարությամբ և ոչ ենթակայական գործոններով: Արևելյան Հայաստանում պարսից տիրապետության ժամանակ որոշ հայկական տեղանուններ պետական գրագրության մեջ արտացոլվում էին ոչ հայկական արտասանությամբ համապատասխան: Օրինակ. Օձունը՝ ՈՒճուն (բառացի՝ «երկար»), Էջմիածինը՝ ՈՒչմուեզզին, ՈՒչքիլիսա (բառացի՝ «երեք մուեզզին», «երեք եկեղեցի»), և այլն: 19-րդ դարի կեսերից, երբ միջպետական հարաբերություններում ու հատկապես տարածքային վեճերի կարգավորման գործերում սկսում են մշակվել և աստիճանաբար «քաղաքացիություն» ստանալ միջազգային իրավունքի նորմերը, տեղանունները ձեռք են բերում քաղաքական (երբեմն նաև՝ իրավական) փաստի արժեք: Ահա այստեղից էլ սկիզբ է առնում տեղանունների (լեռնանունների ու ջրանունների)՝ վերադասի հրահանգով փոփոխման գործընթացը, որն իր առավել ցայտուն դրսևորումն է ստանում Ադրբեջանի Հանրապետությունում հայկական տեղանունների թյուրքացման ձևով: Գիտական ուսումնասիրություններն այսօր անհրաժեշտ են, որպեսզի բացահայտվի քաղաքական աստառ ունեցող ձեռնածությունների նշված գործընթացը, վեր հանվի Արցախի տեղանուններում առկա հսկայական ու արժեքավոր պատմագիտական-ազգագրական նյութը, ինչը հնարավորություն կընձեռի առավել լիարժեքորեն լուսաբանելու այդ տարածքում հայության գոյության ու կենսագործունեության պատմությունը, էթնիկական տեղաշարժերն ու տեղանունների փոփոխման օբյեկտիվ ու սուբյեկտիվ պատճառները:

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՄԵՐԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀԱՅԿԱԿԱՆ ՍԿՁԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Գ. Մ. ԲԱԴԱԼՅԱՆ, ԵՊՀ ավագ գիրաշխատող



ՍԵՊԱԳԻՐ ՇՐՋԱՆ

Հայաստանի Արցախ և Ուտիք աշխարհները, որոնք 5-րդ դարից հայտնի են նաև «Հայոց արևելից կողմանք» (իմա՝ «նահանգներ», կամ «երկրամասեր») հավաքական անունով, հայտնի են վաղնջագույն ժամանակներից: Մասնավորապես՝ Վանի թագավորության Սարդուրե Բ (Ք. ա. 764–735 թթ.) և Ռուսա Ա (Ք. ա. 735–713 թթ.) հզոր թագավորների թողած սեպագիր արձանագրություններում արդեն հանդիպում ենք այս երկրամասերի մասին հնագույն հիշատակությունների: Դրանցում արտացոլված անվանումները վկայում են երկրամասերի բնիկ հայկական լինելը: Այսպես. Սարդուրե Բ թագավորի թողած «Ծովակի արձանագրությունում» (ՀՀ Գեղարքունիքի մարզ) Արցախը հիշատակված է Ռիրտեխես (Ռրտեխես) ձևով: Ռիրտեխես-Ռրտեխես ձևից էլ ավելի ուշ առաջացել է Արցախ տեղանունը [ՌԻ(Ռ)րտեխես > Ռրձեխ > Ռրձախ (Ռրցախ) > Արձախ > Արցախ]¹: Ինչ վերաբերում է Ռուտիքին, ապա պատմալեզվաբանական ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այն համընկնում է Ռուսա Ա թագավորի «Ծովինարի արձանագրությունում» (ՀՀ Գեղարքունիքի մարզ) «լեռան (լեռնաշղթայի), իմա՝ Սևանի ստորոտում գտնվող» և 19 «երկրներ» միավորող տարածքի նշման հետ: Այդ նշումը կարելի է վերականգնել որպես Ռտիք (իմաստ՝ լեռան ստոր-ոտ), որից էլ, տեղական բարբառի ազ-

¹ Տես Յ. Կարազեղոզյան, Հայկական լեռնաշխարհը սեպագիր աղբյուրներում, հ. I, գիրք 1 «Սեպագիր տեղանուններ (Այրարատում և հարակից նահանգներում)»: Ե., 1998, էջ 184–185: Սեպագիրը չի տարբերակում «ու» և «ո» հնչյունները՝ դրանք արտացոլելով միևնույն նշանով: Ի դեպ, նույն հեղինակը նախնական Ռրձեխ-Ռրցախ անվանումից դրափոխության հետևանքով առաջացած Ռրխաց (Ռրխէց) ձևից է բխեցնում հույն աշխարհագրագետ Ստրաբոնի աշխատության մեջ հանդիպող Օրխաստենե (Օրքիստենե) տարբերակը (տես նույն տեղում, էջ 184):

դեցուքայմք, բխում է ՌՒտիք տեղանունը²: Ըստ այդմ, վերջինս ոչ մի կապ չունի որևէ ցեղի կամ ցեղախմբի հետ (մասնավորապես՝ ուտիների կամ ուղիների), ինչը «ճգնում» են ապացուցել աղբրեջանցի այսպես կոչված «պատմաբանները»³:

Հ. Կարազոյզյանի տեսակետին բավական մոտ է ՌՒտիք տեղանվան Բ. Հարությունյանի ստուգաբանությունը, որի համաձայն՝ այն նախապես հնչել է Ովիաք, ինչը Երասխի (Արաքս) և Կուրի միջև փռված տափարակների ուղղակի տեղանվանական արտացոլումն է⁴:

ՌՒտունասիրությունից պարզվել է մի ուշագրավ և կարևոր փաստ ևս: Քննարկվող տարածաշրջանի սեպագիր արձանագրություններում գրանցված վարչական կառուցվածքը (ըստ «երկրների») զգալի ընդհանրություն ունի Արցախի և ՌՒտիքի աշխարհացույցյան գավառաբաժանման հետ: Հատկանշական է, որ Ռուսա Ա թագավորի հիշատակած նվաճված «երկրների» թիվը գրեթե համընկնում է վերոհիշյալ աշխարհների գավառների ընդհանուր թվին (20, այդ մասին՝ ստորև): Սա կարող է պատահականություն թվալ, սակայն սեպագիր տեղանունների վերլուծությունը և դրանց տեղադրությունը ավելի շատ խոսում են այդ վարչական կառուցվածքի՝ հնագույն արմատներ ունենալու օգտին⁵: Ի դեպ, դրանով ևս լիովին հաստատվում է «Հայոց արևելից կողմանք» տարածաշրջանի տեղանունների հայկականությունը: Այսպես. Ռուսա Ա թագավորի «Ծովինարի արձանագրության» մեջ հանդիպում է Տուտուա տեղանունը (հին հայերեն

² Տես նույն տեղում, էջ 185:

³ ՌՒտի-ուղիները դադատանյան լեզվախմբի ժողովուրդ են և էթնիկական առնչություն չունեն թյուրքալեզու աղբրեջանցիների հետ (տես Բ. Հ. Հարությունյան, Արցախի, Հայոց արևելից կողմերի և Ղարաբաղի տարածքի հարցի շուրջը: «Պատմաբանասիրական հանդես» (այսուհետև՝ «ՊԲՀ»), Ե., 1995, հմ. 1–2):

⁴ Տես Բ. Հ. Հարությունյան, Նշ. աշխ.:

⁵ Գրիգոր Ղափանցյանը, քննության ենթարկելով Ծովինարի (թուրքերի հորջորջմամբ՝ Քյուլանդռան) արձանագրությունը, բոլորովին չի անդրադարձել «լեռան ստորոտին ընկած երկրների» տեղադրության խնդրին՝ բավարարվելով Սևանի ավազանում գտնվող առանձին վարչամիավորների քննությամբ (տես Գ. Ա. Կապուչյան. Халдская надпись Русы I из Келанкрана. «Историко-лингвистические работы», т. II. Е., 1975, сс. 25–38): Քյուլանդռան (Քոլանիների կոտորածի վայր) անվանումը առաջացել է լեզգիների գործի կողմից նշված վայրում 1767 թ. քյուլանիների քոչախմբին պարտության մատնելու իրադարձությունից հետո:

սեռական հոլովածնի «ա» վերջավորությամբ⁶: Ընդ որում, նախապես այն եղել է «երկրանուն» (գավառանուն, սեպագրում՝ «Դս-խ-ա-ի-նե»), այն է՝ «Տուտուայան երկիր»⁷: Որպես հայերենին հատուկ լեզվաբանական զարգացման արդյունք՝ տեղանունը վերածվել է նախ՝ Տուրտու, այնուհետև՝ Տրտու (այժմ՝ Թարթառ, Արցախի ամենամեծ և ջրառատ գետը), ինչը հանդիպում է նաև Տրտուական անվանաձևով⁸: ՈՒշագրավ է, որ սեպագրում արձանագրված տարբերակը գրեթե անաղարտորեն պահպանվել է նաև մեր օրերում այդ գետի Տուտխու (Դութխու, Թութխուն) վտակի անվան մեջ⁹:

Նույն 19 «երկրների» շարքում հիշատակվող Երկիլից (արձանագրությունում՝ կրկին հին հայերենի «ա» սեռական հոլովածնով «Երկիլա», Er-qil-a-i-né, իմա՝ «Երկիլայան երկիր»)¹⁰ բխում է Արցախի Հարձլանք (Հարջլանք) գավառանունը, Պագուից¹¹ («Պագուա», սեպ. [P]a-zu-a-i-né, իմա՝ «Պագուայան երկիր»)՝ Պածկանքը, կամ Պագկանքը (դարձյալ Արցախում), Պիրուից¹² («Պիրուա», սեպ.՝ Pi-ru-a-i-né, իմա՝ «Պիրույան երկիր»)՝ Պիանքը (Պիրիկանք-Պիրկանք անցումով, Արցախում), Բերգիլից¹³ («Բերգիրա», սեպ.՝ Urudu-zi-ra-né)՝ Բերձորը (Արցախում) և այլն: Հայոց արևելից կողմերի առանձին «երկրանուններ» հանդիպում են նաև Ռուսա Ա թագավորի հոր՝ Սարդուրե Բ Տուշպա-Վան մայրաքաղաքում գտնված Գանձադրան նշանավոր տարեգրությունում: Դրանցից է Կույալբան, որից էլ բխում է Արցախի Մեծկուանք (Մեծկվենք) գավառանունը¹⁴: ՈՒշագրավ է, որ առանձին «երկրանուններ» թեև չեն «վերածվել» գավառանունների, սակայն պահպանվել են Արցախի բնակավայրերի անվանումներում:

⁶ Տես *Յ. Կարազեղոզեան*, Նշ. աշխ., էջ 234–235:

⁷ Տես նույն տեղում, էջ 332–333:

⁸ Տես *Մովսէս Կաղանկատրուացի*, Պատմութիւն Աղուանից աշխարհի: Քննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի: Ե., 1983, էջ 99 («Տրտուական գետ»), 133 և 297 («ի գետ Տրտու»):

⁹ Տես *Յ. Կարազեղոզեան*, Նշ. աշխ., էջ 235:

¹⁰ Տես նույն տեղում, էջ 197, 332:

¹¹ Տես նույն տեղում, էջ 202, 332:

¹² Տես նույն տեղում, էջ 203, 332:

¹³ Տես նույն տեղում, էջ 191, 332: Հ. Կարազյոզյանը երկրանվան ընթերցանության մեջ կարևոր ճշգրտում է կատարել՝ առաջին բաղադրիչը վերծանելով որպես Ber- (հայերեն՝ «բեր»-«պղինձ»), որը նույնիմաստ է սեպագրի *urudu* («պղինձ») բառին:

¹⁴ Տես նույն տեղում, էջ 200:

Գրանցից պետք է առանձնացնել Գիշուն («Գիշուն», սեպ.՝ Gi-šu-a-i-né)¹⁵, որը նույնական է այժմ պահպանված Գիշի գյուղանվանը (պատմական Միս (Մես) Հաբանո գավառում, ուշ միջնադարում՝ Վարանդայում, այժմ՝ ԼՂՀ Մարտունու շրջանում), ՈՒխունեն¹⁶ («ՈՒ-խու-նի-նե»), որն Արցախի Խաչենագետի հովտում գտնվող միջնադարյան Խոխանաբերդն է և, ամենայն հավանականությամբ՝ Մեծիրանք, կամ Մեծարանք, գավառի հնագույն անվանումը: Վանի արձանագրություններում գրանցված են նաև ՈՒտիքի առանձին գավառանունների վաղնջագույն ձևերը: Մասնավորապես՝ Սարղուրե Բ թողած վերոհիշյալ Գանձադռան տարեգրությունում հիշատակվող Տերիա (հնչել է Տրիա, ուղիղ ձևը՝ Տրի) «երկրանունը» անփոփոխ հիշատակվում է «Աշխարհացույց»-ում¹⁷: Նույն տարեգրության մեջ հիշատակվող Եշունու(ա) երկրանունից առաջացել է Կաղանկատվացու երկում հանդիպող Հաշու (տարբերակ՝ Հոշո) տեղանունը¹⁸: Չենք բացառում, որ սա ՈՒտիքի Արանոռտ գավառի կամ դրա մի հատվածի հնագույն անվանումն է:

Այսպիսով՝ սեպագիր արձանագրություններում հիշատակվող Հայոց արևելից կողմերի տեղանունների ուսումնասիրությունը ապացուցում է դրանց վաղնջականությունը և հայկական միջավայրում առաջացումը:

«ՈՍԿԵԳԱՐԻ» ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Հայոց լեզվի զարգացման կանոններով Արցախի տեղանունների մեծ մասն ստացել է այն տեսքը, որին հանդիպում ենք հայ մատենագիրների երկերում՝ սկսած վաղ միջնադարից: Նշված տարածաշրջանը բավական լավ ներկայացված է «Ոսկեդարի» պատմագրության շրջանից սկսած (Մովսես Խորենացի, Փավստոս Բուզանդ, Ագաթանգեղոս): Հատկապես առանձնանում է «Աշխարհացույց»-ը՝ հայ աշխարհագրական մտքի հնագույն կոթողը, որում արտացոլված է Արցախի և ՈՒտիքի առաջին ամբողջական գավառաբաժանումը: Մեծ Հայքի այս երկու աշխարհները միասին ունեին 20 գավառ, որոնցից 12-ը՝ Արցախի գավառներ էին, իսկ 8-ը՝ ՈՒտի-

¹⁵ Տես նույն տեղում, էջ 133, 332:

¹⁶ Տես նույն տեղում, էջ 138–139:

¹⁷ Տես նույն տեղում, էջ 206:

¹⁸ Տես նույն տեղում, էջ 211–212: Հմմտ. *Մովսես Կաղանկատուացի*, Նշ. աշխ., էջ 89–90 («Յունան՝ Հաշուայ եպիսկոպոս»), 294 («Միմեոն՝ Հոշոյ եպիսկոպոս»):

քի¹⁹: «Աշխարհացույց»-ի «ընդարձակ» և «համառոտ» խմբագրությունների տվյալների առադրմամբ ստորև ներկայացնում ենք Հայոց արևելից կողմերի գավառաանուններն իրենց ուղիղ ձևերով²⁰.

I. Արցախ	
1. Միս (Մես) Հաբանդ, կամ Փոքր Հաբանդ (Խաբանդ) ²¹	7. Մոխանք (Մոխանք)
2. Վակունիք (Վայկունիք)	8. Պիանք (Ապիանք)
3. Բերձոր ²²	9. Պածկանք (Պարծանք)
4. Մեծիրանք (Մեծ Իրանք) ²³	10. Սիսականի Կոտա (Սիսական Ոստան, Սիսական Ռոտաստակ, Ռոտաստակ)*

¹⁹ Նախքան գավառների թվարկումը նշվում է, որ ՌԻտիքն «ունի գաւառս... եւրն»: Այս անհամապատասխանության բացատրությունը տես Բ. Հարությունյան, Հայոց արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ «Աշխարհացույց»-ի: «Շուշին հայոց քաղաքակրթության օրրան (Շուշիի ազատագրման 15-րդ տարեդարձին նվիրված գիտաժողովի նյութեր)»: Ե., 2007, էջ 27:

²⁰ Օգտվել ենք հետևյալ աշխատություններից. *К. Патканов. Армянская география VII в. по р. X. СПб., 1877, с. 19*, «Աշխարհացույց Մովսեսի Խորենացույ յանելուածովք նախնեաց»: Վենետիկ-Սբ. Ղազար, 1881, էջ 33, *Ա. Գ. Արրահանյան*, Անանիա Շիրակացու մատենագրությունը: Ե., 1944, էջ 348, 350: Հմնտ. *Ղ. Բնճիճեան*, Ստորագրութիւն հին Հայաստանեայց: Վենետիկ-Սբ. Ղազար, 1822, էջ 305–306, 337: *Ղ. Ալիշան*, Տեղագրութիւնք Հայաստանի - Արցախ: «Բազմավէպ»: Վենետիկ-Սբ. Ղազար, 1988, թիվ 1–4, էջ 233–234, (հեղինակը նշում է 13 գավառ՝ սխալմամբ Քոտակը, կամ Կոտանքը, ինքնուրույն վարչամիավոր համարելու հետևանքով), նույնի՝ Տեղագրութիւնք Հայաստանի - ՌԻտի: «Բազմավէպ», 1989, թիվ 1–4, էջ 76–77, *Բ. Հարությունյան*, Հայոց արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ..., էջ 22–24: Չանց ենք առել բոլոր բացահայտորեն աղավաղված տարընթերցումները:

²¹ Հանդիպում է նաև Համբանդ տարբերակը, ինչպես և հարևան Սյունիքի նույնանուն գավառի պարագայում (տես Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռագիր թիվ 6271, թերթ 335ա (այսուհետև՝ ՄՄ և ձեռագրի համարը)):

²² Մի շարք ձեռագրերում ընդօրինակողներն իմաստավորել են այս տեղանունը՝ դարձնելով Բերդաձոր (Բերդորք) (տես *Ղ. Բնճիճեան*, նշ. աշխ., էջ 305):

²³ Ավելի ուշ շրջանում հանդիպում է նաև Մեծարանք-Մեծարեանք («տունս Մեծարեանց») ձևերով (տես «Դիվան հայ վիճագրության» (այսուհետև՝ «ԴՀՎ»), պրակ V, կազմեց Ս. Գ. Բարխուդարյան: Ե., 1982, էջ 13, 18, 27): Դա, թերևս, հարևան ՌԻտիքի Արանոտ գավառանվան ազդեցության հետևանքն է:

* Այս գավառանունը առավել աղավաղվածն է: Շատ հաճախ դրա բաղադրիչներն անգամ դիտվել են որպես տարբեր վարչամիավորներ:

5. Մեծ Կուանք (Մեծ Կուանք, Մեծկունք)	11. Քուստ-ի Փառնես (Քուստիփառնես, Քուստ-ի Փառնես)
6. Հարճկանք (Հարջլանք, Հարճղանք, Հաջլեանք)	12. Կողք (Կոխք, Կոխ)
II. ՈՒՏԻՔ (ՈՒՏԻ)	
1. Արանոտ (Արանոտվտ)	5. Տուչքատակ (Տուչկատակ)
2. Տրի (Տռի, Տռոի)	6. Գարդման
3. Ռոտպայեակ (Ռոտպացեան)	7. Շակաշեն (Շիկաշեն) ²⁴
4. Աղուտ (Աղաւտ)	8. ՈՒՏԻ Առանձնակ ²⁵

Այս գավառաբաժանումը քաջ ծանոթ է ման Հայոց արևելից կողմերի տարածաշրջանի պատմագիր Մովսես Կաղանկատվացուն: Ըստ այդմ, «Պատմություն Աղվանից աշխարհի» երկում հիշատակվում են Արցախի 12 գավառներից 10-ը՝ Բերձորը²⁶, Վայկունիքը (Վերին Վայկունիք)²⁷, Սիսականը (իմա՝ Սիսականի Կոտակ)²⁸, Հաբանդը (իմա՝ Միս Հաբանդ)²⁹, Պազկանքը (իմա՝ Պաձկանք)³⁰, Մխանքը (իմա՝ Մուխանք)³¹, Կողքը³²,

²⁴ Մովսես Կաղանկատվացու երկում՝ ման «Արշակաշեն» (տես *Մովսես Կաղանկատվացի*, Նշ. աշխ., էջ 212, 331):

²⁵ Բ. Հարությունյանը, Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերը և Կաղանկատվացու հաղորդած տվյալները առադրելով, նշում է ման գավառի երկրորդ անվանումը՝ ՈՒՏԻ-ՈՒՍՏԱԿ (ՈՒՏԻ-ՈՒՍՏՈՍԱԿ) (տես Բ. Հարությունյան, Հայոց արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ..., էջ 24):

²⁶ Տես *Մովսես Կաղանկատվացի*, էջ 327:

²⁷ Տես նույն տեղում:

²⁸ Տես նույն տեղում: Գավառանունը հանդիպում է ման «Սիսան» աղավաղումով (տես նույն տեղում, էջ 341):

²⁹ Տես նույն տեղում, էջ 35, 39, 327:

³⁰ Տես նույն տեղում, էջ 75 [«գաւառն Պազկանց» (1-ին հատորի ԻԲ գրքի խորագրում. – Բ. Բ.)], 327: Կաղանկատվացու երկում գավառանունները երբեմն հանդիպում են տեղական բարբառի արտասանությամբ, և Պազկանքը դրա վառ օրինակն է:

³¹ Տես նույն տեղում, էջ 120–121 («ի գաւառին Արցախայ՝ ի Մխանց տոհմին»), 327: Դարձյալ գավառը գրանցված է տեղական հնչողությամբ: ՈՒշագրակ է «Մխանց տոհմ» բառակապակցությունը, որը «Մխանց տոհմ» («տոհմ»՝ Արցախի բարբառով) տեղանվան մի յուրատեսակ մեկնաբանությունն է, թերևս՝ գրիչների կողմից:

³² Տես նույն տեղում, էջ 212, 304:

«Մեծկուենքը (Մեծկուեանք)»³³, Մեծիրանք (որպես կանոն՝ «գաւառ Մեծիրանց» ձևով)³⁴ Քուստի Փառնետը («Քուսայ և Փառնայ» աղավաղված ձևով)³⁵: ՌՒշադրության է արժանի Կաղանկատվացու երկում բազմիցս հիշատակվող Մեծ Կողմանք գավառը³⁶, որը կարող էր լինել թեմական-եկեղեցական բաժանման արդյունք՝ ձևավորված իրար սահմանակից «Մեծ Կուենք» և Մեծիրանք գավառների միավորման և մեկ եպիսկոպոսի իրավասության տակ դրվելու հետևանքով³⁷: Չենք բացառում մաս, որ Մեծ Կողմանքը պարզապես «Մեծ Կուենքի» ժողովրդական ստուգաբանությունն է: ՌՒշագրավ է, որ Մովսես Կաղանկատվացին Արցախում հիշատակում է մաս «Աշխարհացույց-ի» գավառացանկում չեղած վարչամիավորներ: Այս երևույթը պետք է բացատրել ինչպես ավատատիրական հարաբերությունների խորացման հետևանքով նոր վարչամիավորների (թե՛ աշխարհիկ, թե՛ հոգևոր) ձևավորմանը, այնպես էլ Հայոց աշխարհի լեռնային, կտրտված մակերևույթի բնույթով: Նման գավառներից է Ամարասը, որը Սյուս Հաբանդի արևելյան հատվածն էր՝ կենտրոն ունենալով Մովսես Կաղանկատվացու աշխատության մեջ բազմիցս հիշատակված եպիսկոպոսանիստ գյուղաքաղաքը³⁸: Նույն կերպ ենք բացատրում մաս Վերին Վայկունքը, որն ամենայն հավանականությամբ Տրտու (Թարթառ) գետի ավազանում

³³ Տես նույն տեղում, էջ 98–99, 212, 218, 233–235 (հանդիպում է մաս «Մեծ վանք» աղճատված ձևով):

³⁴ Տես նույն տեղում, էջ 119, 203, 205, 207, 276, 293

³⁵ Տես նույն տեղում, էջ 341: Նշված ձևը, կարծում ենք, առաջացել է «Քուստ-ի Փառնեայե տարընթերցումից («Փառնեա»-ի սեռական հոլովածևը):

³⁶ Տես նույն տեղում, էջ 17, 122, 203, 205, 234–235, 238, 262–263, 266: Ի դեպ, հանդիպում է այս տեղանվան Մեծ Կուսանք իմաստավորված տարբերակը (տես նույն տեղում, էջ 300, «կոյս» - «կողմն» համարժեքից):

³⁷ Տես Բ. Հարությունյան, Հայոց արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ..., էջ 37:

³⁸ Տես Մովսես Կաղանկատվացի, Նշ. աշխ., էջ 35, 39, 65, 71–72, 75, 77, 82, 119: Ամարասը՝ իր լուսավորչահիմն Սբ. Գրիգոր վանքով, լավ ծանոթ է դեռ վաղ միջնադարյան հեղինակներին: Բուզանդն այն կոչում է գյուղ («ի գաւառն իրեանց... ի Հաբանդ, ի գեօղն՝ որ անուանեալ կոչի Ամարագ») (տես Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն (գրաբար և աշխարհաբար զուգահեռ տեքստերով): Ե., 1987, էջ 26): Խորենացին Ամարաս ավանը հիշատակում է Փոքր Սյունիքի (իմա՝ Արցախի) տարածքում (տես Մովսես Խորենացի, Հայոց պատմություն (գրաբար և աշխարհաբար զուգահեռ տեքստերով): Ե., 1991, էջ 310):

գտնվող Վայկունիքի հարավային շրջանն էր՝ նշանավոր «բաղանիք արքունական» հանքային աղբյուրներով հանդերձ³⁹:

Ինչ վերաբերում է ՌԻտիքին, ապա Մովսես Կաղանկատվացին նշում է դրա գավառներից Գարդմանը (հիշատակվում է բազմիցս)⁴⁰, Տրին («Տրի գաւառ»)՝⁴¹ և Շակաշենը⁴²: ՌԻշաղրություն է գրավում «Գիսաւան մահանգ» կոչվող վարչամիավորը: Այն ձևավորվել էր ՌԻտիքի Գիս ավանի շրջանում՝ դարձյալ Հայոց եկեղեցու թեմական բաժանման հետևանքով: Դա կապված էր Աղվանքի տարածքում քրիստոնեություն քարոզած և Գիս ավանում եկեղեցի հիմնադրած Սուրբ Եղիշե առաքյալի (1-ին-2-րդ դդ.) անվան հետ: Այս եկեղեցին Կաղանկատվացին անվանում է Հայոց արևելից կողմերի առաջին քրիստոնեական սրբավայրը, որը «եղև... մայրաքաղաքաց և լուսաւորութեան տեղի...»⁴³: Գիսը հայտնի է նաև Մաշտոցի լուսավորչական գործունեության շնորհիվ: Իր աշակերտների հետ հաստատվելով «ի ճախճախտտ տեղիս և լռաբոյս մօրսն առ տեղեան, որում Գիսն կոչեն...»՝ Մաշտոցը վերանորոգել էր հին եկեղեցին՝ այն վերածելով լուսավորության նոր կենտրոնի⁴⁴: Մովսես Կաղանկատվացու երկի տվյալները հնարավորություն են տալիս այս բնակավայրը տեղադրելու Կուրի ավիեզերքին՝ Պարտավ քաղաքի մոտակայքում, որը, ինչպես հայտնի է «Աշխարհացոյց-ից», գտնվել է ՌԻտի Առանձնակ գավառում⁴⁵:

³⁹ Տես *Մովսես Կաղանկատվացի*, Նշ. աշխ., էջ 340. «ի գիւղն, որ կոչի Վայունիք, ուր և բաղանիք արքունական են»: Այժմ ԼՂՀ Շահումյանի (նախկին Քարվաճառի) շրջանի Ջերմաշուր գյուղը:

⁴⁰ Տես նույն տեղում, էջ 94, 118, 122, 171–172, 182, 184, 187, 194, 196, 269, 293, 294, 304:

⁴¹ Տես նույն տեղում, էջ 121 («Դանիել՝ քահանայն Տրիոյ»), 327, 331 («արարին վնաս Սիսան, Տրոյ և Ամարաս գաւառացն»):

⁴² Տես նույն տեղում, էջ 178, 312: Նաև «Արշակաշէն» (տես նույն տեղում, էջ 212, 331): Պետք է ենթադրել, որ սա նշված գավառանվան իմաստավորված ձևն է, թեև չենք բացառում, որ այն հնուց է գալիս՝ կապված Հայաստանի տարածք շակերի (սակեր) կամ սկյութների ներթափանցման հետ (Ք. ա. 25-րդ դ. սկիզբ): Հմնտ. 25-րդ ծանոթագրությունը:

⁴³ Տես *Մովսես Կաղանկատվացի*, Նշ. աշխ., էջ 10:

⁴⁴ Տես նույն տեղում, էջ 95:

⁴⁵ Տես «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ ...», էջ 33: «ՌԻտի Առանձնակ՝ յորում Պարտաւ քաղաք»: Ա. Հակոբյանը Գիսը տեղադրում է Շակաշենում՝ Կուրակ գետի (այժմ՝ Քյուրակչայ) ստորին ավազանում, ՌԻտի Առանձնակի սահմանից ոչ հեռու (տես «Մեծ Հայքի Արցախ և ՌԻտիք մահանգները ըստ «Աշխարհացոյց-ի» քարտեզ

Ի դեպ, ՈՒտիքի մի խումբ գավառներ հիշատակված են նաև Փավստոս Բուզանդի աշխատության մեջ: Հեղինակի տվյալներով՝ հարևան Ադվանից թագավորությունը, օգտվելով Արշակ Բ դավադիր ձերբակալությունից, գավթել էր «զՈՒտի (իմա՝ ՈՒտի Առանձնակ – Գ. Բ.), զՇակաշեն և զձորն Գարդմանայ (իմա՝ Գարդման – Գ. Բ.) և զԿողթ և այլ, որ շուրջն էին զնովաւ սահմանք գաւառք»⁴⁶: Այն հանգամանքը, որ Կողթը հիշատակված է Արցախից դուրս (Բուզանդի երկուն՝ «երկիրն Արձախայ»)՝⁴⁷ խոսում է 4-րդ դարում ՈՒտիքի կազմում այդ գավառի լինելու օգտին⁴⁸:

Հիմք ընդունելով վերը շարադրվածը՝ կարող ենք անել հետևյալ դատողություններն ու եզրահանգումները:

ա) Արցախի և ՈՒտիքի (հավաքական՝ Հայոց արևելից կողմանց, կամ կողմերի) վարչական բաժանումներն սկիզբ են առնում հնագույն ժամանակներից և գրանցված են արդեն Ք. ա. 8-րդ դ. 1-ին կեսին՝ Վանի սեպագիր արձանագրություններում: Դրանց և հայկական վաղ միջնադարյան սկզբնաղբյուրների հաղորդած տվյալների առադրումը ցույց է տալիս, որ ինչպես Արցախի և ՈՒտիքի, այնպես էլ ավելի փոքր վարչատարածքային միավորների՝ գավառների անվանումների վաղմջագույն շերտը ձևավորվել ու զարգացել է միայն ու միայն հայկական միջավայրում (Բերձոր, Հաբանդ, Վայկունիք, կամ Վակունիք, Հարճլանք, Մեծիրանք, Մեծկունք, կամ Մեծկունք, Մուխանք, կամ Մոխանք, Պաձկանք-Պազկանք, Պիանք-Ալիանք, Կողթ, Տրի կամ Տոռի, Աղուէ և այլն):

Այսպիսով՝ տարածաշրջանի վարչական բաժանումը պահպանվել է շուրջ 1600 տարի՝ Ք. ա. 8-րդ դարից (առաջին գրանցումը) մինչև Ք. հ. 8-րդ դար (արաբների կողմից Հայաստանի վերջնական նվաճումը)⁴⁹: Սա ևս

(մասշտաբ 1:1500000): *Ալեքսան Զակոբեան*, Պատմաաշխարհագրական եւ վիճագրագիտական հետազոտություններ (Արցախ եւ Ուտիք): Վիեննա-Երևան, 2009):

⁴⁶ Տես *Փավստոս Բուզանդ*, Նշ. աշխ., էջ 322:

⁴⁷ Տես նույն տեղում, էջ 320:

⁴⁸ Տես *Բ. Հարությունյան*, Հայոց արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ..., էջ 40–41:

⁴⁹ Դա են հավաստում արաբ պատմիչներ Բալազորիի և Իբն ալ Ֆակիհի Հայոց արևելից կողմերի նվաճմանը վերաբերող հատվածներում հիշատակվող գավառանունները՝ Շակաշին (աղավաղված՝ Սիսար)-Շակաշեն, Միսկուան (Ալ Միսկուան)-Մեծկունք, ՈՒդ կամ ՈՒգ-ՈՒտի (Առանձնակ), Միսրիան-Մեծիրանք, Հարջալիան (Մահրաջալիան)-Հարճլանք (Հարջլանք), Տիար-Տ(ե)րի (տես «Արաբ մատենագիրներ, Թ-Ժ

վկայում է, որ տարածաշրջանի տեղանունները ձևավորվել են միատարր հայկական միջավայրում:

Արցախի և, մասնավորապես, ՌԻտիքի գավառանունների մի մասն ունի իրանական ծագում (Սիսական-ի Կոտակ, Արանոռոտ, Ռոտ-պայեակ, կամ Ռոտ-պացեան, Գարդման, Շակաշեն, Տուչքատակ, Քուստ-ի Փառնես): Դա հետևանք է ինչպես հնագույն հայ-իրանական առնչությունների, այնպես էլ ավելի ուշ շրջանում (Ք. հ. 1-ին հազարամյակի սկիզբ) իրանական որոշակի քաղաքական ազդեցության: Ընդ որում, առավել հնագույն շերտից առանձնանում է Շակաշենը (իմա՝ «շակ-սակերի բնակության վայր», անտիկ աղբյուրներում՝ Սակասենա, հունարեն՝ Σακασήνη), որը ձևավորվել է Կուրի աջափնյակում՝ Գանձակի շրջանում, Հայաստանի տարածք սակ-շակերի (սկյութների) ներթափանցման հետևանքով⁵⁰: Դրա հետ կարելի է կապել նաև Գարդման (Գարդմանք, Գարդմանաձոր) գավառանունը: Միատարր հայկական միջավայրում եկվոր իրանցի սակերը (շակեր) շատ արագ ձուլվեցին, սակայն նրանց «հետքերը»՝ տեղանունների տեսքով, ընկալվեցին տեղաբնիկների կողմից և հայացվեցին:

Իրանական շերտի մյուս տեղանունները, ըստ էության, Հայաստանում Սասանյան տիրապետության, մասնավորապես՝ մարզպանության, ժամանակաշրջանի արդյունք են, երբ առանձին գավառանուններ պաշտոնական տեղեկագրերում գրանցվել են «պետական» լեզվով՝ պարսկերենով. դրանցից են «Սիսական-ի Կոտակ» (իմա՝ Փոքր Սյունիք), «Ռոտ-պացեան, կամ Ռոտ-պայեակ», Տուչքատակ, Արանոռոտ տեղանունները⁵¹: Այդ երևույթի

դարեր», ներածությունը և բնագրերից թարգմանությունները *Ա. Տեր-Ղևոնդյանի*: Ե., 2005, էջ 274, 499):

⁵⁰ Այդ մասին տես *Ա. Տ. Երևնյան*, Կիմերական ու սկյութական ցեղերի արշավանքները և Ռիարտոսի ու Ատրեստանի պայքարը քոչվորների դեմ: «ՊԲՀ»: Ե., 1968, հմ. 2, էջ 94, *նսև՝ Բ. Հ. Հարությունյան*, Հայաստանի, հայ-իրանական հարաբերությունների և Առաջավոր Ասիայի հնագույն պատմության մի քանի խնդիրների շուրջ (մ. թ. ա. VII-VI դդ.): Ե., 1998, էջ 31-34:

⁵¹ Ավելի հանգամանորեն տես *Բ. Հ. Հարությունյան*, Մեծ Հայքի թագավորության հյուսիսարևելյան մարզերի վարչա-քաղաքական կացությունը 387-451 թվականներին: «Բանբեր Երևանի համալսարանի»: Ե., 1976, հմ. 2 (29), էջ 81-82, *նույնի՝* Հայոց արևելից կողմերի վարչական բաժանումն ըստ..., էջ 35:

Խորենացու անմիջական ազդեցության ներքո Ստեփաննոս Տարոնեցին (Ասողիկ) ևս օգտագործում է գավառանվան «Փոքր Սյունիք» ձևը (տես *Սյրեփաննոս Տարոնեցի*, Պատմութիւն Տիեզերեկան: Ս. Պետերբուրգ, 1885, էջ 65):

ցայտուն օրինակներ են նաև Վասպուրականը, Պարսկահայքի «Այլի, որ կոչի Կոտիճան» գավառանունը, և այլն⁵²: «Միսական-ի Կոտակը» (Միսական Ոստան իրանական կրկնանվամբ) ըստ էության Խորենացու երկում հիշատակված Փոքր Սյունիքի պարզ թարգմանությունն է:

Հայկական սկզբնաղբյուրներում հիշատակված են տարածաշրջանի տարբեր տեսակի բնակավայրեր՝ քաղաքներ, գյուղաքաղաքներ, ավաններ, գյուղեր, նաև վանքեր, գետեր և լեռներ, պարզապես՝ տեղավայրեր: Ընդ որում, դրանք հիշատակվում են դեռ վաղ միջնադարից՝ հանդիպելով «Ոսկե դարի» այնպիսի պատմիչների երկերում, ինչպիսիք են Պատմահայր Մովսես Խորենացին, Փավստոս Բուզանդը, Ագաթանգեղոսը, Եղիշեն: Հատկանշական է, որ շատ տեղանուններ շարունակում են հիշատակվել հաջորդ հարյուրամյակներում ևս՝ հասնելով մինչև մեր օրերը (լավագույն օրինակը, թերևս, Ամարասն է, տեղական բարբառով՝ Մարաս):

Մեր ուսումնասիրության խնդրո առարկայի տեսակետից հայ միջնադարյան պատմիչների շարքում բացառիկ տեղ ունի Մովսես Կաղանկատվացին՝ իր նշանավոր «Պատմութիւն Աղուանից աշխարհի»⁵³ աշխատությամբ: Նրան շարունակող Մովսես Դափսուրանցու շնորհիվ պահպանվել են Արցախի և ՈՒտիքի այլևայլ գավառներում հանդիպող յոթ տասնյակից ավելի տեղանուններ (այս թվից դուրս են այն գավառանունները, որոնց մասին արդեն խոսել ենք): Ընդ որում, «Աղվանից պատմությունը» պահպանել է եզակի հիշատակություններ բազմաթիվ տեղանունների մասին՝ ինչպես խոշոր կամ նշանավոր բնակավայրերի (քաղաքներ, բերդեր կամ հոգևոր կենտրոններ), այնպես էլ ավելի փոքր բնակավայրերի (գյուղեր, ավաններ և այլն): Այս տեսանկյունից առանձնակի մեծ հետաքրքրություն

⁵² Տես «Աշխարհացոյց Մովսեսի Խորենացոյ ...», էջ 32:

⁵³ Հայոց արևելից կողմերի (Արցախ և ՈՒտիք) «Աղուանք» անվանումն ունի հնագույն պատմություն, և, ինչպես երևում է Խորենացու երկում գրանցված ավանդագրույցից, դարձյալ ձևավորվել է հայկական միջավայրում (բառացիորեն՝ «արգավանդ դաշտի երկիր»): Ավելի ուշ հենց հայերն էլ այն «տարածել» են Կուրի ձախափնյա տարածքի վրա, որը մույնպես սկսել է կոչվել Աղուանք (Աղվանք), կամ Աղվանից երկիր (ավելի հանգամանորեն տես Բ. Հ. Հարությունյան, Այսպես կոչված Աղվանքի էթնիկ և քաղաքական պատմության մի քանի հարցեր: Մաս առաջին. «Էթնիկ պատմության հարցեր»: «Վեմ» համահայկական հանդես: Ե., 2011, հմ. 2 (34), էջ 38–42: Մաս երկրորդ. «Քաղաքական պատմության հիմնախնդիրները էթնիկ պատկանելության համատեքստում»: «Վեմ», 2011, թիվ 3 (35)):

են ներկայացնում գյուղանունները, որոնց հիման վրա կարելի է ավելի պարզ պատկերացում կազմել տարածաշրջանի ազգային նկարագրի մասին՝ գոնե վաղ միջնադարից (4-5-րդ դարերից) սկսած:

Ստորև ներկայացնում ենք Կաղանկատվացու երկրում հանդիպող այդ տեղանուններից մի քանիսը՝ Հդերկ (Յդերկ, թերևս նախնական բնագրային «յեդերկ»-ից)⁵⁴, ՈՒռեկան⁵⁵, Դիտական⁵⁶, Դարահոջ (նաև՝ Դարահոճ)⁵⁷, Քարուճ («յօթի տեղի»)՝⁵⁸, Կաղանկատուք (սեռ.՝ Կաղանկատուաց, հեղինակի ծննդավայրը)⁵⁹, Բագնաց գիւղ (ուղիղ ձևը՝ Բագինք)⁶⁰, Արածանք (նաև՝ Արածանս, սեռ.՝ Արածանից)⁶¹, Կաղսետ («առողջական վայր»)՝⁶², Կառնակաշ (տարընթերցում՝ Կառնակալ), Հակարի և Տափատ⁶³, Աղուճն (որտեղ 5-րդ դ. վերջին կամ 6-րդ դ. սկզբում Վաչագան Բ Բարեպաշտի նախածեռնությամբ գումարվեց հայտնի եկեղեցական ժողովը)⁶⁴, Կակու⁶⁵, Վեկերտ⁶⁶, Ռուտակ⁶⁷, Տուերակ⁶⁸, Վայունիք (իմա՝ Վայկունիք)⁶⁹,

⁵⁴ Տես Մովսես Կաղանկատուացի, Նշ. աշխ., էջ 280:

⁵⁵ Տես նույն տեղում, էջ 11–12:

⁵⁶ Տես նույն տեղում, էջ 66–67, 133:

⁵⁷ Տես նույն տեղում, էջ 67, 70, 90:

⁵⁸ Տես նույն տեղում, էջ 72–73, 84:

⁵⁹ Տես նույն տեղում, էջ 90, 132–133, 137 («յանդիման գեղջն Սեծի Կողմանն Կաղանկատուաց, որ է ի նմին յՈՒտի գաւառի յորմէ և ես (ընդգծումը մերն է.– Գ. Բ.) ...»:

⁶⁰ Տես նույն տեղում, էջ 100:

⁶¹ Տես նույն տեղում, էջ 70, 72: Կարծում ենք՝ մեկ այլ տեղում Կաղանկատվացու հիշատակած Արածականն է (տես նույն տեղում, էջ 213):

⁶² Տես նույն տեղում, էջ 120–121 [«ի Մխանց (իմա՝ Մուխանք) տոհմին»]: Անվան վերաբերյալ հմմտ. Կաղ+ան-կատուք, Կաղ+արծի (բրբ.՝ Կղարծէ, այժմ՝ ԼՂՀ Մարտունու շրջանում):

⁶³ Տես նույն տեղում, էջ 327: Կառնակաշ, Հակարի և Տափատ բնակավայրերը հիշատակված են Բաբելի (հեղինակի երկրում՝ Բաբան) հրոսակների կողմից Արցախի մի շարք զավառների ավերման կապակցությամբ՝ որպես «ՌՒռեաց» ավաններ:

⁶⁴ Տես նույն տեղում, էջ 89–90, 304:

⁶⁵ Տես նույն տեղում, էջ 312 (Շակաշենում):

⁶⁶ Տես նույն տեղում, էջ 75:

⁶⁷ Տես նույն տեղում, էջ 51: Գյուղանունը որոշակիորեն իրանական ծագում ունի (արսկ.՝ «rūd» - «գետ»): Ըստ այդմ, հայերեն համարժեքը կլինի *Գեդրիկ*:

⁶⁸ Տես նույն տեղում, էջ 213. «Տուերակու տունն»:

⁶⁹ Տես նույն տեղում, էջ 340:

Դաստակերտ⁷⁰ և այլն: Հետաքրքրական է, որ նշված բնակավայրերի մի զգալի մասն այսօր էլ պահպանվել է: Ընդ որում, եթե մի մասը ժամանակի ընթացքում անբնակ է դարձել, ապա գոնե դրանց տեղադրությունը հայտնի է: Այսպես. Հդերկը (Եդերկ) նույնանուն է Գանձասարի Սուրբ Հովհաննես եկեղեցու կառուցման ավարտն ազդարարող արձանագրությունում (1238 թ.) հիշատակվող Եղ[գ]ընգնիի հետ⁷¹: Գյուղանունը պահպանել է Գանձասարից հյուսիս գտնվող փոքր լեռնապարը՝ Հդեգյան ձևով, ընդամին դրա գագաթին 19-րդ դ. վերջին դեռ պահպանվում էր «Հդեգյան նահատակ» ուխտատեղին⁷²: Մեր կարծիքով՝ Հդերկը ժամանակակից ԼԴՀ Մարտակերտի շրջանի Շահմասուր գյուղի պատմական անվանումն է: Ստույգ հայտնի են ՈՒռեկանի (ուշ միջնադարում՝ Հռռեկ) և Դիտականի (նաև՝ Դյութական) գտնվելու վայրերը: Դրանք երկուսն էլ գյուղատեղիներ են ԼԴՀ Մարտակերտի շրջանի Թալիշ (Թարինջ, նաև՝ Թուրանջ) գյուղի մերձակայքում: Ընդ որում, առ այսօր պահպանվել է ՈՒռեկանում վաղ քրիստոնեական շրջանում կառուցված Գլխովանքը (Հռռեկավանք)⁷³: «Քարուեճը» նույնացվում է ԼԴՀ Մարտունու շրջանի Քարահունջ (Քարահունջ) գյուղի հետ⁷⁴: Վերջինիս մոտ էր գտնվում Վեկերտ (Վեհկերտ) բնակավայրը, որը նույնացվում է ժամանակակից Քերթ գյուղի հետ⁷⁵: Կարծում ենք՝

⁷⁰ Տես նույն տեղում, էջ 333–345:

⁷¹ Տես «Դ-ՀՎ», պրակ V, էջ 38:

⁷² Տես *Մակար եպ. Բարխուդարեանց*, Աղուանից երկիր եւ դրացիք: Արցախ, Ե., 1999, էջ 250: Հմմտ. ռուսական 5-վերստանոց քարտեզի Ժ-9-րդ պլանշետը՝ «Хакеранъ»:

⁷³ Տես *Մակար եպ. Բարխուդարեանց*, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 278–279: Հմմտ. «Դ-ՀՎ», պրակ V, էջ 101–102:

⁷⁴ Տես Բ. Ա. *ՈՒլդուրարյան*, Դրվագներ հայոց արևելից կողմանց պատմության (V-VII դդ.): Ե., 1981, էջ 158: Հմմտ. Ս. Թ. *Մկրտչյան*. Историко-архитектурные памятники Нагорного Карабаха. Е., 1989, сс. 121–122: Ա. *Յակոբեան*, Նշ. աշխ., էջ 309: Հովհ. *Կարազյոզյանը* Քարուեճ-Քարահունջը բխեցնում է Ռուսա Ա թագավորի լավ հայտնի «Շովինարի արձանագրությունում» հիշվող Քարուիշ(ա) «երկրանունից» (տես Յ. *Կարազեոզեան*, Նշ. աշխ., էջ 155–156): Կաղանկատվացու երկի որոշ ձեռագրական ընդօրինակություններում հանդիպում է «Քարուեճ-ա» տարընթերցումը, որից, իրոք, կարող էր առաջանալ ժամանակակից գյուղանունը (Քարունեճ>Քարահունջ) (տես *Անանուն*, Կեանք եւ վարք Վաչագանայ արքայի [Վաչագանի վեպ]: «Մատենագիրք Հայոց», հ. Գ (Չ դար): Անթիլիաս-Լիբանան, 2004, էջ 98):

⁷⁵ Տես Ա. *Յակոբեան*, Նշ. աշխ., էջ 309: Գյուղանվան քյուրքական ձևը՝ Guzumkänd, որ հայերեն նշանակում է Գառնակերտ, ևս ենթադրել է տալիս, որ այն

Կաղանկատվացու նկարագրությունը հնարավորություն է տալիս Կաղանկատուքը տեղադրելու Արցախի և ՈՒտիքի սահմանագլխին՝ Տրտու-Թարթառ գետի միջին ավազանում և, նույնացնել ժամանակակից Թարթառ (Միր Բաշիր) քաղաքի հետ՝ պատմական Պարտավից արևմուտք⁷⁶: Ենթադրվում է, որ Բագնաց գիւղը (Բագինք) նույնական է Գոլաշտյան (Գյուլիստան) կամ ժամանակակից Ինջա գետի ստորին ավազանում գտնվող երբեմնի հայաբնակ Բեգում-Սարով գյուղի հետ⁷⁷: Արաժանք (Արաժական) բնակավայրը Սարգիս Ջալալյանցի կարծիքով Արցախի Վարանդա գավառի Աշան գյուղն է⁷⁸, որն այժմ էլ գոյություն ունի (ԼՂՀ Մարտունու շրջանում): Լավ հայտնի է նաև Դաստակերտի (այժմ՝ ԼՂՀ Մարտակերտի շրջանի Դաստակիր, կամ Դաստագյուլ, անբնակ գյուղ) և Վալկունիքի տեղադրությունը: Ի դեպ, վերջինս զարգացած միջնադարում մոտակա ջերմուկներից ստացել էր Ջերմաջուր⁷⁹ անունը, ինչը և շարունակում է կրել առ այսօր (ԼՂՀ Շահումյանի շրջանում):

Մեծաթիվ են նաև տարածաշրջանի քաղաքային բնակավայրերի հիշատակությունները: Կաղանկատվացու երկում հատկապես հաճախակի է հանդիպում 5-րդ դարի վերջին Հայոց արևելից կողմերի վարչաքաղաքական կենտրոնի վերածված Պարտավը (Աղվանից մարզպանի նստավայրը), որը, ինչպես նշել ենք, հիշատակված էր դեռ «Աշխարհացույց»-ում⁸⁰: Պատմիչի վկայությամբ՝ այն կառուցապատել էր Հայոց արևելից կողմերի

ծագում է հայկական տարբերակի հնարավոր թարգմանությունից՝ վերջամասի պահպանմամբ («կերտ» - «Բերք».- Գ. Բ.):

⁷⁶ Տես *Մովսէս Կաղանկարուացի*, Նշ. աշխ., էջ 132–133. «... եհաս զօրն Հողվմայեցոց (իմա՝ բյուզանդացիների.- Գ. Բ.) անթիւ բազմութիւն... և բանակեցան յՈՒտի գաւառի առ հեղեղատովն, որ ի մէջ սահմանացն գեղջն Կաղանկատուաց... Եւ անտի չուեալ բանակեցան առ հեղեղատովն Տրտուայ՝ մօտ ի գիւղն Դիւտական»:

⁷⁷ Տես *Սարգսյան*, Արցախ, Պատմա-աշխարհագրական ճշգրտումներ: Ե., 1996, էջ 9–10:

⁷⁸ Տես *Ս. Ջալալիանց*, Ճանապարհորդություն ի Մեծն Հայաստան, մասն Բ: Տփղիս, 1858, էջ 339–340:

⁷⁹ Տես «ԴՀՎ», պրակ V, էջ 219. «Ես Կչիկ տվի իմ Ջերմաջրին ջաղացն Սր. Սարգիս»: Արձանագրությունը պահպանվել էր Վալկունիքի զարգացած միջնադարի կենտրոն Ծար (Ձար) գյուղի Մուրբ Սարգիս եկեղեցու պատին:

⁸⁰ *Փավստոս Բուզանդ*, Նշ. աշխ., էջ 322: Հմմտ. Հայոց արևելից կողմերի («Աղվանք») նկարագրության մեջ Մովսէս Կաղանկատվացու հետևյալ նշումը. «Եւ մայրաքաղաք ունի զմեծն Պարտաւ» (տես *Մովսէս Կաղանկարուացի*, Նշ. աշխ., էջ 9):

կառավարիչ Վաչե Բ-ն՝ արքայից արքա Պերոզ Սասանյանի (459-484) հրահանգով և վերանվանել Պերոզապատ⁸¹: Կարճ ժամանակամիջոցում վերածվելով կարևոր վարչական կենտրոնի՝ Պարտավը դարձավ հայ հոգևոր կյանքի խոշոր վայրերից մեկը: Այստեղ հիշատակվում են հայոց Սուրբ Գրիգոր «մեծ» եկեղեցին և Սուրբ Աստվածածին վանքը: Վերջինս կառուցվել էր դեռ 4-րդ դարի 1-ին կեսին (կրկնակը գտնվում էր Երուսաղեմում)⁸²: 6-րդ դ. 2-րդ կեսից Պարտավը շուրջ 2,5 դար եղել է այսպես կոչված Աղվանից կաթողիկոսության նստավայր⁸³: Մյուս քաղաքային բնակավայրերից Մովսես Կաղանկատվացին նշում է Ամարասը («գիտաքաղաք»)⁸⁴, Միհրավանը⁸⁵, Սահառը (Սուհառ)⁸⁶: Տարածաշրջանի հնագույն Խաղխաղ քաղաքը (որպես կանոն նույնացվում է ժամանակակից Ղազախի հետ) հիշատակում է Ագաթանգեղոսը 2-րդ դարի երկրորդ կեսի իրադարձությունների կապակցությամբ՝ որպես Արշակունի արքաների «ձմեռոց»⁸⁷: Նույն բնակավայրը հիշատակում է նաև Եղիշեն՝ Վարդանանց պատերազմի

⁸¹ Տես *Մովսես Կաղանկատվացի*, Նշ. աշխ., էջ 42: Հեղինակը քաղաքն իր գուգահեռ անուններով հիշատակում է նաև այլ տեղերում. էջ 9, 89, 90, 118-119, 132, 135-136, 159, 171, 177, 222, 265 և այլն: Հարկ է նշել, որ Մովսես Կաղանկատվացու երկում հանդիպում է քաղաքի երկրորդ անվանածնը՝ Պերոզ (Պերոժ)-Կավատը, որը կապվում է Պերոզի հաջորդ Կավատ Ա-ի հետ (488-496, 498/499-531) (տես նույն տեղում, էջ 178, 180, 187, 190, 212-213):

⁸² Տես նույն տեղում, էջ 285, 319:

⁸³ Տես նույն տեղում, էջ 342-343:

⁸⁴ Տես նույն տեղում, էջ 35, 39, 54, 71-72, 75, 77: Այս բնակավայրը գոյատևել է մինչև 16-րդ դ.: Ավերակները պահպանվել էին ընդհուպ մինչև 19-րդ դ. վերջը (տես *Մակար Բարխուդարեանց*, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 219, *Շ. Տ. Մկրտչյան*, Նշ. աշխ., էջ 121):

⁸⁵ Տես *Մովսես Կաղանկատվացի*, Նշ. աշխ., էջ 171: Կառուցել է 7-րդ դարում Գարդմանոմ ապաստանած պարսից իշխան Միհրանը: Նույնական է Շամքոր գետի աջակողմյան Ամիրվար վտակի (հնում՝ Գարդման) ափին գտնվող Ամիրվար բնակավայրին, որի ժամանակակից անվանումը մենք կապում ենք Միհրավանի հետ:

⁸⁶ Տես նույն տեղում, էջ 10, 70: Գտնվել է ՈՒՌՏիում («յՈՒՒՏի գաւառ»): Թեև բնակավայրի ստույգ տեղադրությունը հայտնի չէ, սակայն կարծում ենք, որ այս տեղանունը որոշակի կապ ունի Կուրի աջափնյակում բավական տարածված Սարով (Սարավ) գյուղանվան հետ:

⁸⁷ Տես *Ագաթանգեղոս*, Հայոց պատմություն (գրաբար և աշխարհաբար գուգահեռ տեքստերով): Ե., 1993, էջ 30. «... յՈՒՒՏի գաւառի (իմս՝ աշխարհի.- Գ. Բ.) ի Խաղխաղ քաղաքի, ի ձմեռոցս արքայութեանն Հայոց» (Խոսորով Բ արքայի և Անակ Պարթևի հանդիպման նկարագրության մեջ):

առիթով: Ճիշտ է, այստեղ Խաղխաղը նշված է որպես «Աղուանից» արքաների ձմեռոց, սակայն դա պետք է դիտել որպես ավելի ուշ շրջանի ընդմիջարկություն՝ պայմանավորված պարսից արքունիքի կողմից 451 թ. ենթակա Աղվանից թագավորությանը (հետագայում՝ մարգապանություն) Հայոց արևելից կողմերի ամբողջ տարածքի կցմամբ⁸⁸:

Ընդհանրապես, հենց հայկական սկզբնաղբյուրներն են առաջինը հիշատակել տարածաշրջանի խոշոր կենտրոնները: Դրանցից են Շամքորը և Գանձակը: 13-րդ դ. պատմիչ Կիրակոս Գանձակեցին Շամքորի հիմնումը վերագրում է «Աղվանից» կաթողիկոս Վիրոյին (595–625)⁸⁹: Գանձակը, ըստ «Աղվանից աշխարհի պատմության», կառուցվել է 9-րդ դ. 1-ին կեսին՝ արաբական տիրապետության վերջին⁹⁰: Կարճ ժամանակամիջոցում նշված քաղաքները դարձան Հայոց արևելից կողմերի նշանավոր տնտեսական, մշակութային և կրոնական կենտրոններ, ավելին. Շամքորը մաս խոշոր եպիսկոպոսանիստ հոգևոր կենտրոն էր⁹¹:

Ընդ որում, թեև Գանձակ տեղանունն իրանական ծագում ունի (պրս.՝ Gānjā)⁹², սակայն լայնորեն տարածված էր Հայաստանի մի շարք գավառներում, ինչպես, օրինակ, Խաչենագետի աջակողմյան վտակներից մեկը

⁸⁸ Տես *Եղիշե*, Վարդանի և Հայոց պատերազմի մասին (գրաբար և աշխարհաբար զուգահեռ տեքստերով): Ե., 1989, էջ 150: Եղիշեին գրեթե նույնությամբ կրկնել է Մովսես Կաղանկատվացին (տես *Մովսէս Կաղանկատվացի*, Նշ. աշխ., էջ 99. «... յայսկոյս Կուրական գետոյն՝ տարածեալ յՈՒԽիացոց գաւառն... հանդէպ Խաղխաղ քաղաքի, որ ձմերոց էր թագաւորացն Աղուանից...»): «Աղուանից» թագավորներ ասելով պատմիչները մկատի են ունեցել Արցախի հայ «արքայիկներին»՝ Առանշահիկներին:

⁸⁹ Տես *Կիրակոս Գանձակեցի*, Պատմություն Հայոց, աշխատասիրությամբ Կ. Մելիք-Օհանջանյանի: Ե., 1961, էջ 195: Շամքորը հիշված է մաս և Նովհաննես Դրասխանակերտցու երկում՝ կապված Սմբատ Ա Բագրատունու (890–914) գործունեության հետ (տես *Հովհաննես կաթողիկոս Դրասխանակերտցի*, Հայոց պատմություն (գրաբար և աշխարհաբար զուգահեռ տեքստերով): Ե., 1996, էջ 164):

⁹⁰ Տես *Մովսէս Կաղանկատվացի*, Նշ. աշխ., էջ 331:

⁹¹ Տես *Կիրակոս Գանձակեցի*, Նշ. աշխ., էջ 153. «արքեպիսկոպոս Յովհաննես Տուեցոյ քաղաքին Շամքորոյ...»: Հմմտ. *Միսիթար Գոշի* «Աղվանից պատմության» հավելագրությունում (կից նշանավոր Դատաստանագրքին). «Ստեփաննոս եպիսկոպոս Կողբա գաւառին եւ քաղաքին Շամքորոյ» (տես *Մովսէս Կաղանկատվացի*, Նշ. աշխ., էջ 351): Միջնադարյան Շամքորի և Գանձակի մասին ավելի հանգամանորեն տես *Ս. Կարապետյան*, Հյուսիսային Արցախ: Ե., 2004, էջ 23–29, 505–507:

⁹² Տես *Հր. Աճառյան*, Հայերեն արմատական բառարան, հ. 1: Ե., 1971, էջ 517:

(Գանձասարից դեպի հարավ-արևմուտք)⁹³, պատմական Գեղարքունիքի (հնագույն Գանձաղանտառ, այժմ՝ ՀՀ Գեղարքունիքի մարզի Գանձակ գյուղը): Գանձակ անունով գյուղեր էին հանդիպում նաև Վանա լճի շրջակա որոշ գավառներում (Արճեշ, Արծկե, Ուշտունիք-Գավաշ):

Հայ պատմիչները «չեն մոռացել» հիշատակություններ թողնել նաև Տիգրան Բ Մեծ (Ք. ա. 95–55 թթ.) արքայից արքայի կողմից տարածաշրջանում կառուցված Տիգրանակերտ բնակավայրերի մասին: Դրանցից մեկը, որը գտնվում էր Խաչենագետի միջին ավազանում՝ ժամանակակից Աղդամից շուրջ 7,5 կմ դեպի հյուսիս, որպես ավան հիշատակում է Սեբեոսը 7-րդ դ. պարսկա-բյուզանդական պատերազմների կապակցությամբ⁹⁴: Ի դեպ, նույն բնակավայրը հանդիպում է նաև Մովսես Կաղանկատվացու աշխատությունում՝ արդեն բարբառային Տկռակերտ ձևով⁹⁵: Նույն հեղինակը հիշատակում է ևս մի Տիգրանակերտ, այս անգամ՝ արդեն ՌԻտիքի տարածքում (Գարդման)՝ «միս Տիգրանակերտ» անունով⁹⁶: Նորագույն ուսումնա-

⁹³ Տես ռուսական 5-վերստանոց քարտեզի Ժ-9-րդ պլանշետը:

⁹⁴ Տես «Պատմութիւն Սեբեոսի», աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի: Ե., 1979, էջ 125: Բնակավայրի հազվագյուտ հիշատակում կա Խաչենի Կոշիկ անապատի մեծ եկեղեցու ավերակներում հայտնաբերված մի քարաբեկորի վրա (եմթաղրաբար՝ 13–14-րդ դդ.). «Ես Ակոր երկրէն... [Տ]իգրանակերտու...» («Դ-ՀՎ», պրակ V, էջ 30): Կան տվյալներ, որ անգամ 20-րդ դարում պահպանվել էին հայերի շրջանում Թգրանակերտ, իսկ աղբրեջանցիների միջավայրում՝ Թառնակերտ անվանումները (տես նույն տեղում, էջ 135):

⁹⁵ Տես Մովսես Կաղանկատվացի, Նշ. աշխ., էջ 300. «Պետրոս՝ Տկռակերտոյ վանական»: Ի դեպ, առանձին ձեռագրերում հանդիպում են Տգռակերտ-ոյ (Տգռնակերտ-ոյ) և Տկռնակերտ-ոյ տարբերակները (տես նույն տեղում): Տիգրանակերտի հնավայրում (նոր ժամանակներում այն հնչում էր Թառնագյուտ-Թառնատոտ) 2005 թվականից սկսած ընթանում են լայնամասշտաբ պեղումներ հնագետ, պատմական գիտությունների դոկտոր Համլետ Պետրոսյանի ղեկավարությամբ (այդ մասին տես՝ Հ. Հակոբյան, Արցախի Տիգրանակերտ քաղաքի պեղումների մախնական արդյունքները: «Երևանի «Հրայր Աճառյան համալսարան». գիտահետազոտական աշխատանքի ուղեծրում», դասախոսի գիտական զեկուցումների ժողովածու՝ մվիրված համալսարանի 15-ամյակին: Ե., 2007, էջ 107–112, Հ. Պետրոսյան, Հ. Հակոբյան, Ժ. Խաչատրյան, Ա. Փիլիպոսյան, Վ. Սաֆարյան, Լ. Կիրակոսյան, Արցախի Տիգրանակերտի և շրջակայքի հնագիտական հետազոտության առաջին արդյունքները: «Հին Հայաստանի մշակույթը», XIV, Նյութեր հանրապետական գիտական նստաշրջանի: Ե., 2008, էջ 187–199):

⁹⁶ Տես «Պատմութիւն Սեբեոսի», էջ 125:

սիրությունների համաձայն՝ այն գտնվում էր Շամքոր գետի միջին ավազանում՝ լքյալ Բարսում գյուղից շուրջ 1 կմ դեպի հարավ, և մինչև 1988 թ. տեղի հայերի կողմից հայտնի էր «Տկռուկ» անունով⁹⁷:

**ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԸ ԶԱՐԳԱՅԱԾ ԱՎԱՏԱՏԻՐՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿԱՇՐՉԱՆԻ ՍԿԶԲՆԱԳԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ**

Անփոխարինելի են հայ պատմիչների հաղորդած տեղեկությունները Հայոց արևելից կողմերի բերդերի և վանական համալիրների վերաբերյալ : Գաղտնիք չէ, որ լեռնային, անտառախիտ տարածք ունեցող Արցախն ու Գարդմանը կարևոր դեր ունեին Հայոց Միջնաշխարհի պաշտպանության գործում: Ուստի պատահական չեն պաշտպանական կառույցների այն մեծ թվով հիշատակումները, որ հանդիպում են հայկական (մասնաշաղկապ) սկզբնաղբյուրներում: Ընդ որում, պատմիչների տվյալները նկատելիորեն լրացնում են հայերեն վիմագիր արձանագրությունների հաղորդումները: Դրանում, անշուշտ, որոշակի դեր ունի նաև այն հանգամանքը, որ զարգացած ավատատիրության շրջանում բերդերը, որպես կանոն, եղել են վարչական կենտրոններ և ավելի հաճախ են գրանցվել սկզբնաղբյուրներում: Ստորև ընթերցողի ուշադրության ենք ներկայացնում նշված երկրամասերի տարածքում 7–16-րդ դդ. աղբյուրներում հանդիպող բերդանունները⁹⁸: Դրանք նպատակահարմար ենք համարել խմբավորելու ըստ զարգացած ավատատիրության ժամանակաշրջանում Արցախի և հյուսիսարևմտյան Ուտիքի տարածքներում ձևավորված հետևյալ 3 խոշոր իշխանությունների՝ 1) Փռախոս-Գարդման (ներառյալ՝ Կողթը), 2) Խաչեն (Վե-

⁹⁷ Տես *Ս. Կարապետյան*, Հյուսիսային Արցախ, էջ 474:

⁹⁸ Օգտվել ենք հետևյալ սկզբնաղբյուրներից. *Մովսես Կաղանկարյանցի*, Նշաշխ., էջ 157, 172, 297, 325, 327, 340, 345, 351–355 (մասնաշաղկապ «Գատատանագրքի» վերջում գտնվող հիշատակագրությունը, որը վերցրել ենք Կաղանկարյանցի գրքից), *Թովմա Արծրունի* և *Անանուն*, Պատմության Արծրունյաց տան (գրաբար և աշխարհաբար զուգահեռ տեքստերով): Ե., 1985, էջ 278, 290, «Սամուելի Անեցոյ Հուարմունքի զրոց պատմագրաց»: Վարդաշապատ-Սբ. Էջմիածին, 1893, էջ 117, Կիրակոս Գանձակեցի, էջ 655, 156, 163, 194, 243, 267, 269, 313, 322, 359, «Հաւարումն Պատմութեան Վարդանայ վարդապետի լուսաբանեալ» (Վենետիկում 1862 թ. հրատարակված երկի վերատպությունը): Ե., 2001, էջ 105, 140, 142–143, 146, *Ս. Քամայան*, «Աղվանից աշխարհի» Թաղէ կամ Խորթա վանքի կալվածքների վերաբերյալ մի դարավա-կալվածագիր: «Կովկաս և Բյուզանդիա», պրակ 2: Ե., 1980, էջ 153–154: «Գ-ՀՎ», պրակ V, էջ 121, 129–130, 198–200, 216, 221–222, 225:

րին, կամ Ճարա երկիր, Ներքին, կամ Բուն Խաչեն)⁹⁹, 3) Դիզակ (Հարավային Արցախ)¹⁰⁰.

I. Փառիսու-Գարդման (17–18-րդ դդ.՝ Չակամա երկիր). 1) Գետաբակք (Գետաբակս)¹⁰¹, 2) Մածնաբերդ (Մլզնաբերդ), 3) Չարեք («ողեակն Չարեք») ¹⁰², 4) Գարդման¹⁰³, 5) Մայրեաց ջուրք, 6) Շամիրամի բերդ, 7) Շօք («ՉՇօք»), 8) Շաղուաղ (Շաշուաղ), 9) Վարդանաշատ¹⁰⁴:

II. Խաչեն (Միջնարցախ). 1) Չարաբերդ, կամ Ճարաբերդ (Ջրաբերդ), 2) Ականա, 3) Կարկառ, 4) Հանդաբերդ (Դաշտաբերդ)¹⁰⁵, 5) Խաչենի բերդ, կամ Խոխանաբերդ¹⁰⁶, 6) Դեղն, 7) Ծիրանաքար, 8) Հաթերք, 9) Հավախա-

⁹⁹ Մեր կարծիքով՝ Խաչենի հիմքում Մ. Կաղանկատվացու երկուն հանդիպող Միջնարցախ վարչամիավորն է (տես *Մովսես Կաղանկապուռացի*, Նշ. աշխ., էջ 234. «Միջնարցախն գառառ»):

¹⁰⁰ Դիզակ գավառանունը կապված է Հարավային Արցախի Դիզափայտ լեռնագագաթի հետ (2480 մ), որի մասին առաջին հիշատակությանը հանդիպում ենք Կաղանկատվացու երկուն (էջ 119): Դիզակը հիշատակված է նշանավոր Գտշավանք մենաստանի վերակառուցման վերաբերյալ 1248 թ. արձանագրությունում՝ «Դիզակս Բեյուկան իր կերովն» բառակապակցության մեջ (տես «ԴՀՎ», պրակ V, էջ 183): Հմմտ. «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», քննական հրատարակություն Հայկ Պէպերեանի: Փարիզ, 1960, էջ 11. «Դիզափայտն Դիզայ է եւ Վարանդայ (ընդգծումը մերն է.՝ Գ. Բ.):

¹⁰¹ Կիրակոս Գանձակեցին Գետաբակքը հիշատակում է 7-րդ դարի դեպքերի կապակցությամբ, երբ այնտեղ, խուսափելով Եզր կաթողիկոսի հալածանքներից, հաստատվել էր նշանավոր եկեղեցական գործիչ, աստվածաբան Հովհան Մայրավանեցին (տես *Կիրակոս Գանձակեցի*, Նշ. աշխ., էջ 243):

¹⁰² Տես *Մովսես Կաղանկապուռացի*, Նշ. աշխ., էջ 355 (Մխիթար Գոշի հիշատակագրությունը):

¹⁰³ Ջարգացած միջնադարում՝ Քարթման կամ Քարթմանիկ (տես «Աշխարհացոյց Վարդանայ վարդապետի», էջ 12): Ըստ Մ. Կաղանկատվացու, կառուցել է Վարդան Միրանյանը (տես *Մովսես Կաղանկապուռացի*, Նշ. աշխ., էջ 172): 19-րդ դ. նույնացվում էր Ամրվար գյուղի հետ:

¹⁰⁴ Մեր կարծիքով՝ Սլավյանկա կամ Վարդանապատ գյուղն է (այժմ՝ հարևան հանրապետության արևմտյան սահմանագլխին) (տես *Ե. Լալայան*, Երկեր, հ. 2: Ե., 1988, էջ 326):

¹⁰⁵ Դոփյանների 1581 թ. և 1596 թ. կալվածագրերում (սիկե, դարալա) Վերին Խաչենի (Ծարա երկիր) բերդերի շարքում Հանդաբերդի փոխարեն նշված է Դաշտաբերդը (նաև՝ «բերք Դաշտայ»), ինչը նույն տեղանվան իմաստավորումն է («դաշտ»=«հանդ») (տես *Ս. Քանայան*, Նշ. աշխ., էջ 153–154):

¹⁰⁶ Առաջին ձևով ամրոցը հիշվում է Կաղանկատվացու երկուն (էջ 340): Մյուս

ղաց (Հավքախաղաց), 10) Հակառակաբերդ, 11) Բերդակուր (Բերդակ), կամ Կաթողիկոսի քար¹⁰⁷, 12) Հերքան բերդ (Հերգ)¹⁰⁸, 13) Շիկաքար (Քարագլուխ), 14) Չիջաբերդ, 15) Բերդաքար:

III. Դիզակ (Հարավային Արցախ). 1) Քթիշ (Գտչաբերդ (Տողաբերդ)), 2) Գորուզ(ու) բերդ:

Տվյալ ցուցակում (26 տեղանուն) ընդգրկված են Արցախի և Գարդմանի առավել խոշոր իշխանանիստ բերդերը: Իրականում դրանց թիվն անհամեմատ ավելի մեծ էր, և, Ս. Սարգսյանի տվյալներով, հասել է նվազագույնը յոթ տասնյակի: Համեմատության համար նշենք, որ Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը, որը տարածքով առնվազն 3 անգամ գերազանցում էր Արցախն ու Գարդման-Փառշխոսը միասին վերցրած, իր անկման նախօրյակին (1021 թ.) ուներ ընդամենը 72 բերդ¹⁰⁹: Ընդ որում, չի կարելի մոռանալ, որ հզոր միջնաբերդեր են ունեցել նաև տարածաշրջանի խոշոր քաղաքային բնակավայրերը՝ Շամքորը, Պարտավը, Գանձակը,

հեղինակներն այն գիտեն արդեն Խոխանաբերդ անվանումով (տես *Կիրակոս Գանձակեցի*, Նշ. աշխ., էջ 270. «Խօխանաբերդ», էջ 313. «Խոխախանաբերդ»): Մխիթար Գոշի երկում հանդիպում է «Խառախան բերդ» ձևով (որտեղից էլ «Խօխանաբերդ» (տես *Մովսէս Կաղանկապուտացի*, Նշ. աշխ., էջ 354): ՌՆշագրավ է, որ Կիրակոս Գանձակեցին այս բերդանունը բխեցնում է պարսկերենից («ըստ բարբառոյն պարսից») (տես *Կիրակոս Գանձակեցի*, Նշ. աշխ., էջ 268): Հովհ. Կարազոյգյանի ստուգաբանությամբ, Խոխանաբերդ տեղանունը կապված է վանյան սեպագրերում հիշվող «ՌԻխունե» երկրանվան հետ (տես *Յ. Կարազինգեան*, Նշ. աշխ., էջ 138–139):

¹⁰⁷ Բերդակուրը, որի ավերակները պահպանվել են Տրտու–Թարթառ գետի աջ ափին՝ Տոնաշեն գյուղի դիմաց (այժմ՝ ԼԳՀ Մարտակերտի շրջանում), եղել է «Աղվանից» կաթողիկոսների ամառանոցը («հովոցաց տեղիք»), որը Հովհաննես Գ կաթողիկոսը (799–824) դարձրեց կաթողիկոսանիստ (տես *Մովսէս Կաղանկապուտացի*, Նշ. աշխ., էջ 345): Այստեղից էլ բերդի երկրորդ անվանումը, որը հանդիպում ենք Մխիթար Գոշի հավելագրությունում (տես նույն տեղում, էջ 351, 353): Ժողովուրդն այն կոչում է «Կթղուկոսարան» (տես *Մակար Կապ. Բարխուդարեանց*, Աղուանից երկիր են դրացիք, էջ 276):

¹⁰⁸ Հերգ, կամ Հերգա, գավառի կենտրոնն էր: Ըստ 1417 թ. գրված մի Ավետարանի հիշատակարանի՝ այն ընդգրկել է ԼԳՀ Շահումյանի շրջանը, որն այժմ բռնազավթել է ադրբեջանական բանակը (տես «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն առաջին (1401–1450): Ե., 1955, էջ 205): Ըստ այդմ, բերդանունը որոշակի կապ ունի հայկական Էրբաջ (Էրբեջ) գյուղանվան հետ:

¹⁰⁹ Տես *Մայրթէս Ռիշապեցի*, Ժամանակագրություն (գրաբար և աշխարհաբար զուգահեռ տեքստերով): Ե., 1991, էջ 56: Հմմտ. «Ցուցակ հայերեն ձեռագրաց Մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա», կազմեց Հ. Յակոբոս վ. Տաշեան Մխիթարեան ուխտէն: Վիեննա, 1895, էջ 100:

Փառհաստը, Տիգրանակերտը¹¹⁰: Ավելի փոքր բերդակներն ու պաշտպանական բնույթի այլ կառույցներ, որոնց մասին հիշատակություններ չկան, այսօր էլ հանդիպում են Արցախի և ընդհանրապես Հայոց արևելից կողմերի ամբողջ տարածքում¹¹¹: Սակայն նույնիսկ նշված սահմանափակ թվով անվանումները՝ իրենց ինքնատիպությամբ և անկրկնելիությամբ հանդերձ, լիովին ներգրվում են Հայաստանի տեղանունության համակարգում՝ որպես դրա անքակտելի մասը: Այսպիսի տեղանուններ կարող էին ձևավորվել միայն ու միայն հայաբնակ և հայալեզու միջավայրում:

Հայկական բնակավայրերի շարքում իրենց ուրույն տեղն են զբաղեցնում հոգևոր հաստատությունները: Եթե հեթանոսական ժամանակաշրջանից մեզ քիչ բան է հասել, ապա նույնը չի կարելի ասել քրիստոնեական սրբավայրերի մասին (վանքեր, մենաստաններ): Հայկական մատենագրության էջերում դրանք պատկառելի թիվ են կազմում: Այս շարքում ևս Արցախն ու ՌԻտիքը գրավում են իրենց պատվավոր տեղը: Հայաստանում քրիստոնեության տարածման հենց սկզբից Հայոց արևելից կողմերում ստեղծվել են նոր ուսմունքի առաջին սրբավայրերն ու աղոթատեղիները: Այդ մասին ուշագրավ տեղեկություններ է պարունակում Մովսես Կաղանկատվացու երկը, որտեղ նկարագրված են 1-ին–2-րդ դդ. Սուրբ Թադևոս առաքյալի աշակերտ Սուրբ Եղիշեի (Եղիշե Առաքյալ) քարոզչական գործունեությունը և ՌԻտիքի Հոմենք վայրում նահատակությունը¹¹²: Հենց Սուրբ Եղիշեի անվան հետ էլ կապված է տարածաշրջանում առաջին եկեղեցիների ու վանքերի հիմնարկությունը:

Քրիստոնեական սրբավայրերի կառուցումը շարունակվեց նաև հետա-

¹¹⁰ Տես Մ. Կարասպետյան, Հայ մշակույթի հուշարձանները Խորհրդային Ադրբեջանին բռնակցված շրջաններում: Ե., 1999, էջ 217–221, *նույնի*՝ Հյուսիսային Արցախ, էջ 34, 127–128, 509:

¹¹¹ Պաշտպանական կառույցների հարուստ ցանցով աչքի է ընկել նաև հարևան Սյունիքը: Ստեփանոս Օրբելյանի տվյալներով նրա միայն հարավային հատվածը կազմող (ըստ Բ. Հարությունյանի հաշվարկների՝ շուրջ 5500 կմ²) Բաղաց, կամ Կապանի, թագավորությունը 11-րդ դ. սկզբին ուներ 43 բերդ ու ամրոց (12-ը՝ նշանավոր) (տես Սյրեփաննոս Օրբելյան, Պատմութիւն մահանգին Սիսական: Թիֆլիս, 1910, էջ 335 [հմմտ. Ղ. Ալիշան, Սիսական: Տեղագրութիւն Սիւնեաց աշխարհի: Վենետիկ-Սբ. Ղազար, 1893, էջ 274 (Երևանում 2009 թ. լուսապատճենված վերահրատարակություն)): Իսկ աշխարհացույցյան Սյունիքում (ըստ Մ. Երեմյանի՝ ավելի քան 15000 կմ²) Օրբելյանը հիշատակում է 24 խոշոր բերդ (տես Սյրեփաննոս Օրբելյան, Նշ. աշխ., էջ 13–14):

¹¹² Տես Մովսես Կաղանկատուացի, Նշ. աշխ., էջ 11:

գալում և հատկապես լայն թափ ստացավ 4-րդ դ. սկզբին՝ Մեծ Հայքում քրիստոնեության՝ որպես պետական կրոն հռչակումից հետո: Տրդատ Գ Մեծի թագավորության (298–330) առաջին տարիներին Արցախի և ՌՒտիքի տարածքում գոյություն ուներ վանքերի և մենաստանների բավական խիտ ցանց¹¹³ (ի դեպ, նույնն էր ամբողջ Հայոց թագավորությունում): Սա արձանագրված է մի կարևոր և եզակի փաստաթղթում, որը 6-րդ դ. վերջին կազմել է հայ նշանավոր ճանապարհորդ Անաստաս վարդապետը: Դա Հայոց արքայի և նախարարների ջանքերով Երուսաղեմում կառուցված թվով 70 հայկական վանքերի կրկնակների ընդհանուր ցուցակն է¹¹⁴: Կաղանկատվացին, դրանցից քաղվածաբար դուրս բերելով, իր գործում զետեղել է Արցախի և ՌՒտիքի 10 վանքեր, որոնցից երեքի անվանումները ժամանակի ընթացքում մոռացվել էին¹¹⁵: Անվանապես հիշվում են հետևյալ սրբավայրերը (փակագծերում տրված են Անաստաս վարդապետի ցուցակում հանդիպող անվանումները). Պանդավանք (Սուրբ Կարապետ)¹¹⁶, Սրվովանք («Սըժայ վանք»), Պարտավի Սուրբ Աստվածածին («Բատին վանք»), Կաղանկատվաց վանք («Կաղանդուաց վանք»), Արցախի Սուրբ Աստվածածին («Արցախայ վանք»), Առավելնից վանք, Ամարասի Սուրբ

¹¹³ Պ. Չորանյան, *Անաստաս վարդապետի Հերասյոյսեցու* «Վասն վանորեից, որ յԵրուսաղէմ» երկը և նրա պատմական նշանակությունը: «Հայաստանը և Քրիստոնյա Արևելքը», Ե., 2000, էջ 347–355, *նույնի*՝ Անաստաս վարդապետի կազմած Երուսաղեմի հայկական վանքերի Ցուցակի ժամանակի հարցի շուրջ: «Պատմաբանասիրական հանդես», 2001, թիվ 1:

¹¹⁴ Տես Ղ. Ալիշան, Հայապատում, մասն Բ: Վենետիկ, 1901, էջ 227–229 («Անաստաս վարդապետի վասն վանորեից Հայոց»):

¹¹⁵ Տես Մովսէս Կաղանկատուացի, Նշ. աշխ., էջ 285–286: Հեղինակի երկում այդ գլուխը (ԾԲ, հատոր Բ) ունի հետևյալ խորագիրը. «Անուանք վանորայիցն, որ յԵրուսաղէմ են շինեալ յԱղուանից անուն (իմա՝ Հայոց արևելից կողմերի.– Գ. Բ.), զոր ի թղթոց երանելոյն Անաստասայ առ Վահան Մամիկոնեան առեալ ուսաք, այս են»: Որոշ ընդօրինակություններում որպես պատվիրատու նշվում է «բարեպաշտ» իշխան Համազասպ Կամսարական Պահլավունին (այդ մասին տես Հ. Անասյան, Հայկական մատենագիտություն, Ե-ԺԸ դդ., հ. Ա: Ե., 1959, էջ 825/826–827/828):

¹¹⁶ Ամենայն հավանականությամբ՝ սա Հյուսիսային Արցախի նշանավոր Գետաշեն ավանից դեպի արևմուտք վեր բարձրացող համանուն լեռան գագաթին գտնվող Սուրբ Պանդապետնի (Պանդալիոն, Պանտելեյմոն) մատուռն է: Ի դեպ, Վաչագան Բարեպաշտն իր «արքունի» Դյուտական ավանում ևս կառուցել էր Սուրբ Պանդապետնի (Պանտապետն) անունը կրող մատուռը (տես Մովսէս Կաղանկատուացի, Նշ. աշխ., էջ 66–67):

Գրիգոր («Սուրբ Գրիգոր Ամարասայ վանքն»): Կարծում ենք՝ այս ցանկը մեկնաբանությունների կարիք չունի: Այստեղ գրանցված են տարածաշրջանի ինչպես առավել հնագույն հայկական սրբավայրերը, այնպես էլ պարզորոշ երևում է այն էթնիկական միջավայրը, որտեղ դրանք գործել են:

Արցախի և ՌՒՖիքի հայոց վանքերի աշխարհագրության համար բացառիկ կարևորություն ունեն մի շարք եկեղեցական ժողովների նյութերը՝ վանքերի կամ միաբանությունների անվանումների մանրամասն նշումով: Այս առումով հատկապես արժեքավոր են մեր կողմից արդեն հիշատակված Պարտավի 713 թ.¹¹⁷, ինչպես նաև Ամենայն Հայոց Կաթողիկոս Անանիա Ա Մոկացու նախաձեռնությամբ 949 թ. հրավիրված Արդախի¹¹⁸ (Աթախ), կամ Խաչենի, ժողովների տեղեկությունները: Երկու փաստաթղթերում ընդհանուր առմամբ հիշված են ավելի քան 20 եպիսկոպոսանիստ վանքեր կամ վանական միաբանություններ, որոնց շարքում կրկին հանդիպում են Արցախ-ՌՒՖիքի առավել նշանավոր և հնագույն հայոց սրբավայրերը: Ստորև ներկայացնում ենք այդ ցանկը. 1) Աթախ¹¹⁹, 2) Աղածոբա վանք, 3) Ամարաս, 4) Այծաքարու վանք, 5) Գանձասարի («Գանձասարու») ¹²⁰ վանք, 6) Գարդման, 7) Գտավանք (=Գտչավանք), 8) Խանդին վանք (=Խաղարի վանք, կամ Խաթրավանք), 9) Խանդոնկան վանք, 10) Խաչինավանք, 11) Կաղանկատվաց վանք, 12) Կատարո վանք¹²¹, 13) Կո-

¹¹⁷ Տես նույն տեղում, էջ 303:

¹¹⁸ «Տեառն Անանիայի Հայոց կաթողիկոսի Յաղագս ապստամբութեան տան Աղուանից...» (տես Գ. Տեր-Մկրտչյան, Հայագիտական ուսումնասիրություններ, գիրք Բ: Սբ. Էջմիածին, 1998, էջ 103–104): Մոկացու ցանկից դուրս ենք թողել Նորավանքը և Մաքենիսը («Մաքենոցաց», եպիսկոպոսանիստ), որոնք գտնվում էին Սյունիքի Սողբ գավառի տարածքում:

¹¹⁹ Կոչվել է նաև Արդախ (տես *Սրեփաննոս Օրբելեան*, Նշ. աշխ., էջ 278): Լրացուցիչ այլ տվյալներից (Մխիթար Գոշ) պարզվում է, որ Արդախ-Աթախ է կոչվել Խաչենագետի վերին ավազանի գավառակներից մեկը (Խոխանաբերդից արևմուտք): Ի դեպ, չենք բացառում, որ Անաստաս վարդապետի հայոց վանքերի ցուցակում հիշվող Արցախի (թերևս՝ Արդախի) Սուրբ Աստվածածինն է:

¹²⁰ Գանձասարի հռչակավոր վանքի առաջին հիշատակությունը հանդիպում է Անանիա Մոկացու թղթերում (տես Գ. Տեր-Մկրտչյան, Նշ. աշխ., էջ 103): Գանձասարը հիշատակում են նաև Կիրակոս Գանձակեցին (տես *Կիրակոս Գանձակեցի*, Նշ. աշխ., էջ 263–270, 392), Մխիթար Գոշը (տես *Մովսէս Կաղանկատուացի*, Նշ. աշխ., էջ 355):

¹²¹ Մ. Կաղանկատվացին այս վանքը հիշում է մեկ առիթով ևս՝ Դիզափայտի լե-

վախեղորի վանք¹²², 14) Հոշո (Հաշուա)¹²³, 15) Հովսեփավանք (Հուսեփավանք), 16) Մեծկուենից (վանք), 17) Ներսմերիի, կամ Ներսմիիրա, վանք (Ջրվշտիկ)¹²⁴, 18) Շիկաքարի վանք, 19) Ոսկեվանք, 20) Ողջագուրա («Յողջագուրաց») Սուրբ Անանիանք (միաբանություն), 21) Սենեքերիմի դումն (Անանիա Մոկացու Թղթում՝ «Մամուլ երեց՝ Սենեքերիմա դրան քահանայ»), 22) Տկուակերտի (իմա՝ Տիգրանակերտի) վանք, 23) Փառիսաս վանք:

Կաղանկատվացու երկում բազմիցս հիշատակված է Արցախի հնագույն հայկական վանքերից ևս մեկը՝ Գլխովանքը (Հոռեկավանք): Մեծկուենքի ՌՌռեկան գյուղի մոտ գտնվող այս սրբավայրի անվանումը նույնպես սերտորեն առնչվում է Սուրբ Եղիշե Առաքյալի հետ¹²⁵: Այլ առիթներով հեղինակը հիշատակում է Մոմհարայք («Մոմհարեից երեց»), Հովհաննավանք («Յովհաննավանք»), Քարմեղիմա անապատ մենաստանները¹²⁶, Տաղձանք «եպիսկոպոսանոցը» (իմա՝ եպիսկոպոսանիստ, Մեծ Կողմանքում), Բերդովանքը (Շամքորում)¹²⁷: Կաղանկատվացու հավելագրողները 9-րդ դ. իրադարձությունների առիթով հիշատակում են նաև հռչակավոր Դաղիվանքը (Խութավանք)¹²⁸:

Հայկական գրավոր սկզբնաղբյուրներում հիշատակված են նաև Հա-

ռան հետ միասին (տես *Մովսէս Կաղանկատուացի*, Նշ. աշխ., էջ 119), որի գազաթին է գտնվում սրբավայրը և առ այսօր ուխտատեղի է արցախցի հայերի համար:

¹²² Գտնվել է Գարդման գավառում՝ Ջակամ գետի ակունքների մոտ: Ներկայումս Աղբրեջանին բռնակցված Գետաբակի (թրք.՝ Gədəbəy) շրջանի կազմում է և թյուրքաչվորների կողմից ուղղակի թարգմանվել է՝ վերածվելով *Inəkboğarı*-ի: Տես նաև *Ս. Կարսպեպոյան*, Հյուսիսային Արցախ, էջ 85:

¹²³ Հաշուա (Հոշո) եպիսկոպոսը հիշվում է նաև Վաչագան Բարեպաշտի կողմից հրավիրված Աղվենի («Աղուեն») ժողովի մասնակիցների շարքում (տես *Մովսէս Կաղանկատուացի*, Նշ. աշխ., էջ 89–90):

¹²⁴ Տես *Մովսէս Կաղանկատուացի*, Նշ. աշխ., էջ 12: Ստեփանոս Օրբելյանը գրում է՝ «Միիր-Ներսեհեայ վանքն որ է Ջրվշտիկ» (տես *Սրեփաննոս Օրբելյան*, Նշ. աշխ., էջ 159):

¹²⁵ Տես *Մովսէս Կաղանկատուացի*, Նշ. աշխ., էջ 208, 212, 218, 234, 237: Վանքի անունը կապված է ՌՌռեկանի Ստեփաննոս քահանայի կողմից առաքյալի գլուխն այստեղ տեղափոխելու հետ (տես նույն տեղում, էջ 12):

¹²⁶ Տես նույն տեղում, էջ 121:

¹²⁷ Տես նույն տեղում, էջ 314:

¹²⁸ Տես նույն տեղում, էջ 340. «ի Խորածորն, որ կոչի Դաղոյի վանք»:

վապատուկ («Հավուց պտուկ»)՝¹²⁹, Կոշիկ անապատ¹³⁰, Մեծիրանից (Մեծա-րանց) Սուրբ Հակոբ¹³¹, Խամշիվանք¹³², Ծաղկոց Սուրբ Աստվածածին (Գառնակերո վանք՝ Գարդմանի Գառնակեր գյուղի մերձակայքում)¹³³, Չարեք վանք¹³⁴, Մածնաբերդի վանք (Մալագնաբերդ, Մլգնաբերդ և Սուրբ Սարգիս)¹³⁵ սրբավայրերը: Իրականում Արցախի և Գարդման-Փառիսոսի (Չակամա երկիր) հայկական վանքերի ու մյուս սրբավայրերի թիվը հաս-նում էր հարյուրների, և դրանք ընդհուպ մինչև ուշ միջնադար ապրել են աշխույժ կյանքով՝ լինելով հայ մշակույթի և կրթության կարևորագույն կենտրոններ:

ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՎԻՄԱԳԻՐ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ՎԱՎԵՐԱԳՐԵՐԻ

Վանական համալիրների եկեղեցիների պատերին թողնված վիմագիր արձանագրությունները բացառիկ տեղեկություններ են պարունակում պատմական աշխարհագրություն, և, հատկապես՝ տեղանվանագիտույթ-յուն ուսումնասիրողի համար: Այստեղ հանդիպում են տարածաշրջանի մանրատեղանունների (միկրոտոպոնիմներ) մասին այնպիսի կարևոր տե-ղեկություններ, որոնք չկան պատմիչների երկերում: Մենք առանձնացրել ենք Արցախի առավել նշանավոր երկու վանքերի՝ Գանձասարի և Դաղի-վանքի (Խութավանք) վիմագիր հիշատակարաններում գրանցված տեղա-նունները (բնակավայրերի՝ գերազանցապես գյուղերի, կավվածքների և

¹²⁹ «Դ-ՀՎ», պրակ V, էջ 33 (XII դ.):

¹³⁰ Տես նույն տեղում, էջ 28, 30 (XIII դ.):

¹³¹ Տես նույն տեղում, էջ 12–17 (IX–XIII դդ.):

¹³² Տես *Կիրակոս Գանձակեցի*, Նշ. աշխ., էջ 182, 201, 278, 290, 292: Հմմտ. *Մովսես Կաղանկատյանցի*, Նշ. աշխ., էջ 351 (Գոշի հիշատակագրությունը): XIII–XIV դդ. եղել է «Աղվանից» կաթողիկոսության կենտրոնը:

¹³³ Տես «ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ», մասն Բ (1451–1480 թթ.), կազմեց Լ. Ս. Խաչիկյան: Ե., 1958, էջ 244, 272: Հմմտ. *Ս. Կարապետյան*, Հյուսիսային Արցախ, էջ 480:

¹³⁴ Տես *Առաքել Դարիժեցի*, Գիրք պատմութեանց, աշխատասիրությամբ Լ. Ա. Խանկարյանի: Ե., 1990, էջ 103: Գտնվում էր Շամքոր գետի վերին ավազանում:

¹³⁵ Տես *Ս. Կարապետյան*, Հյուսիսային Արցախ, էջ 241 [Գանձակի Հարց-հանկիս(տ) գյուղի մոտ Հյուսիսային Արցախի Արթինաջուր (թրք.՝ Դոշլարաչայ) գետի ձախակողմյան Գետիշեն վտակի ափին]:

հանդամասերի անվանումներ, գետանուններ, լեռնանուններ և այլն), որոնց ընդհանուր թիվը հասնում է ութ տասնյակի: Դադիվանքի արձանագրություններում հիշատակված են 34 և Դոփյան տոհմի 16-րդ դարի ձեռագիր կալվածագրերում 18 տեղանուններ¹³⁶: Ըստ այդմ՝ մեզ հայտնի է այս նշանավոր մենաստանի հետ առնչվող 52 տեղանուն¹³⁷:

Դադիվանքի (Խութավանք) արձանագրություններում և կալվածագրերում հանդիպող տեղանունները զուտ հայկական են. 1) Ախոռակալ, 2) Ապահէն, 3) Ապասայ սար, 4) Բարձրակալ (գետ), 5) Բերթաքար, 6) Բճանց*, 7) Բռնչի աղբիւր, 8) Գետամէջ, 8) Գրիգորաթաղը («Գրիգորաթաղս»), 10) Դաթի վանք («ԳԴաթի վանս իւր քօլատակերով»), 11) Դաշտաբերդ (տե՛ս բերդանունների մասում), 12) Եզնարածանց, 13) Ըռեզա կաշկառն, 14) Թաշանանց (Թաղանանց) գետ, 15) Խոզենեկք («Խոզենեկս»), կամ Խոզենակք («Խոզենակուց»), 16) Խոթասար, 17) Խուղ (Խութ, Խոթ)¹³⁸, 18) Ծաղիկանց, 19) Ծովատեղ, 20) Կարմնջատափ, 21) Կնամարգ, 22) Կողբր («Յովանէս երէց Կողբցի»), 23) Կռապաշտոց (Կռապաշտուց), 24) Հարագաքար (Հարգաքար), 25) Հարցլու դայէն, 26) Հաւախաղաց (տե՛ս բերդանունների մասում), 27) Հէնհաց, 28) Հերանանց («Հերանանց՝ Հակառակաբերթովն»), 29) Չագունանց ագարակ, կամ հողեր, 30) Մագրո բերդ («բերթն Մագրոյ»), 31) Մանանաձոր (Մանանա ծոր, Մանանաձով), 32) Մարչամանց, 33) Մոխրաբարս¹³⁹, 34) Նաւի աղբիւր, 35) Շարագօլ

¹³⁶ Տես *Ս. Բաւալյան*, Նշ. աշխ., էջ 153–154:

¹³⁷ Դադիվանքի արձանագրություններում և կալվածագրերում գրանցված թվով 42 տեղանունների ցանկն առաջին անգամ կազմել է Ղարաբաղի թեմի հոգևոր առաջնորդ Բաղդասար մետրոպոլիտ Հասան-Ջալալյանի զխավորած հանձնաժողովը 1854 թ. (տես *Լեօ Պատմություն Ղարաբաղի Հայոց թեմական հոգևոր դպրոցի*. 1838–1913: Թիֆլիզ, 1914, էջ 152–156):

* Լուրջ հիմքեր կան նշված գյուղը նույնացնելու ԼԴՀ Քաշաթաղի շրջանի երբեմնի Փչանիս (<Բճանց) գյուղի հետ, որն այժմ վերանվանվել է Վակունիս:

¹³⁸ Գյուղի մասին տես Մակար եպս. Բարխուտարեանց, Աղուանից երկիր եւ դրացիք, էջ 265:

¹³⁹ «Բակ» տեղանվանակերտն իմաստային առումով համապատասխանում է «շենին» կամ «գյուղին» (տես «ԴՀՎ», պրակ IV, էջ 120–121, *Գ. Ա. Ղալիանցյան*, Նշ. աշխ., էջ 166–167): Գ. Ղալիանցյանը «բակ»-ն ստուգաբանում է որպես «շրջան, գավառ»: Մեր կարծիքով՝ «բակ»-ը տեղանվան մեջ ուղղակի նշանակում է «գյուղ», ման՝ «տուն» (բնակության վայր. հմմտ. «տուն» բաղադրիչը Նիզատուն գյուղանվան մեջ,

(«Մնասյ Շարագօլն», լճակ), 36) Շարինց քար (Շարքար, Շարուկ քար), 37) Շարօտին ջուր, 38) Շեչաչորեց (=Շեչաչորք), 39) Շիռմանանց, 40) Ողն, 41) Չափար, 42) Չիջաբերթ(դ) կամ Չիջապերթ, 49) Պախոռ, 44) Պաշոյ ագարակ, 45) Պարանախաչ, 46) Պետրոսապակ (Պետրոսպակ, Պեյրոսաբակ)*, 47) Ջաջուռանց (Ջաջուռանց, Ճաճուռանց), 48) Ջուբեկանց (Չօլբեկեանց <Չալբեկանց), 49) Սարուտանց հող, 50) Սոխանանց, 51) Վահէն («սարն Վահէնայ»), 52) Տրտնոտ (Տրտնուտ)¹⁴⁰: Ինչպես պարզ երևում է, նշված խմբաքանակի տեղանունները հայկական են և լիովին արտացոլում են 11-16-րդ դդ. Տրտուի և Խաչենագետի վերին ավազանների էթնիկական պատկերը: Ի դեպ, բազմաթիվ հայկական տեղանուններ են հիշատակվում նաև Արցախի մյուս հռչակավոր վանքերի (Մեծիրանից Սուրբ Հակոբ, Կոշիկ անապատ, Գ-տչավանք, Խադարի վանք, կամ Խաթրավանք, և այլն) վիմագիր արձանագրություններում:

Գանձասարի արձանագրություններում հիշատակված են հետևյալ տեղանունները (ընդգծված են գյուղանունները). 1) Ալմաճայ տաք («Ալմաճայ տաք[ի] հող»), 2) Աշմանա, 3) Առատունոց, 4) Աւրին հող, 5) Բազմատուր («Բազմատվեց Նովերին հող») ¹⁴¹, 6) Բեմին հող, 7) Բոլորքոչ, 8)

կամ՝ Մյունիքի Սողք գավառի Բակափոր գյուղանունը, որ ստուգաբանվում է որպես «գյուղաձոր» /Չորագյուղ/): «Բակ» տեղանվանակերտով բնակավայրերը հատկապես հաճախ են հանդիպում Մյունիքի Սողք («Սողից գաւառ») և Արցախի Վալկունիք-Ծար սահմանակից գավառներում: Ռիշագրավ է, որ Սողքի 75 բնակավայրից 14-ն ունեն «բակ» բաղադրիչ (Արևիսաբակ, Վաչէիբակք, Խորասանաբակ, Գեղամաբակ, Սահակաբակք, Գւպրաբակ ևն (տես ՄՄ, ձեռագիր թիվ 6271, թերթ 334 աբ: Հմմտ. Ստեփաննոս Օրբելեան, Նշ. աշխ., էջ 514-515): Ընդ որում, Օրբելյանի երկում պահպանված Տաթևի վանքի հարկացուցակների գյուղանուններից պարզվում է, որ Ծարը եղել է Սողքի կազմում: Ծարի տարածքում եղած վիմագիր արձանագրություններում հիշատակվում են մի շարք այլ նմանատիպ տեղանուններ, ինչպես՝ Համ[ամ]աբակ (սխալ ընթերցմամբ՝ Համապուկ, հետագայում՝ թրք. իմաստավորված որպես *Imambinasi*), Խնճորբակ (թերևս՝ Թուխտուի հովտում գտնվող Ալմալղը), Անկաբակաց երկիր (իմա՝ հողատարածք) (տես «ԴՀՎ», պրակ V, էջ 122, 127, 219):

* Տեղանունը հիշեցնում է 19-րդ դ. վերջի և 20-րդ դ. սկզբի ռուսական տեղագրական քարտեզներում հանդիպող «*Бемербек*» լեռնանունը:

¹⁴⁰ Տես «ԴՀՎ», պրակ V, էջ 199-200, 202, 204-206, 216: Մակար եպս. Բարխուտարյանց, Աղուամից երկիր եւ դրացիք, էջ 266-268, Ս. Քանայյան, Նշ. աշխ., էջ 152-154: Հաշվի չեն առնված բացահայտ աղավաղված տեղանուններ:

¹⁴¹ Գյուղը գտնվել է ժամանակակից Քաշաթաղի շրջանի տարածքում (ԼԴՀ),

Եղ[գ]ընգնի, 9) Ծակխաչին հող, 10) Ծաղկավանց («Ծաղկայվանց»), 11) Կակաչանց, 12) Կասրայ, 13) Կոռալան, 14) Կունճի հող, 18) Հարջանտուս, 16) Դռանց, 17) Մաչեղ¹⁴², 18) Միջնաշեն (նվիրատու Հակոբ Միջնաշենեցու անվան մեջ), 19) Նորաշինիկ («Նորաշինկան գետն»), 20) Ուղտանոսի կտորն, 21) Չարեքդար, 22) Վարդաբերանց, 23) Վարդանաթաղք («Գվարդանաթաղս»), 24) Վերին Նովեր, 25) Տանձածոր, 26) Փուտուռանոց (Փտուռանց)¹⁴³:

Խնդրո առարկա թեմայի լուսաբանմանն զգալիորեն օգնում են վանական կոնդակները կամ կալվածագրերը (սիկել, դաբալա), որոնցում որպես կանոն նշված են եղել մեծ թվով տեղանուններ: Ցավոք, մմանատիպ վավերաթղթերը խիստ սակավաթիվ են, և մեզ հասել են միայն առանձին նմուշներ: Կողոպտուտով ապրող թյուրքական և քրդական վաչկատուն ցեղերի համար հայոց վանքերը հատուկ թիրախ էին: Պատերազմների և ասպատակությունների (մասնավորապես՝ 18-րդ դդ. դաղստանցիների մշտապես կրկնվող արշավանքների) ժամանակ տասնյակ հայկական բնակավայրեր, այդ թվում՝ վանքեր, ավերվել և ամայացել են: Այնուամենայնիվ, մեզ են հասել արժեքավոր փաստաթղթեր, որոնցից են. Արցախի Ջրաբերդ գավառի Սուրբ Եղիշե Առաքյալի (Ջրվշտիկ) վանքի կոնդակը՝ շնորհիված Ամենայն Հայոց Կաթողիկոս Փիլիպոս Ա Աղբակեցու (1632–1655) կողմից¹⁴⁴, ինչպես նաև վերը բազմիցս հիշատակված Դաղիվանքի (Խութավանքի) թեմի բնակավայրերի ցուցակը (կալվածագիրը), որը պահպանվել է Ամենայն Հայոց Կաթողիկոս Սիմեոն Ա Երևանցու (1763–1780) նշանավոր «Ջամբո» աշխատության մեջ¹⁴⁵: Ժամանակագրական առումով նշված

ինչպես դա ցույց է տալիս ՀՀ Գեղարքունիքի մարզի Արծվանիստ (պատմական՝ Վանավան-Կթանոց) բնակավայրի մոտ գտնվող ավերակ գյուղատեղիի գերեզմանաքարերից մեկի վրա (ՌՃԸ) 1659 թ. արված գրությունից (տես «ՂՀՎ», պրակ IV, «Գեղարքունիք», կազմեց Ս. Գ. Բարխուդարյան: Ե., 1973, էջ 129):

¹⁴² Ժամանակակից Դրբոնն է (ԼՂՀ Մարտակերտի շրջան): Դշտել ենք ըստ Բաղդասար մեարոպոլիտի ցուցակների (տես *Լէօ*, Նշ. աշխ., էջ 146): Տեղանունը աղավաղվել էր՝ վերածվելով «Մազախ» (Մաչախ-Մաչեխ), կամ «Մազ(չ)ախու Տրմբոն»:

¹⁴³ Տես «ՂՀՎ», պրակ V, էջ 38, 41, 43–46, 50, 53–56, 58–59:

¹⁴⁴ Տես *Մակար եպս. Բարխուդարյանց*, Աղուանից երկիր եր դրացիք: Արցախ, էջ 184–185: Կոնդակը պահվել է Գանձակ քաղաքի Սուրբ Աստվածածին եկեղեցու ավագ քահանա Գրիգոր Թումանյանցի մոտ:

¹⁴⁵ Տես *Սիմեոն կաթողիկոս Երևանցի*, Ջամբո: Վաղարշապատ-Սբ Էջմիածին,

փաստաթղթերի միջև շուրջ մեկ դար է, որի ընթացքում Արցախի տարածքում, բնականաբար, կատարվել էին փոփոխություններ: Սակայն բնակավայրերի թվարկման հաջորդականությունը հնարավորություն է ընձեռում բավական հստակ պատկերացում կազմելու Տրտու-Թարթառ գետի ակունքների շրջանից մինչև Գոլաշտյան-Ինջա գետ ձգվող, ինչպես նաև՝ միջնադարյան ձեռագրական հիշատակարաններում «Գանճալու ձոր», կամ «Գանճալու երկիր», կոչված Կուրակի և Գանճակի վերին ավազանն ընդգրկող տարածքների էթնիկական նկարագրի վերաբերյալ: Քննարկվող երկու փաստաթղթերում հիշատակվում է 51 բնակավայր*։ Ըստ վանական թեմերի՝ դրանք տեղաբաշխված են հետևյալ կերպ (պահպանել ենք աղբյուրներում եղած հերթականությունը)։

I. Սուրբ Եղիշեն Առաքյալի (Ջրվշտիկ վանք) թեմ. 1) Հաթերք, 2) Ականա, 3) Ջանկաթաղ, 4) Կուլաթաղ (այժմ՝ Գյուլաթաղ <Գալլաթաղ>), 5) Մոխրաթաղ, 6) Կիսապատ (Կուսապատ), 7) Մեծշեն, 8) Մահման (Մեհմանա), 9) Մալատկան**, 10) Չարտախ (Մաղավուզ), 11) Վերին Շնաթաղ, 12) Ափիտուլ («Ափիտուլա»), 13) Սահլապատ, 14) Թթուտ (Թրթուտ)¹⁴⁶, 15) ՈՒղտակակ (ճիշտը՝ ՈՒղտապատ)¹⁴⁷, 16) Կոկթափա (այժմ՝ Գյոյթափա), 17) Եղակեր (նաև՝ Թոռուտ), 18) Ծակառաշեն (այժմ՝ Սարիսո՞ւ), 19) Վանք

1873, էջ 283–284: Խորավանքի թեմն ընդգրկել է նաև Սևանի լեռնաշղթայից դեպի արևմուտք՝ ժամանակակից ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիսի տարածաշրջանի հարավային, մասամբ՝ հարավարևմտյան հատվածները (պատմական Այրբ գավառակը)։ Թեմի արևելքը կազմող Ծարա երկրի բնակավայրերի մասին նշվում է «յայնկոյս լերինն» (տես նույն տեղում, էջ 283)։

* Դուրս են մնացել միջակա Գյուլիստանի գավառի (մելիքության) բնակավայրերը, որոնք սփռված են Գոլաշտյան և Գանճակ գետերի միջև եղած տարածքում, որովհետև դրանք կազմել են Ամենափրկիչ վանքի թեմը (ներառյալ՝ մելիքանիստ Թալիշ-Թարինջն իր շրջակայքով)։

** 19-րդ դ. վերջին լքված էր։ Գյուղատեղին գտնվում էր Տրտու-Թարթառի աջ ափին՝ Կուսապատից շուրջ 8 կմ արևելք։

¹⁴⁶ Գյուղատեղին (Թուրոտ) գտնվում է ԼՂՀ Մարտակերտի շրջանի Մաղավուզ գյուղի մոտ՝ «Քրդըքատեղ», կամ «Մայրաքաղաք հնավայրի», շրջանում (տես Շ. Տ. Սկրիբյան, Նշ. աշխ., էջ 58)։

¹⁴⁷ Մակար եպ. Բարխուտարեանց, Արցախ, Բագու, 1895, էջ 450. «ՈՒղտակա կամ Կակայ»։ Ճշտել ենք ըստ Սուրբ Եղիշեն Առաքյալի (Ջրվշտիկ) վանքի գավթի արձանագրության («ԳՀՎ», պրակ V, էջ 107. «Ես Գրիգոր շինեցի գՈՒղտապատա եկեղեցին»)։ Գտնվում է վանքի մոտակայքում, և տեղացիները կոչում են ՈՒղտի («Ողտի») մատուռ (տես Մակար եպ. Բարխուտարեանց, Արցախ, էջ 282)։

(իմա՝ Եղնասար)*, 20) Գետաշեն, 21) Մլուք (այժմ՝ Ազատ), 22) Բաղշիք, 23) Մրցունիս («Մրցնու») ¹⁴⁸, 24) Հաճիշեն (այժմ՝ Հաջիքյանդ), 25) Քօշկ («Քոշկայ», այժմ՝ Քոշքյու), 26) Հատիս, 27) Էիբլօղ («Էիբլօղայ», Աբլահ), 28) Միրզիկ, 29) Ոսկանապատ (այժմ՝ Ջոռնաբաղ), 30) Յնծահալ (այժմ՝ Ջինգաղայ), 31) Գետամեջ (այժմ՝ Գյաղամիշ), 32) Համասարապակ (այժմ՝ Մուշաբախ-Մուշավաք): Ինչպես երևում է Մ. Բարխուտարյանցի գրքում գետեղված տեքստից, փաստաթուղթը վնասված է եղել և Ոսկանապատի ու Յնծահալի միջև նշված որոշ բնակավայրերի անուններ դարձել են անընթեռնելի: Պետք է ենթադրել, որ ինչ-ինչ պատճառներով չի պահպանվել Դաստափոր ավանի անունը, որը գտնվում էր Գանձակ գետն սկզբնավորող համանուն գետակի ափին՝ Յնծահալի և Գետամեջի հարևանությամբ: Ի դեպ, այն 17-րդ դարում եղել է նշանակալից բնակավայր, հայ գրչության կենտրոն**:

II. Դաղիվանքի (Խութավանք) քեմի Ծարա երկրի գյուղերը. 1) Մեծ Ծար, 2) Կաժ, 3) Անուխս (Անանուխս), 4) Խոլոզանց, 5) Դաշտակ, 6) Հաճար (Հաճավ, «Հաճա»), 7) Ապահեն, 8) Ծումեն, 9) Քարատակ (իմա՝ Հավախաղաց), 10) Չվար («Չուար»), 11) Մոս (Մովս), 12) Սևաջուր, 13) Ծովատեղ, 14) Խրանց, 15) Հալուճ, 16) Մոթանց, 17) երկու Դավաշխուր (Մեծ և Փոքր), 18) Լև, 19) Յանշաղ («Յանշաղ»), 20) Բարսեղիշեն, 21) Մեյդանն, 22) Երիցիշեն, 23) Խութավանք, 24) Չավար, 25) Կյարաք («Կեարաք», իմա՝ Ազարակ), 26) Նորշեն, 27) Խնթրավանք (Խաղարի վանք) ¹⁴⁹:

* Հյուսիսային Արցախի Գետաշեն մելիքամիստ նշանավոր ավանից 2,3 կմ հարավ-արևելք գտնվող Եղնասարի վանքի գյուղը:

¹⁴⁸ Կոշվել է մահ Մուրթունիս (գյուղատեղին գտնվում է Գետաշենից 2,5 կմ արևմուտք) (տես «ԴՀՎ», պրակ V, էջ 244, Ս. Կարապետյան, Հյուսիսային Արցախ, էջ 357–358):

** Մաշտոցի անվան Մատենադարանում պահվում են այս բնակավայրում («Դաստիփիր») 1671–1673 թթ. և 1673–1674 թթ. գրված հմ. 6746 ու հմ. 3576 ձեռագրերը: Ներկայումս հմ. 1–17 բնակավայրերը մտնում են ԼԳՀ Մարտակերտի շրջանի կազմի մեջ: Հմ. 18–32-ը գյուղերը գտնվում են խորհրդային տարիներին Ադրբեջանին բռնակցված Խանլարի և Դաշքեսանի (Քարիատ) շրջաններում և 1988–1991 թթ. հայաթափվել են:

¹⁴⁹ Նշված բնակավայրերի մասին տես Սիմեոն կաթողիկոս Երևանցի, Ջամբո: Ե., 2003 (աշխարհաբար թարգմանություն), էջ 510–520 (պատմա-աշխարհագրական բնույթի ծանոթագրությունների բաժին): Հմմտ. Ս. Կարապետյան, Հայ մշակույթի հուշարձանները ..., էջ 20–21, 24–124: Ս. Սարգսյան, Նշ. աշխ., էջ 73–89: Ներկայումս այս

Նշված 59 բնակավայրերից օտարահունչ են դարձել միայն որոշ անվանումներ [Կոկթափա – թրք. Göytəpə, Քօշկ – թրք. Kōşkū, Դավաչխոր – թրք. Dəvəçuxur, թերևս հայկական ՈՒդտափոս, կամ ՈՒդտախոռ, համարժեքի պարզ թարգմանությունը (Գ. Բ.) և այլն]: Եզրակացությունը դարձյալ կարող է լինել միայն մեկը. նշված տարածքները մինչև 18-րդ դ. երկրորդ կեսը անխաթար պահպանել էին ոչ միայն իրենց բուն հայկական նկարագիրը, այլև անունների հայկական շերտը:

ՀԱՅԿԱԿԱՆ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՕՏԱՐԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ

18-րդ դ. վերջերից Հայոց արևելից կողմերի առանձին շրջաններում սկսում են արձանագրվել օտարահունչ, հիմնականում՝ թյուրքական, տեղանուններ: Ընդ որում, Գարդմանի, Փառիսոսի և Ջակամի տարածքներում օտար ծագմամբ տեղանուններ հանդիպում են արդեն 17-րդ դարից*, թեև դրանով հանդերձ նշված գավառների տեղանունները դեռ բավական երկար ժամանակ պահեցին իրենց հայկական դիմագիծը: Որո՞նք են հայկական տեղանունների օտարացման գլխավոր պատճառները: Առաջին հերթին՝ Սեֆյան տիրապետության հաստատումը խթանեց թյուրքական և քրդական վաչկատուն ցեղերի մուտքը տարածաշրջան, ինչն զգալիորեն աղճատեց հատկապես ՈՒտիքի հարթավայրային շրջանների ազգային նկարագիրը: Հայ բնակչությունն սկսեց բավական վաղ դուրս մղվել անասնապահության համար տաք կլիմա ունեցող մերձկուրյան տափարակներից, ինչը բացասաբար անդրադարձավ նաև տեղանունների վրա:

Խիստ աղետալի էին 16–17-րդ դդ. թուրք-պարսկական երկարատև պատերազմները: Հայաստանի շատ ու շատ գավառների շարքում նկատելիորեն տուժեցին նաև Հայոց արևելից կողմերի մի շարք տարածքներ: 1590–1604 թթ. Օսմանյան կայսրության կողմից Արևելյան Հայաստանի բռնազավթումն առաջ բերեց հայ բնակչության նոր զանգվածային բռնագաղթ: Օսմանյան վայրագություններից փրկվելու նպատակով Արցախից հեռացածների թվում Առաքել Դավրիժեցին հիշատակում է ոսկանապատ-

բոլոր բնակավայրերը ԼՂՀ Մարտակերտի և Շահումյանի (նախկին Բյալբաջար-Քարվաճառ) շրջանների տարածքներում են:

* Նման բնակավայրերի շարքում կարելի է առանձնացնել հայկական Դարամուրադ գյուղաքաղաքի անվանումը:

ցի Սարուխան բեկին և նրա եղբայր Նագարին, հաթերքցի Օղլան քեշիշին (տերտեր) և նրա եղբորը՝ Ղալաբեկին, Խաչենի Ջալալմեյլիքին՝ եղբորորդիների հետ, Դիզակի մելիք Սուջումին, Քոչիզի (Վարանդայի հին կենտրոնը) մելիք Փաշիկին, Բրետսիսի մելիք Բաբեին, Վերին Չակամի Մեքիսեթ եպիսկոպոսին, Քաշաթաղի («Քշտաղս») մելիք Հայկազին: Դիզակից հեռացավ 4 գյուղերի բնակչությունը¹⁵⁰: Դրան գումարվեց 1604–1605 թթ. Շահ-Աբասի կազմակերպած հայության մեծ բռնագաղթը («Մեծ սյուրգյունը»), որից խիստ տուժեց տարածաշրջանի հյուսիսային հատվածը կազմող Գանձակի ընդարձակ գավառը¹⁵¹: Սկսեցին շրջանառել նաև օտարախոունջ տեղանուններ: Այս առումով նկատելի են հետևյալ երևույթները: 1) Ինչպես բնակավայրերի, այնպես էլ մյուս աշխարհագրական վայրերի հայկական տեղանունները եկվորները կամ ուղղակիորեն թարգմանել են, կան՝ աղճատել: Այս երևույթն, ի դեպ, ընդհանուր է ամբողջ Հայաստանի համար¹⁵², 2) մահմեդական քաղաքական ազդեցության ուժեղացումը հանգեցրեց հայկական տեղանուններին զուգահեռաբար թյուրքական կրկնակների առաջացմանը:

Արցախի և Գարդմանի տարածքում հանդիպում ենք նմանատիպ տասնյակ օրինակների.

1) Ականա – Արխանա (ՈՒմուդլու, ԼՂՀ Մարտակերտի շրջան), 2) Այծաքար – Քեչիլիղարա (ԼՂՀ Շահումյանի շրջ.), 3) Բանանց – Բայան (Քարհատ - Դաշքեսանի շրջ., Ադրբեջանի Հանրապետություն), 4) Գետաբակք (Գետաբեկ)–Գյաղաբայ (համանուն շրջ., ԱՀ), 5) Գետաբակ (Ծար)–Չայքյանդ (այժմ՝ Նոր Վերինշեն, ԼՂՀ Շահումյանի շրջ.), 6) Գետաշեն–Չայքյանդ (Չայքենդ, ԼՂՀ Շահումյանի շրջ., բռնագավթված ԱՀ-ի կողմից), 7) Խնձորոբակ–Ալմալղ (ԼՂՀ Շահումյանի շրջ.), 8) Ծար-Չար

¹⁵⁰ Տես *Առաքել Դարիժեցի*, Նշ. աշխ., էջ 63:

¹⁵¹ Տես նույն տեղում, էջ 70:

¹⁵² Այս մասին տես *Ս. Սարգսյան*, Նշ. աշխ., էջ 63–89: Գ. Բաղայան, Աղահեճք-Քաշաթաղի տեղանունների պատմությունից (պատմաաշխարհագրական ճշտումներ): «20-րդ դարի սկզբին ԼՂՀ Քաշաթաղի շրջանի հայկական գյուղերի բնակիչների բռնի տեղահանման 100-ամյակին նվիրված գիտաժողովի նյութերը»: Բերձոր, 2005, էջ 83–90, *նույնի՝* Ծիրակի որոշ բնակավայրերի տեղադրության հարցի շուրջ: «Պատմության հարցեր 2» (տարեգիրք): Ե., 2013, էջ 92–111, *Ա. Վարդանյան*, Հայկակա՞ն է արդյոք Լաչին տեղանունը: «Արմատներ» (հոդվածներ, էսսեներ, պատմվածքներ): Ե., 2006, էջ 140–141:

(այժմ՝ Ծար, ԼՂՀ-ի Շահումյանի շրջ.), 9) Կաժ-Բագրխանա (ԼՂՀ Շահումյանի շրջ.), 10) Կավարտ (գետանուն) – Ղաբարթա (ԼՂՀ Մարտակերտի շրջ.), 11) Կողոր-Ղոթուրլու (ԼՂՀ Շահումյանի շրջ.), 12) Կովախետղ-Ինաքբողան (Գետաբեկի շրջ., ԱՀ), 13) Հարուճ–Ալուչալու (ԼՂՀ Շահումյանի շրջ.), 14) Համամարակ–Իմամբինասի (ԼՂՀ Շահումյանի շրջ.), 15) Մեղրակերտ–Բալլուդայա (Սրխավանդ, այժմ՝ Մեղրակերտ, ԼՂՀ Մարտակերտի շրջ.), 16) Մեղրենիս (Մեղրենեց)–Բալլուջա (այժմ՝ Այգեստան, ԼՂՀ Ասկերանի շրջ.) 17) Մրջմանց, կամ Մարջմանց, Մարջումաք (ԼՂՀ Շահումյանի շրջ.), 18) Շատախ–Չաթաք (Քարհատ-Դաշքեսանի շրջ., ԱՀ), 19) Ողն–ՈՒլուխանլու (ԼՂՀ Շահումյանի շրջ.), 20) Պախտո–Բաղըրլի (ԼՂՀ Շահումյանի շրջ.), 21) Պարանախաչ–Խաչփարալի (ԼՂՀ Շահումյանի շրջ.), 22) Ջերմաջուր–Իստիսու (անունը վերականգնված է, ԼՂՀ Շահումյանի շրջ.), 23) Վաճառ, կամ Վաճառտեղ, Բագարթյանդ (ԼՂՀ Մարտակերտի շրջանի Ծմակահող գյուղի թուրքական անունը՝ կապված միջնադարյան Վաճառ «քաղաքի» հետ), 23) Քարահատ, կամ Քարհատ, Դաշքեսան (համանուն շրջան., ԱՀ), 14) Քարավաճառ, կամ Քարվաճառ, Քյալբաջար, Քավվաժար (այժմ տեղանունը վերականգնված է, ԼՂՀ Շահումյանի շրջ.):

19-րդ դ. սկզբին՝ տարածաշրջանում ռուսական տիրապետության հաստատումից հետո, ցարական իշխանությունները, որպես կանոն, նախապատվությունը տալիս էին տեղավայրերի օտար՝ թյուրքական, անվանումներին: Այս երևույթը շարունակվեց ընդհուպ մինչև 1917 թ.: Սրանով հանդերձ հայ բնակչությունը սրբորեն պահպանեց դարերով ավանդված հարազատ տեղանունները, ինչի հետևանք են հենց ռուսական պաշտոնական այլևայլ տեղեկագրերում կամ փաստաթղթերում դրանց գրանցման բազմաթիվ դեպքերը¹⁵³:

ԱՄՓՈՓՈՒՄ.

ա. Ինչպես ցույց են տալիս մեզ հասու սկզբնաղբյուրների տվյալների առադրումն ու վերլուծությունը, Արցախի և Ուտիքի (հավաքական՝ Հայոց արևելից կողմանց, կամ կողմերի) տեղանուններն ունեն հնագույն ծագում: Դրանց առաջին հիշատակություններին մենք հանդիպում ենք արդեն Ք. ա.

¹⁵³ Դրա լավ ապացույցն է Անդրկովկասի 1886 թ. համընդհանուր վիճակագրությունը (տես «Свод статистических данных, извлеченных из посемейных списков населения Кавказа. Елисаветпольская губерния». Тифлис, 1888):

I հազարամյակի սկզբի Վանի սեպագրերում: Պատմալեզվաբանական ուսումնասիրությամբ որոշակիորեն պարզվում է, որ տարածաշրջանի տեղանունների ձևավորումն ընթացել է գերազանցապես հայկական միջավայրում: Լինելով միասնական ընդհանրության բաղկացուցիչ մաս՝ դրանք ունեն մաս որոշակի տեղական առանձնահատկություններ, ինչն, ի դեպ, բնորոշ է Հայաստանի բոլոր պատմաաշխարհագրական երկրամասերին:

բ. Մեսրոպատառ հայկական սկզբնաղբյուրներում Արցախի և ՌՒտիքի տարածքի տեղանունները հիշատակված են «Ոսկեդարից» սկսած և շարունակաբար հանդիպում են մինչև 20-րդ դ.: Այդ սկզբնաղբյուրների շարքում առանձնանում է Մովսես Կաղանկատվացու երկը (7-րդ դ.), որտեղ հանդիպում է տարածաշրջանի տեղանունների ամենամեծ խմբաքանակը՝ ավելի քան 80 տարաբնույթ աշխարհագրական վայրերի անուններ (բնակավայրեր, հոգևոր հաստատություններ, գավառներ, լեռներ, գետեր և այլն): Բացառիկ և մեծ թվով տվյալներ են գրանցված մաս հայերեն վիճակի արձանագրություններում, վանական կալվածագրերում, թեմական կոնդակներում և այլ արխիվային վավերաթղթերում: Ժամանակագրական տարբեր ընդգրկում ունեցող այս փաստաթղթերում շարունակաբար (9–17-րդ դդ.) հանդիպում են գերազանցապես բուն հայկական տեղանունները:

գ. Տարածաշրջանում թյուրքական տեղանունների ի հայտ գալը կապված է եկվոր թյուրք-թաթարական ցեղերի քոչվորական կենսակերպի հետ: Դրանք նախապես հայտնվում են մերձկուրյան տափարակներում: Սկզբնաղբյուրների տվյալների հիման վրա կարելի է վստահորեն պնդել, որ ընդհուպ մինչև 20-րդ դ. ինչպես Արցախի, այնպես էլ ՌՒտիքի լեռնային գավառների (Գարդման, Կողթ, մասամբ՝ Շակաշեն) տեղանունությունը պահպանել է իր հայկական նկարագիրը:

դ. Տարածաշրջանի տեղանունների աղճատման և օտարացման գործընթացն սկիզբ է առել 17–18-րդ դդ.: Դրանում իրենց բացասական դերն են ունեցել մի շարք գործոններ. հայկական երկրամասեր թյուրքական, մասամբ՝ քրդական, վաչկատուն ցեղերի ներթափանցումն ու աստիճանաբար նստակեցության անցնելը, հայ բնակչության նվազումն ու արտագաղթը, նորաստեղծ մահմեդական իշխանությունների (խանությունների) տիրապետությունը: Արցախի (Լեռնային Ղարաբաղի) տեղանունների «թյուրքացումը» կատարվել է հայկական տեղանունների կա՛մ ուղղակի թարգմանությամբ, կա՛մ էլ աղճատմամբ և քոչվորների պարզունակ լեզվին հարմարեցմամբ:

ԱՐՅԱԽԻ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՊԱՐՄԿԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ

Ք. Պ. ԿՈՍՏԻԿՅԱՆ, պատմական գիտությունների թեկնածու, Երևանի
Մ. Մաշտոցի անվան Մարենադարանի ավագ գիտաշխատող



«Ղարաբաղ» անվանումն առաջին անգամ հիշատակում է իրանցի պատմագիր Ռաշիդ ալ Դինը (1247–1318) իր «Տարեգրությունների ժողովածու» կոչվող պատմական աշխատության մեջ, որպես Առանում գտնվող ձմեռանոցի անվանում: Նրա առաջին հիշատակությունը կապված է Ահմեդ Իլխանի օրոք Կոնկուրտայի դեմ տարվող դատի հետ, որը տեղի է ունենում «Առանի Ղարաբաղում» 1284 թ.¹: Այս հեղինակի մյուս հիշատակությունները կապված են Ղազան խանի 1295 թ. պաշտոնական թագադրության և 1301 թ. այդ վայրում ձմեռանոց հիմնելու հետ²: Ամեն անգամ «Ղարաբաղ» անվանումը հիշատակելիս պատմագիրը շեշտում է, որ այն գտնվում է Առանում: Այս հիշատակությունները ավելի հին են, քան վրացական ժամանակագրության և Համդալլահ Ղազվինիի 14-րդ դարի հիշատակությունները, որոնք մինչ այժմ համարվում էին հնագույն³:

«Ղարաբաղ» անվանումը չի հիշատակվում Ռաշիդ ալ Դինից մի փոքր վաղ հանդես եկած պարսկալեզու մեկ այլ պատմագրի՝ Ալա ալ Դին Ջուվեյնիի «Աշխարհի նվաճումը» երկում: Ջուվեյնին, որը մահացել է 1283 թ., Կուր-Արաքսյան միջագետքը անվանում է «Առան»: Ուստի և կարելի է ենթադրել, որ նրա կենդանության օրոք «Ղարաբաղ» անվանումը լայնորեն չէր գործածվում: 16-րդ դարի առաջին կեսին անհայտ հեղինակի պարսկալեզու պատմագրական երկում որպես Ղարաբաղի մեջ մտնող վայր երկու անգամ հիշատակվում է Սուլթանբաղը⁴, որն ըստ Մ. Բարխուդարյանցի՝

¹ Տես *Рашид-ад-Дин*. Сборник летописей, т. III. М.-Л., 1946, с. 104:

² Տես նույն տեղում, էջ 166, 188, *Рашид-ад-Дин*. Переписка. М., 1971, с. 231:

³ Տես Բ. Ա. Ուլուբաբյան, Խաչենի իշխանությունը X–XVI դարերում: Ե., 1975, էջ 40–41:

⁴ Տես «Ձահանգոշա-ե խաղան (Թարիխ-ե շահ Իսմայիլ)» («Միապետի նվաճում-

«Կուրի և Խաչենագետի աջ և Գարգառի ձախ ավերի ու դաշտաբերանի մեջ ընկած Արցախի Տուչքատակ կամ Տիգրանակերտ գավառի ստորին մասում գտնվող մի հողե բերդ էր»⁵:

Ամենայն հավանականությամբ՝ Ղարաբաղն այդ ժամանակաշրջանում ընդգրկում էր հիշյալ հայկական գավառը և որպես ձմեռանոցային հարմար վայր (դեռ հայոց Արշակունյաց արքաների համար)՝ որոշակի կարևորություն ուներ պատմական Հայաստանի արևելյան շրջաններն իրենց տիրապետությանը ենթարկած Իրանի մոնղոլ տիրակալների, այնուհետև՝ նրանց փոխարինած թուրքմենական իշխանությունների ու նաև Սեֆյան պետության քաղաքական կյանքում: ՌԻստի այդ տեղանունը շարունակաբար օգտագործվում է հետագա պարսկալեզու պատմագրության մեջ ու փաստավավերագրական նյութերում՝ կիրառվելով ավելի ու ավելի հաճախ և ժամանակի ընթացքում տարածվելով ավելի ընդարձակ շրջանի վրա:

15–16-րդ դարերում «Ղարաբաղը»՝ որպես Առանում գտնվող ձմեռանոցային վայրի անվանում, հիշատակում են Լենկ Թեմուրի պալատական պատմագիրներ Նեզամ ալ Դին Շամին ու Շարաֆ ալ Դին Եզդին «Գիրք հաղթությունների», Ալ-Կոյունլու պետության պատմագիր Ֆազլուլլահ իբն Ռուզբիհան Խունջին «Ամինի պատմություն» պատմագրական երկերում⁶: 16-րդ դարի պարսկալեզու պատմագիր, ազգությամբ քուրդ Շարաֆ խան Բիթլիսին ոչ միայն մի քանի անգամ հիշատակում է «Ղարաբաղը» որպես Առանում գտնվող ձմեռանոցի անվանում⁷, այլև նշում է, որ շահ Թահմասպ Առաջինը 1550 թ. ձմեռն անց է կացնում Առանի Ղարաբաղում⁸: Այնուհետև, անդրադառնալով 1579–1580 թ. դեպքերին, նա Գանձակի բեկլարբեկին անվանում է «Գանձակի, Բարդայի ու Առանի Ղարաբաղի վալի Իմամ Ղուլի սուլթան»⁹, իսկ նրան ենթակա տարածքը՝ «Գանձակի, Ղարաբաղի

ները (Շահ Իսմայիլի պատմությունը)» գրված 948 թվականին: Իսլամաբաղ, 1406 հ.թ. (1986), էջ 86, 313 (պարսկ.):

⁵ Մ. Բարխուդարյան, Արցախ: Ե., 1996, էջ 15, 19:

⁶ Տես Շարաֆ ալ Դին Եզդի, Չաֆարնամե (Գիրք հաղթության): Թեհրան, 1387, էջ 187, 193, 1121, 1227 (պարսկ.), նաև՝ Նեզամ ալ Դին Շամի, Չաֆարնամե (Գիրք հաղթության): Բեյրութ, 1937, էջ 212, 243, 249, 292 (պարսկ.): *Фазлуллах ибн Рузбихан Хунджю*. Тарих-и алам ара-йи амини. Баку, 1987, сс. 119, 121, 122:

⁷ Տես Մարաֆ-хан Шамсадин Бидлиси. Шараф-наме, т. II. М., 1976, сс. 101, 111, 113, 193:

⁸ Տես նույն տեղում, էջ 196:

⁹ Նույն տեղում, էջ 236:

ու Բարդայի վիլայեթ»¹⁰: ՌԻՍՏԻ ակնհայտ է, որ մինչև 17-րդ դարը «Ղարաբաղն» ընկալվել է որպես Կուր-Արաքսյան հովտում գտնվող մի ձմեռանոցային շրջան, որտեղ ինչպես իլխանական ժամանակաշրջանում, այնպես էլ հետագայում սովորաբար ձմեռում էին քոչվոր ցեղերն ու դրանց ավագանին՝ մինչև Սեֆյան Շահ-Աբաս Առաջինի իշխանության շրջանը:

«Ղարաբաղ» անվանումը Կուր-Արաքսյան միջագետքի վրա տարածվել է ուշ Սեֆյան տիրապետության ժամանակաշրջանում և ավելի հաճախ գործածվել է 17-րդ դարից¹¹: 17-րդ դարի երկրորդ կեսից այս անվանումը պարսկական վավերագրերում ավելի ու ավելի հաճախ է գործածվում Գանձակի բեկլարբեկության իմաստով՝ «Գանձակի» փոխարեն կամ դրա հետ միաժամանակ¹²: 17-րդ դարի երկրորդ կեսին պարսկերեն աշխարհագրական երկուսն Ղարաբաղը նշվում է որպես մի «շրջան, որտեղ կան քաղաքներ, մեծ բնակավայրեր ու ամրոցներ, և այնտեղ էր գտնվում գորք ունեցող հզոր ու անկախ բեկլարբեկերի ամրացված նստավայրը: Ըստ պատմագիրների՝ դա մի երկիր է, որ գտնվում է Շիրվանի ու Ատրպատականի միջև»¹³:

Արցախ-Ղարաբաղի բնակավայրերի հայկական անվանումների հետ զուգահեռաբար գործածվող այն օտար անվանումների շարքից, որոնք տվել են այլազգի հարևանները կամ տիրապետողները, առանձնացնենք աղավաղումների հետևանքով ի հայտ եկած տարբերակները: Այս աղավաղումները հիմնականում պայմանավորված էին տեղանքի նկատմամբ գերիշխանություն ձեռք բերած ժողովրդի լեզվական առանձնահատկություններով: Քանի որ պարսկական աղբյուրներում հանդիպող որոշ օտար տեղանուններ ծագել են արաբ մատենագիրների երկերի ազդեցությամբ, ուստի նախ հարկ ենք համարում դիտարկել այդ տարբերակների առանձնահատկությունները: Արցախի տեղանունների առնչությամբ արաբական մատենագրության մեջ հանդես եկած աղավաղումներին բնորոշ են ձայնավորների ե-ի, օ-ու անցումները: Չայնավորների փոփոխությունները

¹⁰ Նույն տեղում, էջ 246:

¹¹ Տես Հ. Փափագյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ II: Ե., 1959, էջ 100, 110, 125:

¹² Տես Զ. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III: Ե., 2005, վավ. 3, 14, 26, 33, 55, 59, 60, 63:

¹³ Տես «Մոխրասար-ե մոֆիդ» («Օգտակար համառոտագրություն»), Իրանի Սեֆյան ժամանակաշրջանի աշխարհագրություն: Թեհրան, 1390, էջ 168 (պարսկ.):

պայմանավորված էին հիմնականում արաբական այբուբենի սահմանափակ հնարավորություններով, քանի որ արաբերենում ձայնավորների մի մասը չի գրվում, ինչը տարընթերցումների պատճառ է դառնում: Արաբական աղբյուրներում հանդիպող տարբերակներին բնորոշ են նաև որոշ բաղաձայնների (կ, գ, ճ - ջ, գ-ք, ց, ծ - ս, ր, դ - լ, պ, փ - բ, փ - ֆ) փոփոխությունները, դրանց և երբեմն նաև վերջավորությունների կրճատումը: Օրինակ՝ Շակաշեն-Շակաշին, Մեծ Կուենք - Միսկուան, Մեծ Իրանք - Միսրիան, Քուստի Փառնես - Քուսֆարնիս, Հունարակերտ - Հունան, կամ Խունան, Բաղասական - Բալասաջան, Բերդիկ - Բարդիջ¹⁴, Գանձակ-Ջանգա¹⁵, Կաղանկատույս - Կալկաթուս, Գեղարքունի - Քիլքուն, և այլն¹⁶:

Պարսկական միջնադարյան աղբյուրներում հիշատակված աղավաղված տեղանունների մի մասն անցել է արաբական սկզբնաղբյուրներից. Խունան (Հունարակերտ)¹⁷, Բերդիջ (Բերդիկ), Ջաբրուվան (Գաբրավան), Բայլական (Բաղասական)¹⁸: Նման աղավաղման հետևանքով Կիրակոս Գանձակեցու և Ստեփանոս Օրբելյանի երկերում հիշատակվող Չարաբերդի (Ջրաբերդի)¹⁹ փոխարեն պարսկական աղբյուրներում հանդիպում են Ջալբերդ (Ջալփերդ) և Չելբերդ տարբերակները²⁰:

Արցախի, ինչպես նաև Արևելյան Հայաստանի մյուս շրջանների տեղանունների աղավաղումները պարսկական աղբյուրներում բազմաթիվ

¹⁴ Տես Ա. Տեր-Ղևոնդյան, Արաբական աղբյուրներ, հ. Գ «Արաբ մատենագիրներ, Թ-Ժ դարեր»: Ե., 2005, էջ 273–274:

¹⁵ Տես նույն տեղում, էջ 446:

¹⁶ Տես նույն տեղում, էջ 577:

¹⁷ Տես Համդալլահ Մուսրովֆի Ղազվիհի, Նուզհաթ ալ-դուլուբ (Սրտերի մաքրություն): Թեհրան, 1336, էջ 108 (պարսկ.):

¹⁸ Տես Հ. Փափազյան, Անանուն տաջիկ աշխարհագիրը Հայաստանի, Ադրբեջանի և Արևելյան Վրաստանի աշխարհագրության և տնտեսական հարաբերությունների մասին: «Տեղեկագիր ՀՍՄՍ Գիտությունների Ակադեմիայի»: Ե., 1953, հմ. 5, էջ 78–84:

¹⁹ Տես Կիրակոս Գանձակեցի, Հայոց պատմություն: Ե., 1982, էջ 258, Սյրեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմություն: Ե., 1986, էջ 316:

²⁰ Տես Ամիր Սադր ալ Դին Իբրահիմ Անինի Հարավի, Ֆոթուհաթ-ե շահի (Շահի հաղթանակները), Սեֆյանների պատմությունը սկզբից մինչև հիջրայի 920 թ.: Թեհրան, 1383, էջ 411 (պարսկ.), Միրզա Յուսուֆ Ներսեսուլ, Ճշմարտացի պատմություն: Ե., 2000, էջ 39, 43, Զ. Կոստիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ IV: Ե., 2008, վավ. 4:

են: Առանձին դեպքերում որոշ տառերի փոփոխությունները կարող էին կապված լինել տառերի կետերի բացթողման ու ավելացման հետևանքով բնագրային տեքստի ոչ ճիշտ ընթերցման ու հետագա ընդօրինակություններում սխալ տարբերակների ամրագրման հետ: Նման տեքստային աղավաղման ու սխալ ընթերցման հետևանք կարելի է համարել հ-խ, ք-ս, մ-լ անցումները՝ Հունան (حنان) - Խունան (خنان), Վարդան[ակերտ] (ورثان) – Վարսան (ورشان)²¹, Չավնդոր (چوندور) - Չուլդոր (կամ Չըլդըր) (چولدور) տարբերակները²²: Որպես բնագրային տեքստի թյուրըմբռնման օրինակ կարելի է հիշել Համդալլահ Ղազվինիի աշխարհագրական երկում Կուր-Արաքսյան հովտում՝ Պարտավի (Բարդա) մոտակայքում, նշվող «Հիրաք» տեղանունը²³: Այդ տեղանվան ծանոթագրության մեջ տրվում են այլ ձեռագրերում նշվող Թերաք, Սիրաք և Հարաք տարբերակները: Այդ վայրը նշվում է Պարտավի (Բարդա) մոտակայքում, ինչը վկայում է, որ խոսքը, հնարավոր է, Հաթերքի մասին է, որը ևս ունի նմանատիպ գրություն هترک: Արաք աշխարհագրագետ Յակուտի երկում այդ բառը նշված է «Մատրիս» ձևով²⁴: Առանձին դեպքերում պատմաաշխարհագրական երկերում հանդիպող տեղանունների աղավաղումները, երբ դրանք հաճախակի չէին գործածվում և ժողովրդին անհասկանալի էին, չէին տարածվում բնակչության շրջանում որպես տվյալ բնակավայրի անվանում: Սակայն լայն գործածության դեպքում աղավաղված տարբերակները, ստանալով նաև իմաստային որոշ երանգավորումներ, հանդես էին գալիս որպես տվյալ վայրի զուգահեռաբար գործածվող օտար անվանում:

Հայկական տեղանունների աղավաղումների ու ձևափոխումների վկայությունն է Քաշաթաղի պատմությանը վերաբերող մի պարսկերեն վավերագիր, որով 1691 թ. տեղի մի շարք հայկական գյուղերի ավագներն ու տանուտերերն իրենց համաձայնությունն էին տալիս Մելիք Հախնազարի որդի Իլյասին իրենց լիազոր ներկայացուցիչ հաստատելու հարցում: Այդ փաստաթղթում Քաշաթաղի շրջանը նշվում է Քոշթասֆ ձևով, Հոչանց գյուղը՝ Հոչաս, իսկ Աղբաթխերտ (նաև Ալպատխիր, Աղվատխեր, Ալբադ-

²¹ Տես Հ. Թ. Նալբանդյան, Արաբական աղբյուրները Հայաստանի և հարևան երկրների մասին: Ե., 1965, էջ 61, 120:

²² Տես Միրզա Յուսուֆ Ներսիսով, Նշ. աշխ., էջ 44, 46:

²³ Տես Համդալլահ Մուսրովֆի Ղազվինի, Նշ. աշխ., էջ 105:

²⁴ Տես Հ. Թ. Նալբանդյան, Նշ. աշխ., էջ 107, 196:

խիռ) գյուղը, որը գտնվում է Աղավնո գետակի վերնահովտում, պարսկական աղբյուրում հիշատակվում է Աֆաթխար ձևով²⁵։ Աֆաթխար պարսկերեն նշանակում է «մեծ աղետ կամ վնաս»։ Քաշաթաղ գավառը այլ վավերագրերում ևս նշվում է Քոշթասֆ ձևով²⁶, որը, սակայն, պետք չէ շփոթել Կուրից մինչև Կասալից ծով ձգվող նույնանուն շրջանի հետ²⁷։ Այս դեպքում ևս տեղանունն ստացել է իմաստային երանգավորում։ «Քոշթե ասաֆ կամ ասաֆի» բառակապակցությունը պարսկերեն կարելի է հասկանալ «գուր սպանություն» իմաստով։

Աղավաղման հետևանքով ի հայտ է եկել Չառուզիբիլ անվանումը, որը 17-րդ դարից տարածվում էր Ծար գավառի վրա²⁸։ Չառուզիբիլ տեղանունը ծագել է Ծար գավառի և նրա Տպել բնակավայրի աղավաղված Չիբիլ տարբերակի կցումից։ Տպելը հիշատակվում է 12–18-րդ դարերի հայկական աղբյուրներում որպես Թարթառի վտակ Թուրխուի հովտում գտնվող տարածքի անվանում, որը հետագայում տեղայնացվում է գավառի գյուղերից մեկի վրա²⁹։

Պարսկական վավերագրերում Չառուզիբիլ տեղանունը հանդիպում է 17-րդ դարից։ Շահ-Աբաս Առաջինի 1605 թ. հրամանագրով Գեղարքունիքի մեկիք Քյամալին է շնորհվում Չառուզիբիլի շրջանի Ղարասաղալ գյուղից հարկազանծումներ կատարելու իրավունքը³⁰։ Չառուզիբիլը՝ որպես շրջանի անվանում, գործածվում է նաև 17-րդ դարի մի քանի այլ վավե-

²⁵ Տես *Ք. Կուսրիկյան*, Քաշաթաղի 17-րդ դարի պատմությանը վերաբերող մի փաստաթուղթ։ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XX: Ե., 2001, էջ 169:

²⁶ Տես *Հ. Փափազյան*, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ II, էջ 89, 100, 124:

²⁷ Տես *Համդալլահ Մուսթովֆի Ղազվինի*, Նշ. աշխ., էջ 106–107, *Ս. Ջալալեան*, Դանապարհորդություն ի Սեժն Հայաստան, մասն Բ: Տփլիս, 1858, էջ 361:

²⁸ Տես Մաշտոցի անվան Մատենադարան, Մելիք-Շահնագարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 26:

²⁹ Տես *Ա. Ա. Հակոբյան*, *Ա. Հ. Սիմոնյան*, Դաղիվանքի նորահայտ արձանագրությունը և Տպելի տեղադրության հարցը։ «Պատմաբանասիրական հանդես» («ՊԻՀ»)։ Ե., 1998, հմ. 1–2, էջ 231:

³⁰ Մաշտոցի անվան Մատենադարան, Մելիք-Շահնագարյանների ֆոնդ, թղթ. 241, գործ 1, վավ. 27: Տես նաև *Ք. Կուսրիկյան*, Գեղարքունիքի Մելիք-Շահնագարյանների պատմությունից։ «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXIV: Ե., 2005, էջ 311:

րագրերում³¹: Այս շրջանը Իրանի Սեֆյան տիրապետության ժամանակ մտնում էր Չոխտուր Սաադի (կամ Երևանի) բեկլարբեկության մեջ³²: Պարսկերեն վավերագրերում այն ստացել է հետևյալ իմաստային երանգավորումը՝ «ողբ և աղբ (կամ անպետքություն)»:

Ավելի ուշ շրջանում, մասնավորապես՝ 19-րդ դարի սկզբներին, շարունակվում էին անվանումների ձևափոխումները, և դրանք ստանում են իմաստային նոր երանգավորումներ: Օրինակ՝ Շուշի անվանումը երբեմն հանդես է գալիս Շիշե ձևով, որ պարսկերեն նշանակում է «ապակի»³³:

«Քենդ» բաղադրիչը հաճախ է կցվել Արցախի հայկական տեղանուններին հիմնականում ուշ շրջանում (18–19-րդ դարեր)՝ դրանց տալով օտար հնչողություն: Որպես կանոն՝ տեղանունների մեջ «քենդ» վերջավորությունը մատնացույց է անում տվյալ բնակավայրի բնակչության նստակյաց լինելը, ուստիև տրվել է հիմնականում հայկական բնակավայրերին:

Բազմաթիվ են «քենդ» բաղադրիչն ունեցող հայկական բնակավայրերը նաև Արցախի կից Սյունիքի, Երևանի, Շիրվանի նահանգներում:

«Քենդ» բաղադրիչը հաճախ կցվել է հայկական տեղանունների թարգմանական տարբերակներին, որոնցում երբեմն փոխարինել է հայերեն «չեն-գյուղ» բառին (Վաճառ-Բագարքենդ, Գետաշեն-Չայքենդ, Երիցուշեն-Քեշիքենդ և այլն): Խաչենի Քարագլուխ, կամ Շիկաքար, կոչված բնակավայրի անվանումների շարքում հիշատակվում են նաև Դաշուշեն ու Դաշքենդ («դաշ» թուրքերեն նշանակում է «քար») տարբերակները³⁴:

Խաչենի՝ Բագարքենդ անվամբ հայկական գյուղը հիշատակվում է Մատենադարանում պահվող 17-րդ դարի պարսկական վավերագրերում, որոնք կազմվել են գյուղին վերաբերող զանազան խնդիրների կապակցությամբ և բովանդակում են այդ խնդիրների լուծման նպատակով Գանձակի բեկլարբեկի հրահանգները՝ տրված իր պաշտոնյաներին³⁵:

³¹ Տես *Ք. Կոստիկյան*, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III: Ե., 2005, վավ. 37:

³² Տես «Թեզքիրաթ ալ-մոլուք» («Թագավորական հիշատակարան»): Մուհամմադ Դաբիր Սիադի աշխատասիրությամբ: Թեհրան, 1332, էջ 86 (պարսկ.):

³³ Տես *Միրզա Յուսեֆ Ղարաբաղի*, Թարիխ-ե Սաֆի (Ճշմարտացի պատմություն): Թեհրան, 1390, 179–181 (պարսկ.):

³⁴ Տես *С. Лисицян*. Армяне Нагорного Карабаха. Е., 1992, с. 25:

³⁵ Տես Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, 92, թղթ. 2բ, վավ. 124ա, բ. 286:

Հետաքրքրական են Հյուսիսային Արցախի Ոսկանապատ գյուղի Սկնապատ-Սոնդորաբաղ տարբերակները: Հայկական բարբառներում այն հիշատակվում է Սկնապատ ձևով³⁶, իսկ պարսկական աղբյուրներում՝ Սոնդորաբաղ ձևով: «Սոնդորաբաղ» տեղանունը պարսկական վավերագրերում հիշատակվում է 17-րդ դարի սկզբից: Մասնավորապես՝ Շահ-Աբաս Առաջինի 1607 թ. հրամանագրով քրիստոնյա Մելիք Նազարը նշանակվում է Ղարաբաղի Սոնդորաբաղի մելիք և առաջնորդ³⁷:

Իսկ 1637 թ. Շահ Սեֆի Առաջինի հրովարտակով նախկինում Մելիք Նազարին ու Մելիք Սարուխանին շնորհված Սոնդորաբաղ ու Ղարաբեշիշ (Բրաջուր) գյուղերի համեսալեն* շնորհվում է Սաֆար Ղուլիին և այլ բազեապան ծառաների: «Սոնդոր» բառը պարսկերեն նշանակում է «որսորդական բազեի տեսակ», «բաղ»-ը նույն «շեն, բնակավայր» ցույց տվող բաղադրիչն է, որը հաճախակի է հանդիպում թե՛ հայկական, թե՛ իրանական տեղանուններում: «Սոնդորաբաղ» անվանումը հուշում է, որ այդ հայկական բնակավայրում, հավանաբար, զբաղվում էին բազեների կամ որսի այլ թռչունների բուծմամբ:

Հետագայում ևս, օրինակ՝ 1794 թ. Սարգիս կաթողիկոսի ընտրության կապակցությամբ կազմված պարսկերեն գրության մեջ, նշվում է Սոնդորաբաղի մելիք Յուսուֆի անունը³⁸, ինչը հուշում է, որ այդ շրջանում ևս գյուղը հայաբնակ էր և ուներ իր մելիքը: Ընդ որում, հայ ազգագրագետ Ե. Լալայանի ուսումնասիրության համաձայն՝ Ոսկանապատը, ինչպես նաև Միրզիկ, Մուռուք և Բրաջուր գյուղերը պատկանում էին Մելիք Շահնազարյաններին, որոնցից Մելիք Յուսուֆ Երրորդը մահացել էր 1826 թ.³⁹:

19-րդ դարի պարսկալեզու պատմագիրը Քարինտակ գյուղի համար օգտագործում է նրա թյուրքերեն թարգմանական տարբերակը՝ Դաշալթը-լու⁴⁰:

³⁶ Տես *Ս. Ջալալխան*, Նշ. աշխ., մասն Ա, էջ 22:

³⁷ Տես «Тбилисская коллекция персидских фирманов», т. I. Кутаиси, 1995, с. 20:

* Համեսալեն (همه ساله) էր կոչվում ռոճիկների հատուցման այն ձևը, ըստ որի՝ ռոճիկ ստացող պաշտոնյան իրավունք էր ստանում ամեն տարի նույն վայրի հարկերի հաշվից ստանալու իր ռոճիկի գումարը: Այսպիսի իրավունք ստացող զինվորականներն ու պետական պաշտոնյաները կոչվում էին «համեսալեղար»:

³⁸ Տես Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2թ, վավ. 241ա:

³⁹ Տես *Ե. Լալայան*, Գանձակի գավառ: Երկեր, հ. 2: Ե., 1988, էջ 256:

⁴⁰ Տես *Միրզա Յուսուֆ Ներսիսյուլ*, Նշ. աշխ., էջ 123:

Համեմատաբար նոր է (19-րդ դար) նաև Հյուսիսային Արցախի Քարհատ գյուղի Դաշքեսան⁴¹ անվանումը, որը «քարհատ» բառի թյուրքերեն թարգմանությունն է: Քարհատը Հյուսիսային Արցախի հին հայկական գյուղերից մեկն էր, որի բնակչության զբաղմունքը կապված էր նրա մոտակայքում գտնվող քարի հանքի հետ: Այն պատմական հարուստ անցյալ ունեցող հայկական գյուղերից էր, որը եղել է նաև զրչության օջախ⁴²:

Երբեմն օտար թարգմանական տարրերակով օգտագործվում էին տեղանվանը կից Վերին, Ներքին, Մեծ, Փոքր, Հարավային և Հյուսիսային բառերը: Այս բաղադրիչները օգտագործվում են Արցախի կրկնվող տեղանունների հետ: Վարանդայի Հարավային, կամ Արեգոն, Ճարտար (թյուրք. Գյունի Ճարտար) և Հյուսիսային Ճարտար (թյուրք. Ղուզի Ճարտար) գյուղերի անվանումները կապված են այդ բնակավայրերի՝ մինևույն սարի հյուսիսային ու հարավային լանջերին գտնվելու հետ⁴³: Պարսկական վավերագրերում հանդիպում են Սաֆլա (պարսկ.՝ Ստորին, կամ Ներքին) և Ալիյյա (պարսկ. Վերին) բառերը⁴⁴:

Մատենադարանի կաթողիկոսական դիվանում պահպանվել են մեծ թվով պարսկերեն կալվածագրեր, որոնք վերաբերում են Փոքր կամ Նեղ Թաղ և Վերին Թաղ գյուղերի պատմությանը: Այդ վավերագրերում տվյալ տեղանունները մշտապես նշվում են Առանի, կամ Ղարաբաղի, Դիզակի շրջանում, և որպես նրա հարևան շրջան նշվում է Հակարիի (Հագարա, կամ Աղավնո, գետի) շրջանը⁴⁵: Մի քանի կալվածագրերում հիշատակվում են դրա հարևանությամբ գտնվող Տունի, Աղջաքենո, Փարաջան, Հաղլուք հայկական գյուղերը⁴⁶:

Բալլուղայա բնակավայրը պարսկական վավերագրերում այս ձևով հիշատակվում է 18-րդ դարից: Այդ տեղանունը նշվում է Խաչենի Առաջածոր (Դովշանլու) գյուղի ավագերեց Դավթի մեկիքությանը⁴⁷ համաձայ-

⁴¹ Տես Ե. Լալայեան, Նշ. աշխ., էջ 296:

⁴² Տես Ս. Կարապետյան, Հյուսիսային Արցախ, էջ 268:

⁴³ Տես Մ. Բարխուդարյան, Նշ. աշխ., էջ 76–77:

⁴⁴ Տես Զ. Կոսրիկյան, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, վավ. 3, 55:

⁴⁵ Տես Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2ա, վավ. 90, թղթ. 2բ, վավ. 137ա, բ. 128:

⁴⁶ Տես նույն տեղում, թղթ. 2բ, վավ. 137ա, բ. 140, 148, 152:

⁴⁷ Նրա մասին տես Զ. Կոսրիկյան, Ղարաբաղի հայ մեկիքները Նաղիր շահի

նություն տված հայկական գյուղերի կազմած համախոսականում⁴⁸: Այդպես է նշվում գյուղը 19-րդ դարի առաջին կեսին Ղարաբաղի դատարանում գրված մի փաստաթղթում, ըստ որի՝ Աղվանից կաթողիկոսությունը կավածքներ ուներ Բալլուղայա գյուղում⁴⁹:

Հետաքրքրական են հայկական տեղանունների հետ զուգահեռաբար օգտագործվող այն օտար անունները, որոնք մատնանշում են արիեստներ: Այդ կարգի տեղանունները հիմնականում վերջանում են թյուրքական «չի» վերջածանցով, և զարմանալի չէ, որ դրանք հաճախ կրկնվում են նաև հարևան շրջաններում:

Ինչպես Չանգեզուրի, այնպես էլ Արցախի գյուղերի հայ բնակիչները, բացի հողագործությունից, զբաղվում էին նաև արիեստներով: Ընդ որում, եթե և՛ հայ, և՛ թյուրք ու քուրդ կանայք զբաղվում էին գորգագործությամբ ու կարպետագործությամբ, ապա արիեստավորները հիմնականում հայ տղամարդիկ էին: Ռխտի այդ օտար տեղանունները ևս մատնանշում են բնակավայրի հայկական լինելը: Արցախի ու Չանգեզուրի հայկական գյուղերի բնակիչներն զբաղվում էին կավագործությամբ (բրուտներ), քարտաշությամբ, դարբնագործությամբ, արծաթագործությամբ, կոշկակարությամբ և այլ արիեստներով⁵⁰:

Արցախի Ջրաբերդ գավառում նշվող Ղազանչի բնակավայրի պատմությանը վերաբերող տվյալներ պահպանվել են ինչպես տեղի արձանագրություններում, այնպես էլ Մատենադարանի պարսկերեն վավերագրերում⁵¹:

Վարանդայի Ավետարանոց գյուղի Չանախչի օտար անվանումը հուշում է, որ այդ գյուղում ամենայն հավանականությամբ զբաղվում էին կա-

իշխանության տարիներին: «Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ», հ. XXVI: Ե., 2007, էջ 259:

⁴⁸ Տես Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 376: Այն հրատարակությունը տես *Ք. Կոստիկյան*, Ղարաբաղի հայ մելիքները..., էջ 261:

⁴⁹ Տես Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2բ, վավ. 286:

⁵⁰ Տես «Материалы для изучения экономического быта государственных крестьян Закавказского края», т. IV, ч. I. Тифлис, 1886, сс. 103, 117:

⁵¹ Տես Մաշտոցի անվան Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 2, վավ. 49, հմմտ.՝ թղթ. 2բ, վավ. 190, *նաև՝ Ք. Կոստիկյան*, Մատենադարանի պարսկերեն հրովարտակները, պրակ III, վավ. 3:

վագործությամբ, քանզի «չանաղչի» օսմաներեն նշանակում է «հողե պնակներ, անոթներ պատրաստող»: Չանախչի էին կոչվում նաև Հյուսիսային Արցախի Տանձուտ և Համասրաբակ բնակավայրերը⁵²:

Ինչպես տեսնում ենք, բազմաբնույթ են Արցախի օտար տեղանունները, որոնք հիմնականում կապված չէին բնակավայրի էթնիկ կազմում տեղի ունեցած որևէ փոփոխության հետ: Այդ տեղանունները ավելի շատ կապված են բնակավայրերի որոշ սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրողությունների հետ և կարևոր նշանակություն կարող են ունենալ դրանց ուսումնասիրության համար: Այդ անվանումները մեծ թիվ են կազմում նաև պատմական Հայաստանի անբաժան մասը կազմող Արցախ-Ղարաբաղի պատմությանն առնչվող պարսկալեզու աղբյուրներում:

Պարսկալեզու աղբյուրներում հայկական բնակավայրերի համար օգտագործվում են հիմնականում օտարահունչ անվանումներ կամ տեղանունների աղավաղված արտասանություններ, որոնց համապատասխան հայկական տարբերակի հետ նույնացման դժվարությունները երբեմն նաև հիմք են դարձել զանազան շահարկումների համար:

⁵² Տես *Ս. Կարասպեղյան*, Հյուսիսային Արցախ, էջ 80, 256:

ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼԻՑ ԿՈՂՍԵՐԻ
ՏԵՂԱՆՈՒՆՈՒԹՅՈՒՆԸ.
ԻՐԱՆԱԿԱՆ ՀԵՏՔ

Հ. Յ. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ, բանասիրական գիտությունների թեկնածու,
դոցենտ, Երևանի Մ. Մաշտոցի անվան հին շենագրերի
գիտահետազոտական ինստիտուտի ավագ գիտաշխատող

Հայոց արևելից կողմերի տեղանվանական համակարգում իրանական տարրը ներկայանում է բառապաշարային, բառակազմական ձևային մակարդակներում, նաև՝ տեղանվանակազմական տիպի առումով՝ վերջածանցավոր տեղանունների գերակայությամբ: Նման տեղանուններից է Դիզակը, կամ Դիզան, որը համապատասխանել է Արցախի Պարզկանք¹ գավառի մի մասին. ուշ միջնադարում այն բաժանվել է երկու մասի՝ Դիզա, կամ Դիզակ, և Վարանդա. «ԺԳ և ԺԴ դարերի սկզբի արձանագրություններում նշվում է Խաչենից հարավ գտնվող Դիզա կամ Դիզակ երկիրը, որն ավելի վաղ Պիանք գավառն էր»²: 16–17-րդ դդ. Դիզակի մեկիքությունը Արցախի հինգ մեկիքություններից մեկն էր: Դիզակն իր այս անունը պահպանել է մինչև 1939 թ., երբ այլևս գավառ չէր, այլ՝ վարչական շրջան, որը վերանվանվեց Հաղրուք³: Ներկայիս Հաղրուքը Դիզակի լեռնային մասն է, որտեղ գտնվում է նաև Դիզափայտ լեռը, որը,



¹ Ինճիճյանը Երասխի և Որոտանի մոտակայքում նշում է Պայլիզան, կամ Պէլլեզան, գյուղը, որի անունը համարում է Պարզկանք/Պարծկանքի աղճատված ձևը (տես Ղ. Ինճիճյան, Ստորագրություն հին Հայաստանեայց: Վեներտիկ, 1822, էջ 309):

² Տես Ղ. Ալիշան, Տեղագրությունը Հայաստանի – Արցախ: «Բազմավեպ», 1989, հմ. 1–4:

³ Հաղրուքի ավանը որպես խոր ձորում հիմնված, շուկաներով, արհեստանոցներով, արքունի գորանոցով ավան հիշատակում է Բարխուտարեանցը (տես Մակար Կախ. Բարխուտարեանց, Արցախ: Բագու, 1895, էջ 69): Հավաստի է թվում արաբ. Hadd «սահման» և իր. -rūd «գետ» < *rauta- մեկնաբանությունը, եթե հաշվի առնենք իր. rūd «գետ» միավորի առկայությունը Արցախ-Ռիտիքի տեղանուններում, հմմտ.՝ Ռիտիքի Առան-ռուր, Ռուր-Պարսեան (Պայակ, Պացյան) գավառանունները, և այլն:

ըստ Ալիշանի, անցյալ դարում այլազգիները Տուզախ⁴ էին անվանում⁵: Դիզակ տեղանունը -ak վերջածանցով (այստեղ՝ տեղանվանակերտ) կազմությամբ է, որի տեղանվանահիմքը հանգում է պրսկ.՝ *dez*, *dež*, «ամրոց, բերդ, ամրացված բնակատեղի» միավորին, հմմտ.՝ ավ. *daēz*- «դասավորել», *daēza*- «հողի կույտ»⁶, հ. պ. *dida*⁷, *didā* «ամրոց»⁸, մար. **dizāka*- «ամրոցում բնակվող» < մար. *dizā* «ամրոց» + *-ka⁹, սողդ. *dyz*՝ [*dizā*], մանիք. մ. պ., պրթև. *dyz* [*diz*]¹⁰, բախտ. *diz*, *dizz* «բարձր սար», վախ. *diz*, *diz di*- «պատ», «պատ կառուցել»¹¹ < *daiža*-/**diža*- «հողակույտ, քարերի շերտ, պատ, ամրոց, միջնաբերդ» < հ.իր. **daiž*- «կառուցել, շինել»

⁴ Տուզախը < պրսկ. *dūzax*, հմմտ.՝ ավ. *duž-anhav*- «schlectes» (տես *Christian Bartholomae*. Altiranisches Wörterbuch. Strassburg, 1904, P. 756), պիլվ. *dōšaxv*, միջ. մանիք. պրսկ. *dušox*, պրթև. *dōžax*, մ. մար. * *dōžax*, քրդ. *dōž*, հյ. < իր. դժոխք: Իսկ որպես տեղանուն, որն օտարազգիները տվել են այս տարածքին, նաև՝ Դիզախայտ լեռանը, ըստ ամենայնի, կապված է այս լեռան վրա քրիստոնյաների սպանդի հետ, որը կատարել է Մագքթայց արքա Սանեսանը: Ավելի ուշ այստեղ կրկին տեղի է ունեցել ճգնափոր մենակյաց մարդկանց սպանություն՝ Քրիստոսի հավատքին հետևելու համար (տես Ղ. *Ալիշան*, Տեղագրութիւնք Հայաստանի – Արցախ: «Բազմավէպ», 1989, հմ. 1–4): Տարածված է ևս մեկ ժողովրդական ստուգաբանություն՝ հիմնված *Դիզախայր* անվան վրա, որը կապված է այստեղ քրիստոնյաներին ու փայտերը դիզելու և այրելու հետ:

⁵ Դիզակ տեղանուն և դրանից ածանցված ձևեր այժմ կան նաև Ատրպատականում, Նախիջևանում, Արևմ. Հայաստանի տարածքում (տես «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2: Ե., 1988, էջ 105–106):

* Օգտագործված հասկանումներ. պրսկ.՝ պարսկերեն, ավ.՝ Ավեստայի լեզու, հ. պ.՝ հին պարսկերեն, մար.՝ մարերեն, սողդ.՝ սողդերեն, մ. պ.՝ միջին պարսկերեն, մանիք. մ. պ.՝ մանիքեական միջին պարսկերեն, պրթև.՝ պարթևերեն, ն. պ.՝ նոր պարսկերեն, բախտ.՝ բախտիարի, վախ.՝ վախաներեն, հ. իր.՝ հին իրանական, իր.՝ իրանական, հյ.՝ հայերեն:

⁶ Տես *Քրիստիան Բարտոլոմե*, Նշ. աշխ., էջ 673–674:

⁷ Տես *H. W. Bailey*. Iranian Studies II. «Opera Minora». Shiraz, 1981, P. 137:

⁸ Տես *R. G. Kent*. Old Persian. New Haven, 1953, P. 191:

⁹ Տես *B. C. Расторгуева, Д. И. Эдельман*. Этимологический словарь иранских языков, т. 2. М., 2007, сс. 313–314:

¹⁰ Տես *D. Durkin-Meisterernst*. Dictionary of Manichaean Middle Persian and Parthian. Belgium, 2004, P. 153b:

¹¹ Տես *И. М. Стеблин-Каменский*. Этимологический словарь Ваханского языка. СПб., 1999, с. 148:

արմատից¹²: Ենթադրվում է, որ քննարկվող Դիզ- տեղանվանահիմքի -i-ն հայերենում պետք է կրճատվեր, ու պետք է լիներ *Դզակ, ինչն էլ մեզ հուշում է, որ պետք է Դիզակի համար վերականգնենք ոչ թե զրոյական ձայնդարձ՝ *dizaka-, այլ արմատի լի ձայնդարձ՝ *daizaka- > *dēzak(a)-: Այսպիսով՝ կարող ենք եզրակացնել, որ Դիզակ անունը հանգում է նշված բառույթին «ամրոց, բերդ, ամրացված բնակատեղի» իմաստով՝ ցուցաբերելով հետևյալ իմաստային զարգացումը. «լեռներով պարսպված բարձրադիր վայր»: Ընդ որում, տեղանուններում նման իմաստային զարգացումը պայմանավորված է նմանության, համեմատության ենթատեքստերով, կամ նման վայրեր ունենալու հատկությամբ:

Իրանական լեզվատարբերը արձանագրված են դեռ Մ. Կաղանկատվացու հիշատակած տեղանուններում: Նրա «Պատմություն Աղվանից աշխարհի» աշխատությունում կարդում ենք. «Եւ երթեալ հասեալ յՌԻտի գավառն՝ իջեալ բանակէին առ ափն Կուրական գետոյն, մերձ ի նաւահանգիստն Չոմաքատակ կամուրջին»¹³: Չոմաքատակ հատկանվան-քատակ բաղադրիչն աներկբա հանգում է մ. իր. katak «տուն» բառույթին < *kata-ka-նախաձևից, հմմտ.՝ սողդ. kt'k, պիլվ. kadag, գուրանի kah, փաշտու kəlay «գյուղ», պարսկական բազմաթիվ բարբառներում՝ kat, kata, katak «տուն» և այլն (հմմտ. նաև՝ k'atak i hnduk «հնդկացու տուն» սրահի անունը՝ հիշատակված Մ. Կաղանկատվացու երկում՝ 628 թ. Խոսրով 2-րդի մահվան վկայության մեջ¹⁴): Ինչ վերաբերում է առաջին զոմ-բաղադրիչին, կարծում ենք, Ոսկեդարյան մատենագրության մեջ հունարեն զոմ՝ «նավակամուրջ» վկայված փոխառությունն է¹⁵: Նման մեկնաբանությունը հիմնված է նաև բերված հիշատակության իմաստային կողմի վրա, որտեղ խոսվում է կամրջի մասին*:

¹² Steu J. Cheung. Etymological Dictionary of the Iranian Verb. Leiden, 2007, P. 54:

¹³ Steu Մովսես Կաղանկատվացու, Պատմություն Աղուանից աշխարհի: Թննական բնագիրը և ներածությունը Վ. Առաքելյանի: Ե., 1983, էջ 103:

¹⁴ Steu նույն տեղում, էջ 148:

¹⁵ Steu Հ. Հյուբշնան, Հայագիտական ուսումնասիրություններ (գերմ. թարգմ. Մ. Ն. Հարությունյանը): Ե., 2004, էջ 275, 455, նաև՝ Հ. Անտոյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2: Ե., 1973, էջ 104:

* ՌԻտի գավառ ասելով կարելի է հասկանալ և՛ նահանգ-աշխարհը, և՛ ՌԻտի Առանձնակ գավառը (Պարտավ կենտրոնով): Ինչ վերաբերում է Չոմաքատակի տեղագրությանը, ապա, ըստ ամենայնի, այն գտնվել է կամ ժամանակակից Մինգեչաուրի

Արցախի Ստեփանակերտի շրջանի Փառուխ բնականունը¹⁶ նույնպես իրանական լեզվաշերտի նմուշ է երկրամասի տեղանվանական համակարգում: Նախաիրանական ածականական *huarnahuant- նախածնը «բարենպաստ, նաև՝ շքեղ, հոյակապ» նշանակություններով վկայվել է Ավեստայում՝ *asx^varənaŋ^vhant*-բառածնով: Իրանական լեզուներում այս իմաստով պահպանված ձևերը, հմմտ.՝ մ. պ. *farrox* «օրհնյալ, բախտավոր», մանիք. մ. պ. *frwx*, *prwx*, հանգում են **farnahuant*- կամ **farnaxwant*-նախածնին¹⁷ (վերջավորության *-ahwá> -axw- > -ox- զարգացմամբ): Քննարկվող տեղանունը ցույց է տալիս պիլվ. *f-* > *hj. p-* հնչյունական անցումը, հմմտ՝ պիլվ. *farr* > *hj. փառ-ք* և դրանից ածանցված կազմությունները՝ փառավոր, ծիրանափառ, փառաշուք և այլն¹⁸: Մ. պ. *farrox* ձևը հայերենում առանձին բառային գործածություն չունի, սակայն ի հայտ է գալիս քննարկվող տեղանունում՝ Փառուխ, որը կարելի է մեկնաբանել «փառավոր, օրհնված տեղ»։ Իսկ «մշակված, բարենպաստ տարածք» հասկացությունը՝ *dast-kart*¹⁹ > *hj. դաստակերտ* բառույթի միջոցով նույնպես հանդիպում է տեղանուններում (Իրանի կենտրոնական ու հյուսիսային տարածքներում այս բաղադրիչով տեղանունները մեծ թիվ են կազմում): Ծագումնաբանորեն հանգում է **dasta-krta*- նախածնին, որն սկզբնապես նշանակել է «բազավորական կամ իշխանական կալվածք»: Հ. պ.-ում վկայվել է միայն մեկ անգամ՝ վերականգնված [*dastaka*]rtam ձևում²⁰, մ. պ. *dast(a)gird* «կալվածք»²¹, պրթ. *dastegird* «հպատակ, ենթակա»²², մ.պ.

հանդիպակաց ափին, կամ էլ Եվլախի տեղում, որոնք, ի միջի այլոց, իրարից շատ հեռու չեն: Որոշակի է, սակայն, որ նշված վայրը գտնվել է հայկական մասում:

¹⁶ Տես Կ. Ս. Դավթյան, Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը: Ե., 1966, էջ 11:

¹⁷ Տես G. Gnoli. *Farr(ah)*. «Encyclopaedia Iranica», 9.3. Costa Mesa: Mazda, 1999, pp. 312ff:

¹⁸ Տես Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 4: Ե., 1979, էջ 482:

¹⁹ Տես Հ. ՈՒ. Բեիլի, Նշ. աշխ.:

²⁰ Տես Ռ. Գ. Կենյո, Նշ. աշխ., էջ 142:

²¹ Տես D. N. Mackenzie. *A Concise Pahlavi Dictionary*. London, 1971, P. 25:

²² Տես Դ. Դուրկին-Մեխարեքեև, Նշ. աշխ., էջ 142: Միջին իրանական արձանագրությունների նյութի հիման վրա Վ. Սկավնովսկին նոր եզրակացությունների է հանգել՝ առաջարկելով *dast-kart* բառույթի համար նոր ստուգաբանություն՝ **dad-ta+krt-* նա-

dastgerd «գյուղ, մշակելի հողատարածք»²³: Հայերենում այս տերմինը գործածվել է երկու իմաստներով՝ դաստակերտ-ազարակ և դաստակերտ-ձեռակերտ²³: Դաստակերտ տեղանունը հիշատակվում է Արցախի Մեծ-Իրանք գավառում, որն ըստ ավանդության՝ Վաչագան թագավորի դուստրերից մեկի ամառանոցն էր²⁴: Այս ավանդությունն էլ խոսում է «իշխանական կալվածք» բառիմաստի օգտին: Մակար եպիս. Բարխուտարեանցը Եղիշ-Առաքեալ, կամ Ջրվշտիկ, վանքը նկարագրելիս հիշատակում է նաև Դաստակերտի սարը²⁵, հմմտ. նաև՝ ՀՀ Սյունիքի մարզում Դաստակերտ քաղաքատիպ ավանը²⁶ և այլն:

Արցախ-Ռիտիքի տեղանվանական համակարգում իրանական լեզվանյութի ներկայությունը դիտվում է բառապաշարային, տեղանվանակերտ ձևույթների շերտերում: Այն ժամանակագրական առումով սկսվում է վաղ միջնադարից, երբ Հայոց արևելից կողմերը Աղվանից մարզպանության կազմում ենթարկվեցին Սասանյան արքաներին: Արցախ-Ռիտիքի տեղա-

խաձևից՝ «ամրություն (fortificatio)» իմաստով (տես *W. Skalmowski. On Middle Iranian DSTKRT(Y). «MedioIranica». Leuven, 1993, PP. 157–162*): Պահլավերենում դաստակերտ բառույթի մասին տես նաև՝ *M. A. Bamanji Nasarvanji Dhabhar. Pahlavi – Dastkart. «Dr. Modi Memorial Volume, Papers on Indo-Iranian and other subjects». Bombay, 1939, PP. 37–45*:

* Արաբականցված *daskara* ձևը նույնպես գործածական է պարսկերենում՝ «գյուղ» իմաստով:

²³ Տես *Г. Х. Саркисян. О двух значениях термина «дастакерт» в ранних армянских источниках. «Эллинистический Ближний Восток, Византия и Иран: история и филология». М., 1967, сс. 97–101*: Ինչ վերաբերում «ձեռակերտ» իմաստին, ապա այն բառույթի բառացի թարգմանությունն է՝ իր. *dast-* «ձեռք» և *-kart* > **krtā-* «կերտված, արված»: Բառն այս իմաստով վկայված է դեռ միջնադարյան մատենագրության մեջ (տես «Նոր բառգիրք հայկազգան լեզվի», հ. II: Ե., 1981, էջ 151):

²⁴ Տես «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, էջ 38, այս գյուղի մասին է թերևս հիշատակում նաև Մ. Կաղանկատվացին (տես *Մ. Կաղանկատվացի, Նշ. աշխ., էջ 411*), տես նաև Հ. Հիրշման, Հին Հայոց տեղոյ անունները: Վիեննա, 1907 թ, էջ 334, *Ղ. Ալիշան, Տեղագրութիւնք Հայաստանի – Արցախ: «Բազմավեպ», 1989, ք. 1–4*, «Описание Карабагской провинции, составленное в 1823 году по распоряжению главноуправляющего в Грузии Ермоловым, действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-м», Тифлис, 1866. (Магаль Сисіянъ), N 9:

²⁵ Տես *Մակար եպիս. Բարխուտարեանց, Նշ. աշխ., էջ 234*:

²⁶ Տես «Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան», հ. 2, էջ 38:

նուններում իրանական տարրի քննությամբ պարզվում են այս շերտի գոյության սահմանները. այն, ունենալով պատմական հիմք, չի խաթարում տարածքի էթնիկական պատկերը, այլ միայն լեզվանյութ է հայոց տեղանվանակազմության համար, նպաստում է նաև տարածքին հատուկ տեղանվանաստեղծությանը:

Հայոց արևելից կողմերի տեղանունների համայնապատկերը հստակ կերպով ցույց է տալիս տարածքի էթնիկական բնութագիրը ինչպես ժամանակի, այնպես էլ տարածության մեջ: Այլ կերպ ասած՝ այս տեղանունների ուսումնասիրությունը հնարավորություն է տալիս վեր հանելու այստեղ երբևէ բնակված ժողովուրդների հետքերը կոնկրետ շրջաններում ու կոնկրետ պատմական փուլերում: Դրանց ծագումնաբանական քննությունը հատկապես կարևորվում է տարածքում թյուրքական էթնիկ տարրի ժամանակագրական ներկայությունը ճշտելու առումով:

Հայաստանի պատմաաշխարհագրության մեջ մասնավորապես անձնանուններից կազմված տեղանունների շարքը բազմապատկվում է 19-րդ դարում, երբ խմբակային-ցեղային համակեցությամբ ապրող թյուրքական ցեղերը բնակություն են հաստատում այստեղ և բնակավայրերն ու անասնապահական սեզոնային գյուղակները կոչում են առաջնորդի, ցեղապետի անունով: Այս ընթացքում սկիզբ է դրվում նաև այն տեղանվանական փոփոխություններին, որոնք կատարվում են, մասնավորապես, թարգմանության միջոցով: Այսպիսի տեղանունները պահպանում են իրենց իմաստային կողմը, սակայն թյուրքական էթնոլեզվական հանրույթի հետ շփումների հետևանքով տեղանունները մասամբ կամ ամբողջովին թարգմանվում են, ընդ որում, կյանքի իրավունք են ստանում արդեն թարգմանված տարբերակները: Այս երևույթը մեծ թափ է ստանում, երբ Արցախը բռնակցվում է Ադրբեջանական ԽՍՀ-ին: Սկսվում է «տեղանվանասպանության», կամ «տոպոնիմի», գործընթաց, երբ տեղանունները քաղաքական փաստի արժեք են ստանում, նպատակային կերպով փոխվում և թյուրքացվում են:

Տեղանուններում իրանական շերտի առկայությունը վաղագույն հայ-իրանական պատմական շփումների վկայությունն է: Այս տարածքների տեղանուններում իրանական նմուշների առկայությունը բացահայտում է թյուրքական տեղանուններ ներմուծելու միջոցով Ադրբեջանի տարածքային հավակնությունների սնանկությունը և օգնում է թյուրքացված տեղանուններն իրենց սկզբնական տարբերակներին վերադարձնելու գործին:

ԱՐՅԱՆԻ 1832–1833 ԹԹ. ՄԱՐԴԱՀԱՄԱՐԻ ՏՎՅԱԼՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՑ ՊԱՏՄԱՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ
ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

*Պ. Ա. ՉՈՐԱՆՅԱՆ, պարմական գիտությունների դոկտոր, ՀՀ ՊՆ
ԱՌՀԻ-ի ավագ գիտնական-վերլուծաբան, ՀՀ ԳԱԱ
Արևելագիտության ինստիտուտի գլխավոր գիտաշխատող,
Ա. Ս. ՎԻՐԱԲՅԱՆ, պարմական գիտությունների դոկտոր,
ՀՀ Ազգային արխիվի տնօրեն*



19-րդ դարի սկզբին Հարավային Կովկասը նվաճելուց հետո Ռուսաստանը պարբերաբար անցկացնում էր տեղի բնակչության մարդահամարներ: Հայաստանի պատմության ուսումնասիրության համար առանձնակի նշանակություն ունեն Արցախում Երմոլովի ու



Մոգիլևսկու (1823 թ.) և Հայկական մարզում (1830–1831 թթ.)՝ Ի. Շուպենի կատարած մարդահամարները, ինչպես նաև 1832–1833 թթ. Արցախում կատարված մարդահամարի դեռևս անտիպ նյութերը:

Մարդահամարների միջոցով ռուսական իշխանությունները հետևում էին բնակչության տեղաշարժերին, ուսումնասիրում նրա տնտեսական հնարավորություններն ու աստիճանաբար ներմուծում ռուսաստանյան հարկային համակարգը: Միևնույն ժամանակ նրանք փորձում էին բնակչությանը տեղաբաշխել ըստ իրենց ռազմաքաղաքական ծրագրերի և այդ նպատակով իրականացնում էին զանգվածային վերաբնակեցումներ: Ռուսական բանակի Երևանյան առաջին արշավանքի ժամանակ Երևանի խանությունը թուլացնելու նպատակով խանության տարածքից դուրս էր հանվել ավելի քան 11.100 ծուխ հայազգի բնակչություն՝ Երևանի մելիքի և հարյուրապետի հետ¹: Այդպիսով կտրուկ նվազել էր Երևանի խանության

¹ Տես «Всепоподданнейший рапорт кн. Цицианова, от 28-го февраля 1805 года,

տարածքի հայագրի բնակչության թվաքանակը, որը մինչ այդ շատ ավելին էր, քան մահմեդականների թվաքանակը*:

18-րդ դարի վերջին և 19-րդ դարի սկզբին արտագաղթի ու համաճարակների հետևանքով կտրուկ նվազել էր նաև Արցախի հայագրի բնակչության թվաքանակը: Նման պայմաններում ռուսական իշխանությունները նպաստավոր պայմաններ էին ստեղծում Արցախ և Ղարաբաղի խանության տարածք քոչվոր բնակչության ներհոսքի համար՝ այն համարելով ռուսական տիրապետության նկատմամբ մահմեդական բնակչության դրական վերաբերմունքի դրսևորում²: Դրա հետևանքով Արցախում վերաբաշխվում էր նաև հողային սեփականությունը և փոփոխվում էր հայերի ու մահմեդականների ռազմաքաղաքական դերերի կարևորության աստիճանը, ինչն իր ազդեցությունն էր ունենում նաև տեղանվանական համակարգի վրա՝ նպաստելով նոր անվանումների առաջացմանը:

Այդ ամենն իր արտացոլումն էր ստացել Արցախում 1823 թ. շուտափույթ կերպով իրականացված Նկարագրության նյութերում, որտեղ բնակչության հաշվառումը կատարված է ըստ մահմեդական բեկերից ստացված տեղեկությունների, ինչը պայմանավորել է տեղանունների արձանագրումը մահմեդական բնակչության լեզվական առանձնահատկություններին համապատասխան: Թվարկված են բազմաթիվ ժամանակավոր բնակատեղիներ, որոնք կրում են դրանց տիրող բեկերի անունները:

N17». «Акты, собранные Кавказской археографической комиссией» («АКАК»), т. II, Тифлис, 1868, с. 276 (<http://www.runivers.ru/bookreader/book9487/#page/1/mode/1up>): Դեռ Ի. Շոպենի կողմից Հայկական մարզի Նկարագրության կազմման ժամանակ Ապարանի 39 գյուղերում բնիկ բնակչությունից մնացել էր ընդամենը 11 ծուխ, իսկ տեղահանված բնակչությունը այդպես էլ մնացել էր Վրաստանի սահմաններում: Ամայացած հայկական բնակավայրերում վերաբնակեցվել էին 1829 թ. ներգաղթյալները (տես *И. Шопен. Исторический памятник состояния Армянской Области в эпоху ее присоединения к Российской империи.* СПб., 1852, сс. 587–592):

* Հայ բնակչության արտագաղթը կազմակերպող Հովհաննես արքեպիսկոպոսի հաղորդմամբ՝ Երևանի մոտ գտնվող Ենգիջա գյուղի 60 ծուխ հայ բնակչությունը հրաժարվում էր թողնել իր բնակավայրը, ուստի ինքը դիմում է Պ. Յիցիանովին՝ «սաստկության» պարտադրելու նրանց: Ըստ Հովհաննես արքեպիսկոպոսի՝ «ինքեանք յիմար գոլով ոչ յանձն առնուն գալ, ըստ վաղեմի առածին, թե իմաստունք խնդրեն զհանգիստ, իսկ յիմարք՝ զհայրենիս» (տես «Присоединение Восточной Армении к России. Сборник документов», т. I. Е., 1972, с. 325):

² Տես «АКАК», т. VII. Тифлис, 1878, сс. 421–424 (<http://www.runivers.ru/bookreader/book9493/#page/470/mode/1up>):

Փաստորեն, նշված Նկարագրությունը կատարվել է կոպիտ մեթոդական սխալներով, և, բնականաբար, ստացվել են ոչ ճիշտ տվյալներ, որոնցում միակողմանիորեն արտացոլվել են միայն մահմեդական բնակչության կողմից գործածվող տեղանունները: Այդ սխալ տվյալները հիմք են դարձել քարտեզագրական հետագա աշխատանքների համար:

1823 թ. Նկարագրության թերությունները ակնհայտ են եղել նաև կազմողների համար, ուստի նրանք, ներկայացնելով իրենց հավաքած տվյալները, միևնույն ժամանակ շեշտել են նոր Նկարագրություն կամ նոր աշխարհագիր ձեռնարկելու անհրաժեշտությունը³: Ղարաբաղի նահանգում (պրովինցիա), որն ընդգրկում էր նախկին խանության տարածքը, 1832–1833 թթ. անցկացվեց աշխարհագիր, որի նյութերը պահպանվում են ՀՀ Ազգային արխիվում:

Աշխարհագրի կատարման ժամանակ կազմողների համար ուղեցույց է ծառայել 1823 թ. Նկարագրությունը: Խնդիր է դրվել նաև տարբերակված հաշվառման ենթարկել արքունի և մասնավոր հատվածի հարկատուներին, ինչպես նաև արձանագրել այն բնակչության թվաքանակը, որն ազատված էր հարկերից: Ըստ այդմ՝ 1832–1833 թթ. մարդահամարի ընթացքում պահպանվել է նախկին խանական պաշտոնյաների ներկայացմամբ տեղանունների արձանագրման սկզբունքը, միևնույն ժամանակ, հաշվառվել են մահալների (գավառների) բնակավայրերի բոլոր անդամները՝ առանձին հարկատուների մեջ պետական (արքունի) և մասնավոր (բեկական) հարկատու բնակչության գրանցմամբ:

1823 թ. Նկարագրության համաձայն Վարանդա գավառում (մահալ) կար հայկական 23 գյուղ և մահմեդականներով բնակեցված ընդամենը մեկ գյուղ: Խաչենի գավառի բոլոր 13 գյուղերը հայկական էին և դեռևս չկար մահմեդական որևէ գյուղ: Թալիշի գավառում բոլոր գյուղերը հայկական էին, թեև արձանագրված էին թյուրքական արտասանությամբ՝ Կարաչինար, Աղջաբենդ, Կարաբուլաղ և այլն: Ջևանշիր գավառում արձանագրված 32 բնակատեղիներից գյուղեր էին միայն 3-ը, իսկ 29-ը դեռևս քոչատեղիներ (*кочевье*) էին:

Ըստ 1832–1833 թթ. աշխարհագրի, պետական (արքունի) գանձարանին հարկատու բնակչությունը Թալիշի գավառում կազմում էր հայազգի

³ Տես «Описание Карабагской провинции, составленное в 1823 году по распоряжению главноуправляющего в Грузии Ермолова, действительным статским советником Могилевским и полковником Ермоловым 2-м». Тифлис, 1866:

657 արական սեռի ներկայացուցիչ, և արձանագրված չէր ոչ մի մահմեդական բնակիչ: Ջրաբերոլի գավառում արձանագրված էին արական սեռի 572 հայ և ընդամենը 5 մահմեդական⁴: Խաչենի գավառում արքունական հարկատու բնակչությունը կազմում էր արական սեռի 1095 հայ, 42 մահմեդական: Վարանդա գավառում, որ ամենից ընդարձակն էր, արքունական էին արական սեռի բնակչության 5351 հայ և 543 մահմեդական: Ալնիհայտ է, որ Վարանդայում մահմեդականների քանակի ավելացումը տեղի է ունեցել 1823-1833 թթ. ժամանակամիջոցում:

Հայ բնակչության բացարձակ մեծամասնություն է արձանագրված նաև մարդահամարի այն տվյալներով, որոնք վերաբերում են մասնավոր կալվածատիրական հարկատու բնակչությանը: Օրինակ՝ Թալիշի գավառում արձանագրված չէ մասնավոր-կալվածատիրական հարկատու որևէ մահմեդական անձ⁵: Խաչենի գավառում հաշվառված էր արական սեռի 540 հայ և 71 մահմեդական, իսկ Վարանդայում՝ 870 հայ և 68 մահմեդական:

Հայաստանի պատմության նշված ժամանակաշրջանի ուսումնասիրության ու գնահատման համար կարևոր նշանակություն է ստանում բնակչության տեղաբաշխման և ազգային կազմի ճշգրիտ իմացությունը, ինչը հնարավոր է մարդահամարների դիմամիկային հետևելու միջոցով: Այդ առումով Հայաստանի և, մասնավորապես, Արցախի պատմության համար մեծ արժեք է ներկայացնում 1823 թ. և 1832-1833 թթ. մարդահամարների համեմատական ուսումնասիրությունը:

Ի տարբերություն 1823 թ. Նկարագրությունից, 1832-1833 թթ. արքունական հարկատու բնակչության աշխարհագիրը կատարվել էր ավելի հստակորեն ձևակերպված հարցաթերթիկի հիման վրա, և բնակավայրերի այցելության միջոցով արձանագրվել էին ծխերի բոլոր անդամները՝ ըստ ազգության, դավանանքի, տարիքի ու սեռի և վարչաքաղաքական բաժանումների: Հայ բնակչությունը հաշվառված է ըստ արական և իգական սեռերի, իսկ մահմեդականները՝ միայն արական սեռի: Հայ բնակչության ազգանունները արձանագրված են ռուսական, իսկ մահմեդականներինը՝ թյուրքական սկզբունքով:

Այս աշխարհագրի նյութերը, որոնք խիստ կարևոր ու մեծարժեք են Արցախի պատմության և, հատկապես, ժողովրդագրական պատկերի ուսումնասիրման համար, դեռ չեն դրվել գիտական շրջանառության մեջ և,

⁴ Տես ՀՀ Ազգային արխիվ, ֆ. 93, ց. 1, գ. 50, թթ. 454-455:

⁵ Տես նույն տեղում, գ. 51:

ինչպես ասվեց, պահվում են Հայաստանի ազգային արխիվում (պատրաստվում են հրատարակության):

Աշխարհագրի տվյալների ուսումնասիրությամբ պարզվում է, որ 1823–1832 թթ. տեղի են ունեցել ժողովրդագրական էական փոփոխություններ.

1827 թ. Ղարաբաղի նահանգում, որն ընդգրկում էր Կուր-Արաքսյան միջագետքի զգալի մասը (բացի Գանձակից և նրանից դեպի արևմուտք գտնվող տարածքներից), Մեհտի Ղուլի խանի բերած և խանական ընտանիքին ենթակա վերաբնակիչներ ունեցող ու պետական հարկերից 6 տարով ազատված 50-ից ավելի նոր ժամանակավոր քոչատեղիների հաշվին մեծացել էր նորաբնակ թյուրքերի թվաքանակը: Դրանք տեղաբաշխված էին հիմնականում Պարտավ-Եվլախի ու Չանգեզուրի տարածքներում:

1832–1833 թթ. մարդահամարի նյութերում արձանագրված է նաև բնակչության՝ տվյալ տարածք ներգաղթելու տարեթիվը, ուստի այդ նյութերից ակնհայտ է մահմեդական բնակչության նորաբնակ լինելու հանգամանքը: Այսպիսով՝ փաստարկվում է, որ մահմեդական բնակչությունն է ռուսական իշխանությունների խրախուսմամբ ներգաղթել Արցախ և հարակից տարածքներ, սակայն աղբյուրներից քարոզչական մեքենան տարածում է այն կեղծիքը, թե իբր տվյալ տարածաշրջանում հայ բնակչության առկայությունը պայմանավորված է պարսկահայոց ներգաղթով, որոնք հաստատվել են իբր մահմեդականներին պատկանող տարածքներում:

Իրականում, ռուսական իշխանությունները դեռ մինչև Թուրքմենչայի պայմանագրի կնքումը և դրանից հետո խրախուսում էին ինչպես մահմեդական, այնպես էլ քրիստոնյա բնակչության ներհոսքը ռուսական տիրապետության սահմաններ՝ թույլատրելով վերադառնալ Վրաստան նույնիսկ նրանց, ովքեր նախկինում ըմբոստացել էին ռուսական տիրապետության դեմ և հեռացել: Դեռևս 1819 թ. հոկտեմբերի 22-ին կայսեր հաստատած օրենքով սահմանվել էր, որ արքունական և կալվածատիրական հողատարածքներում վերաբնակներն ազատվում էին արքունական հարկերից 6, իսկ համայնքային հարկերից՝ 3 տարով⁶: Նույն կարգը տարածվեց նաև 1826 թ. հեռացած մահմեդականների ու ընդհանրապես մահմեդական բոլոր վերաբնակների վրա: Ավելին. մշակվեց և իրագործվեց պատմագիտության մեջ դեռևս համապատասխան գնահատման չարժանացած՝ քոչվոր

⁶ Տես «ԱԿԱԿ», տ. VI, չ. I. Тифлис, 1874, с. 466 (<http://www.runivers.ru/bookreader/book9491/#page/2/mode/1up>):

մահմեդական բնակչությանը նստակեցության փոխադրելու ծրագիր, ինչը մեծապես իր արտացոլումը գտավ թյուրքական նոր տեղանունների առաջացման մեջ: Պասկեիչը 1828 թվականի հունիսի 6-ին համապատասխան հանձնաժողովին հրահանգում էր մահմեդական նահանգների կառավարման նախագիծը կազմելիս աչքաթող չանել «քոչվոր ժողովուրդներին նստակյաց դարձնելու միջոցները, որքան որ թույլ են տալիս կլիման ու երկրի դիրքը, և նրանց վարժեցնել գյուղացու մշտական աշխատանքներին»⁷.

Այսպիսով՝ դեռ մինչև Թուրքմենչայի 1828 թ. պայմանագրի կնքումը, որով հայ բնակչությունը Ռուսաստանի տիրապետության սահմաններ ներգաղթելու թույլտվություն ստացավ, 1812–1827 թթ. մեծ թվով մահմեդական բնակչություն էր փոխադրվել Ղարաբաղի նահանգ և ստացել բոլոր այն արտոնությունները, որոնք հետագայում միայն տարածվեցին նաև Թուրքմենչայի պայմանագրի համաձայն վերաբնակեցված հայազգի բնակչության վրա: Ավելին. եթե հայ բնակչությունը տեղաբաշխվում էր հիմնականում Հայկական մարզի՝ դեռ 1804–1805 թթ. տեղահանության հետևանքով լքված հայկական գյուղերում, ուստի հայկական մարզի շրջանակներում հայկական տեղանունների թիվը չէր ավելանում, ապա մահմեդականների համար կան ստեղծվում էին նոր բնակավայրեր, ինչի հետևանքով ավելանում էր թյուրքական տեղանունների թիվը, կան էլ նրանք բնակեցվում էին լքված հայկական գյուղերում, ինչի հետևանքով հայկական բնակավայրերի անվանումներն աղավաղվում էին: Թյուրքական նոր և հայկական աղավաղված տեղանունները մարդահամարների ժամանակ արձանագրվում էին և ստեղծում այն թյուր տպավորությունը, թե իբր թյուրք-թաթարական բնակչությունը վաղուց ի վեր թվապես գերազանցում էր հայերին:

Այսպիսով՝ Հարավային Կովկասին տիրելու նպատակով պայմանավորված ռուս-պարսկական հակամարտության հետևանքով ակտիվացող էթնիկական տեղաշարժերն իրենց խոր կնիքը թողեցին Հայաստանի տեղանվանական համակարգի վրա: Որպես արդյունք՝ պարսկաթյուրքական ազդեցությամբ տեղանունների պատմական շերտերի աղավաղման գործընթացն էլ ավելի խորացավ զանազան քարտեզագրումների, ինչպես

⁷ «АКАК», т. VII. Тифлис, 1878, сс. 423–424 (<http://www.runivers.ru/bookreader/book9493/#page/470/mode/1up>):

նաև վարչական բաժանումների, և մասնավորապես՝ 1867–1868 թթ. Արցախը Ելիզավետպոլի նահանգի մեջ ներառելու հետևանքով, ինչի պատճառով տեղի ունեցավ Ջևանշիր և Ջերբախի կոչվող գավառների խիստ ընդարձակում, և միաժամանակ վերացան Արցախի վարչական նախկին գավառանունները՝ Ջրաբերդ, Վարանդա, Խաչեն, Դիզակ: Այդ գործընթացը շարունակվեց մինչև Առաջին աշխարհամարտի ավարտն ու Հարավային Կովկասում ազգային պետությունների հռչակումը: Ստեղծվեց այն թյուր պատկերացումը, թե իբր թյուրքերենով արձանագրված տեղանունները Հայաստանում թյուրք բնակչության հնուց ի վեր առկայության և գերակշռության վկայությունն են: Հայ բնակչությունը, սակայն, չհրաժարվեց իր պատմական տեղանուններից և շարունակում էր հիմնականում օգտագործել բնակավայրերի բնիկ հայկական անվանումները:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

1. 1832–1833 թթ. մարդահամարի արդյունքների ուսումնասիրությամբ արձանագրվում է հայ բնակչության գերակշռությունը Արցախում և փաստարկված կերպով հերքվում հայ բնակչության եկվորության վերաբերյալ աղբյուրական կեղծ պնդումը:

2. Արցախի հայկական տեղանունների վերանվանման թյուրքերեն տարբերակները «օրինականացվեցին» ռուսական պաշտոնական գրագրության, ինչպես նաև պետական աշխարհագիր-մարդահամարների միջոցով՝ ստանալով պաշտոնական կարգավիճակ:

3. Արցախի հայ բնակչությունը հիմնականում շարունակում էր օգտագործել բնակավայրերի բնիկ հայկական անվանումները, ինչի շնորհիվ գուգահեռաբար շրջանառում էին երկու տեղանվանական համակարգեր՝ պաշտոնականը, որն սկիզբ էր առել 1823 թ. Նկարագրությամբ ու արձանագրվել նաև 1832–1833 թթ. աշխարհագրի նյութերում, և իրական-պատմականը, որի մեջ իրենց արտացոլումն էին ստացել պատմական վաղագույն ժամանակաշրջաններից սկսյալ հայկական տեղանվանական շերտերը:

ԳԱՆՉԱՍԱՐԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹՅԱՆ ՍՐԲԱՎԱՅՐԵՐԸ
ԸՍՏ ԵՐԵՄԻԱ ՉԵԼԵՊԻ ԶՅՈՄՈՒՐՃՅԱՆԻ
ՔԱՐՏԵԶԻ (1691 թ.)

*ԳԱԲՐԻԵԼԼԱ ՈՒԼՈՒՀՈՐՃՅԱՆ (Իփրալիա), Բոլոնիայի
համալսարանի պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արքայասահմանյան անդամ*

Հայոց եկեղեցու մեծ քարտեզը¹ (358 սմx120 սմ) հայտնաբերվել է Բոլոնիայի համալսարանի գրադարանում պահվող՝ Լյուդովիկո Ֆերդինանդո Մարսիլիի ֆոնդում: Այն կազմվել է 1691 թ. Կոստանդնուպոլսում՝ հայ համայնքի նշանավոր ներկայացուցիչ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի կողմից: Դրա պատվիրատուն կոմս Լյուդովիկո Ֆերդինանդո Մարսիլին էր, մի իտալացի Բոլոնիայից, որը հայտնի էր գիտությունների, ռազմական արվեստի, աշխարհագրության, օվկիանոսագիտության, քաղաքականության և այլ բնագավառներում ծավալած իր գործունեությամբ: 1680 թ. և 1690–1691 թթ. նա երկու անգամ զննացել է Կոստանդնուպոլիս. երկրորդ անգամ՝ ունենալով Ավստրիայի կայսեր հանձնարարությունը՝ Բալկանյան պատերազմներից անմիջապես հետո հաշտության բանակցություններ սկսել Բարձր դռան հետ:



Գրչով գծագրված և ջրաներկով գունազարդված քարտեզն ամփոփում է վանքերի, ուխտատեղերի և հայ եկեղեցու սրբավայրերի գոյությունը վկայող շուրջ ութ հարյուր հայերեն գրառումներ, որոնք դասակարգված են ըստ Հայոց եկեղեցու՝ 17-րդ դ. գոյություն ունեցած չորս կաթողիկոսությունների՝ պատկանելության:

Արցախի տարածաշրջանի տեղանունների և սրբատեղիների պատմության ուսումնասիրության համար մեծ կարևորություն ունեցող 17-րդ դարի այդ արձանագրումները ներկայացնում ենք ըստ հեղինակի օգտագործած տերմինաբանության, որը յուրաքանչյուր վայր բնորոշում է «քաղաք», «վանք», «անապատ» և «ուխտատեղ» տերմիններով: Յուրաքանչ-

¹ Stu Gabriella Uluhogian. Un'antica mappa dell'Armenia. Monasteri e santuari dal I al XVII secolo. Ravenna, 2000:

յուր անվանը կից բերում ենք քարտեզի վրա այդ անուններին ուղեկցող ծանոթագրությունները՝ մեր նշումներով*:

Կուր գետից դեպի հարավ գտնվող քաղաքներն են.

«1. Կէնճէ քաղաք. Խօսրօվ նահատակեցաւ (հմ. 12):

2. Պէրտէ քաղաք. գահ թագաւորին Վաջագանի (հմ. 15)»:

Այստեղ կարելի է ավելացնել Փառիսոս քաղաքը (հմ. 23), թեև հիշատակություն կա միայն նրա վանքի մասին:

Իբրև «վանք» բնութագրվող և մեկնաբանություններով ուղեկցվող վայրերն են.

«1. Եպիսկոպոսարան** . Սաղիանու վանք (հմ. 9):

2. Գոշ Մխիթարավանք, եպիսկոպոսարան եւ գերեզմանն (հմ. 10):

3. Գետկայ վանք. եպիսկոպոսարան, ուր Վանական սնաւ (հմ. 11):

4. Եպիսկոպոսարան. Եւստաթէի եւ Խաթայ հետետղացն առաքելոց վանք. ի տաշտեն մին խաշն ի տեղս է (հմ. 17):

5. Սուրբ Նշան վանք. եպիսկոպոսարան (հմ. 19):

6. Եպիսկոպոսարան. Փառիսոս վանք (հմ. 23):

7. Եպիսկոպոսարան. Կիտապակ վանք (հմ. 24):

8. Եպիսկոպոսարան. Խաթ առաքելոյ վանք, սուրբ Աստուածածին (հմ. 28):

9. Կաթողիկէ վանք (հմ. 30): (չճշ.***)

10. Ղարապաղի Եղիմասար. Եպիսկոպոսարան վանք (հմ. 33):

11. Եպիսկոպոսարան. Խորանաշատ վանք (հմ. 41):

12. Եպիսկոպոսարան. Խաշլապէկ վանք (հմ. 47):

13. Եպիսկոպոսարան. Չարբերդ վանք (հմ. 51):

14. Եպիսկոպոսարան. Շախկախ վանք, ուր շղթայ Պետրոսի առաքելոյն (հմ. 53):

* Քարտեզի մասին շատ ավելի հիմնավոր պատկերացում կազմելուն նպաստում են հիշատակարանի (հմ. 804) հետևյալ նշումները, որոնք վերաբերում են Գանձասարի կաթողիկոսությանը. «Եւ արդ ի խարդ այս ցուցցի. այն որ մին թուղով է, պարոնի քաղաք է գաւառաւն: Եւ որ երկու թուղով է՝ փաշայ կոչի: Եւ որ երեք թուղով է՝ պէկլերպէկի կոչի... Եւ զանապատսն ճգնաւորաց ձիթենեաց ոստովք ցուցցի: Եւ զկուսանաց անապատսն արմաւենեաց ոստովք ցուցի:... Եւ զի գիտելի է Գանձասարայն ինքն Լուսաւորիչն զթոռն իւր զԳրիգորիս հաստատեաց Կաթողիկոս եւ կայ մինչէ ցայսօր»:

** Երեմիա Քյոմուրճյանը «Եպիսկոպոսարան» տերմինն օգտագործում է «Եպիսկոպոսանիստ» իմաստով:

*** Վայրեր, որոնք ի վիճակի չենք եղել ճշգրտելու: Հապավումները հետևյալներն են՝ չճշ. (չճշգրտված), ան. ճշ. (անորոշ ճշտված):

15. Բթկաթաղենց վանք. Եպիսկոպոսարան (հմ. 59):
 16. Եպիսկոպոսարան. Կթեշավանք. Լուսատրիչ շինեաց (հմ. 61):
 17. Վանք Տաշտանոց (հմ. 64) (չճշ.):
 18. Եպիսկոպոսարան. սուրբ Յակոբայ վանք, ուր մաս/ու/ն/ք/ կան Մծբնայ Յակոբ Հայրապետին (հմ. 65):
 19. Եպիսկոպոսարան. Հիբերայ վանք (հմ. 67):
 20. Եպիսկոպոսարան. Տուգաղու Խաչափայտ վանք (հմ. 69):
 21. Եպիսկոպոսարան. Ծարայ վանք (հմ. 75)»:
- Երեմիա Չելեպին զանազանում է սրբավայրերի ևս մեկ կարգ, որն անվանում է «ուխտատեղ».
- «1. Ծեր Աւետարան, ուխտատեղ (հմ. 4):
 2. Սուրբ Յովհաննէս ուխտատեղ (հմ. 18) (ան. ճշ.):
 3. Գրիգորի սուրբ Խաչ, ուխտատեղ (հմ. 31) (չճշ.):
 4. Գ մանկանց ուխտատեղ. մասունքն կան (հմ. 34):
 5. Կաղնայ խաչ, ուխտատեղ Փունդարի (հմ. 36):
 6. Պլանուխ ուխտատեղ (հմ. 39) (չճշ.):
 7. Տիրատուր վարդապետի գերեզման. ուխտատեղ (հմ. 46):
 8. Ախնէ ուխտ Վարդավառի (հմ. 48)»:
- Կան նաև որպես «անապատ» բնութագրված մեծ թվով վայրեր, որոնք հեղինակը նշում է արմավենու ճյուղով, եթե խոսքը վերաբերում է կույսերի անապատի, և ձիթենիով, եթե խոսքը վերաբերում է ճգնավորների անապատի.
- «1. (ձիթենի) Անապատ Պանանց (հմ. 5):
 2. (ձիթենի) Խօշկաշինու անապատ (հմ. 8):
 3. (ձիթենի) Ծաղկոց անապատ (հմ. 13):
 4. (ձիթենի) Վերի Չէկէմ. Ղարամուրատ արանց անապատ (հմ. 22)
- (Ներքին Չէկէմ, հմ. 43):
5. (արմավենի) Ոսկանապատ անապատ կուսանաց (հմ. 25):
 6. (ձիթենի) Կտաշինու (Գետաշենու) անապատ (հմ. 26):
 7. (արմավենի) Կուսանաց անապատ (հմ. 29) (ան. ճշ.):
 8. (ձիթենի) Քեարխտնէ ուխտատեղ, անապատ (հմ. 32):
 9. (ձիթենի) Չարեք անապատ. միանձուրն Ճ (100) միաբանք, երբեմն էս առաւելուն (հմ. 35):
 10. (ձիթենի) Արքայեկ անապատ (հմ. 37) (չճշ.):
 11. (ձիթենի) Կիլիստան. Ամենափրկիչ անապատ (հմ. 38):
 12. (արմավենի) Քէմէնտար անապատ կուսանաց (հմ. 44) (չճշ.):

13. (արմավենի) Շնհերո, անապատ կուսանաց (հմ. 49):
14. (ձիթենի) Անապատ արանց (հմ. 54) (չճշ.):
15. (ձիթենի) Գոշի անապատ (հմ. 60) (ան. ճշ.՝ Դասնոյ անապատ):
16. (ձիթենի) Էադուռն անապատ (հմ. 62):
17. (ձիթենի) Եղիշեի անապատ (հմ. 63) (ան. ճշ.):
18. (արմավենի) Կուսանաց անապատ (հմ. 66) (չճշ.):
19. (ձիթենի) Անապատ Մեծշեն (հմ. 71):
20. (ձիթենի) Անապատ Խաթայու (հմ. 74) (չճշ.):
21. (արմավենի) Կուսանաց անապատ Աւետարանոց (հմ. 79):
22. (ձիթենի) Բըղըրդան անապատ (հմ. 80) (չճշ.)»:

Տվյալների ցուցակը համարելու համար հարկ է կցել լեռներին կամ մեծ կարևորություն չունեցող տեղանքներին վերաբերող որոշ մեկնաբանող գրություններ, որոնց բնույթը տվյալ ժամանակաշրջանում ճշգրտելը խրթին է (գյուղ, աղբյուր, նահատակությունների համար հատկացված վայր և այլն), և որոնք մատնանշված չեն հատուկ անվանումներով.

«1. Դաւիթ եւ Համազասպ նահատակեցան (հմ. 16):

2. Հագարու իլան աղբիւր. արժանատրաց ջուր երեւի. եւ անարժանից ցամաք (հմ. 27):

3. Մուսիւռ մերձ Տեմիր գափի (հմ. 40):

4. Միափերթ քարեայ եկեղեցի խցներովք (հմ. 42):

5. Դիզափայտ լեռն. Թաթարք զճգնաորս եւ զհաւատացեալս խրցիւք գարոյ եւ ցորենոյ այրեցին (հմ. 72):

6. Մարդադանեաց խաչ. Թաթէոս բերաւ ի տաշտէն, ուր զՓրկիչն լուացին (հմ. 76):

7. Վերէնտէ (հմ. 81):

8. Ախըստէվ (հմ. 105)»:

Վերջապես, կաթողիկոսական նստավայրին վերաբերող հիշատակությունից հետո հիշատակություն կա տարածաշրջանի ամենակարևոր վանքի՝ Ամարասի մասին, որը ևս կրում է «կաթողիկոսական» տիտղոսը:

«Աթոռ Գանձասար եւ կաթողիկոսարան սուրբ Խաչ անուն, գոյ ծնօտ Լուսատրչին, գոր աներ Մագիստրոսի ճիհանշիրայն բերել ետ. եւ մասն ի գլխոյ սուրբ Սկրտչին. եւ մասն Իզապուզտոյ եւ Դաւթի Դվնեցոյ սրբոց վկայիցն (հմ. 78):

Եպիսկոպոսարան, Ամարաս. առաջին աթոռ Գրիգորիսի՝ թոռինն Լուսատրչի: Եւ աստ յայտնեցան, ասեն, մեծի Վաջական թագաւորին շիշ մի լի արեամբ Չաքարեայ քահանային եւ մասն Պանդալեմիօնի բժշկին եւ մասն

Յովսէփ Արեմաթացոյն եւ Գրիգորիսի աջն եւ գերեզմանն աստ գոն (հմ. 77):

Ամարասու եայլա կաթողիկոսարանին (հմ. 68)»:

Ընդհանուր առմամբ, Գանձասարի կաթողիկոսությունը, Երեմիա Չելեպիի ներկայացրած ձևով, ընդգրկում է երեք քաղաք, որոնցից մեկը՝ Շամախին, նշված է իբրև բեյլերբեյի (բեկլարբեկ) քաղաք երեք «թուղով»: Այն ընդգրկում է նաև որոշ ավելի փոքր տեղավայրեր, ինչպես Վերեմտեն ու Աղսուրը, որոշ լեռներ, որոնցում տեղի են ունեցել սարսափելի և հրաշագործ իրադարձություններ (Դիզապայտ լեռն, օրինակ, կամ այն լեռը, որի վրա նահատակվել է երիտասարդ թագուհին) և հատկապես սրբավայրեր. Գանձասարի կաթողիկոսության նստավայրն ու Ամարասի նշանավոր վանքը, ինչպես նաև դրանց ամառային նստավայրը, 21 վանք, որոնցից հավանաբար միայն երկուսը (հմ. 30-ը՝ Կաթողիկեն, և հմ. 64-ը՝ Տաշտանոցը) չունեին եպիսկոպոս, 8 ուխտատեղ, ճգնավորների 16 անապատ, կոյսերի՝ 6:

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ

1. Անապատների թիվը Արցախ-Ուտիքի տարածաշրջանում տոկոսային հարաբերությամբ շատ ավելի մեծ է, քան քարտեզում ներկայացված այլ կաթողիկոսություններից, ինչը բնութագրական է Հայաստանի եզրային նահանգների կրոնասիրության և հավատասիրության այն մոդելի համար, որը բնորոշ էր նաև այս տարածաշրջանին:

2. Տեղանուններով ներկայացված սրբավայրերը վկայություն են հայկական տեղանունների բացարձակ գերակայության, որոնք պահպանվել են նաև հետագա դարերում և այժմ ևս գործածական են արցախահայության շրջանում:

3. Ելնելով որոշ տեղանունների բարբառային ուղղագրությունից (Գետաշեն-Կտաշեն, Գետաբակ-Կիտաբակ և այլն)՝ կարող ենք հաստատապես պնդել, որ Երեմիա Չելեպի Քյոմուրճյանին Արցախի սրբավայրերի ու տեղանունների վերաբերյալ տեղեկություններ տրամադրել է ծագումով Արցախցի անձնավորություն (կամ անձնավորություններ), ինչը մեծ արտասանական ճշգրտություն է հաղորդել քարտեզում նշված տեղանուններին:

4. 1691 թ. Երեմիա Չելեպի Քյոմուրճյանի կազմած քարտեզը վկայում է տեղանունների հայկական տարբերակի նախնական լինելու հանգամանքը: Դրանք 19-20-րդ դարերի քարտեզներում թարգմանաբար կամ հնչյունափոխված ձևով ներկայացվել են թյուրքական տարբերակներով (Գետաշեն – Չայքենդ, Գետաբակ – Գետաբայ, Բանանց – Բայան և այլն):

ՏԵՂԱՆՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ* ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ա. Կ. ՅԱԼԱՆՈՒԶՅԱՆ, գեղապետ, ՀՀ ՊՆ ԱՌՀԻ-ի «Հայկական քանակ» ռազմագիտական հանդեսի գլխավոր խմբագրի տեղակալ

Տեղանուններն արտահայտում են իրենց ստեղծողների աշխարհընկալումը, մշակույթի ու կենցաղի առանձնահատկությունները, սովորություններն ու նույնիսկ հոգեվիճակը: Ակադեմիկոս Դ. Ս. Լիխաչովի բնորոշմամբ՝ տեղանունները «հոգևոր մշակույթի առանձնահատուկ հուշարձաններ են» և «ժողովրդական հանճարի կոլեկտիվ ստեղծագործություն»¹: Իսկ խորհրդային անվանի տեղանվանագետ Վ. Ա. Նիկոնովի պատկերավոր արտահայտությամբ՝ տեղանունները «անցյալի պերճախոս վկաներն են», «հեռավոր ժամանակների կենդանի արձագանքը»²:



* Տեղանվանագիտությունը (топонимика) մի գիտություն է, որն ուսումնասիրում է աշխարհագրական անունները, դրանց ծագումը, զարգացումը, ներկայիս վիճակը, իմաստը, ուղղագրությունն ու արտասանությունը (տես Ս. Н. Басик. Общая топонимика. Минск, 2006, с. 6): Է. Աղայանի բացատրական բառարանում որպես ռուսերեն տոпонимика-ի փարզանություն քերված է «տեղանունություն» տերմինը՝ երկրորդ իմաստով, իսկ դրա առաջին իմաստն է «տեղանունների ամբողջությունը» (տես Է. Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան: Ե., 1976, էջ 1431): Վերջինիս համապատասխանում է ռուսերեն топонимия տերմինը, թեպետ երբեմն այդ իմաստով գործածվում է նաև топонимика-ն: Հայերենում երկու տերմինների շփոթից խուսափելու նպատակով ներմուծել ենք «տեղանվանագիտություն» տերմինը՝ «топонимика»-ի դիմաց, և թողել ենք «տեղանունությունը»՝ «топонимия»-ի համար:

Գիտությունների համակարգում տեղանվանագիտության տեղի, դերի, առարկայի ու խնդիրների վերաբերյալ գիտական բանավեճերը մինչև օրս շարունակվում են (տես, օրինակ, X. Л. Ханмагомедов, А. Н. Гебекова. Учение о географических названиях (топонимика) и пути его развития. «Вопросы современной науки и практики. Университет им. В. И. Вернадского», 2011, N 4(35):

¹ Տես Ս. Ն. Բաիկ, Նշ. աշխ., էջ 3:

² Տես В. А. Никонов. Введение в топонимику. М., 2011, с. 13:

Ավածից բխում է, որ տեղանունները կարևոր նշանակություն ունեն սոցիալական հիշողության*, ուստի և ազգային ինքնության ձևավորման ու պահպանման գործում: Ավելին. դրանք հենց սոցիալական հիշողության մաս են: Հետևաբար՝ տեղանունների փոփոխման միջոցով կարելի է փոփոխել սոցիալական հիշողությունը, այդպիսով՝ ամրապնդել կամ թուլացնել իշխանությունն ու ազգային ինքնագիտակցությունը:

Կարելի է առանձնացնել տեղանունների՝ որպես սոցիալական հիշողության փոփոխման լծակի կիրառման երկու մակարդակ: Առաջին մակարդակում իշխանությունը մի տեղանունը կամ տեղանունությունը պարզապես փոխարինում է մյուսով՝ առանց դիմելու տեղանվանագիտության գիտական ապարատի օգնության: Երկրորդ մակարդակում այդ ապարատը գործի է դրվում: Բերենք այդ երկու դեպքերին համապատասխանող օրինակներ:

Ա) Տեղանունները պատմության ընթացքում բավական հաճախ են փոփոխվել քաղաքական (գաղափարախոսական) նպատակներով: Նվաճողները փոխել են իրենց գրաված բնակավայրի անունը, որպեսզի նվաճված ժողովրդի հիշողությունից ջնջեն նրա անկախության ժամանակաշրջանը³:

* Սոցիալական հիշողությունը այնպիսի սոցիոնշակութային միջոցների և հաստատությունների ամբողջություն է, որոնք կարևոր սոցիալական տեղեկույթն ընտրում և կերպավորում են անցյալի մասին տեղեկույթի՝ կուտակված հասարակական փորձը պահպանելու և սերնդեսերունդ փոխանցելու նպատակով: Տերմինը ներմուծվել է 20-րդ դարի 60–70-ական թվականներին, իսկ մինչ այդ գործածվում էին «կոլեկտիվ հիշողություն», «պատմական հիշողություն» և այլ հասկացություններ (տես *Б. С. Илизаров. Социальная память. Социологический словарь. Отв. ред. Г. В. Осипов, Л. Н. Москвичев. М., 2014, с. 326*):

³ Ճապոնացիները, 19-րդ դարում գրավելով Կորեան, փոխեցին բոլոր խոշոր քաղաքների անվանումները. Փխենյանը դարձավ Հեյձիո, Խամխինը՝ Կանկու, Սեուլը՝ Կեյձե, և այլն: Հոլանդացի գաղութարարները Ինդոնեզիայում հնագույն Ջակարտան վերանվանեցին Բատավիա (բատավները եղել են հոլանդացիների նախնիները): Աշխարհի ամենաբարձր լեռնագագաթը՝ Հիմալայներում գտնվող Ջոմոլունգման, որը հազարամյակներ շարունակ այդ անունն էր կրում, 19-րդ դարից բոլոր քարտեզներում վերանվանվում է Էվերեստ. անգլիացի գաղութարարներն այդպես են անվանում լեռը՝ ի պատիվ Հնդկաստանի քարտեզագրական հաստատության պետ անգլիացի Ջոն Էվերեստի (տես *Վ. Ա. Նիկոնով, Նշ. աշխ., էջ 152–163*):

Թուրքիայում հայկական տեղանունների ձևախեղման ավանդույթն ունի դարավոր պատմություն: Օսմանյան իշխանությունները, նորանվաճ տարածքները յուրացնելու նպատակով, բնիկ տեղանունը թարգմանում էին թուրքերենի, ինչպես Տանձուտը՝ Արմուդլու, Արբյուրաշենը՝ Քյանքենդի, Կարմրիկը՝ Քըզըլջա, Ծաղկաձորը՝ Դարաչիչեք և այլն, կամ էլ տեղական բարբառի ազդեցությամբ նախկին ձևից որոշ չափով հեռացած տեղանունը բաղարկության սկզբունքով նմանեցնում թուրքական այս կամ այն բառին, այսպես՝ Արմտիքը դարձնում Արմուդի, Օձունխաչը՝ ՈՒՔունհաչ, Օձունը՝ ՈՒՔունլար, Կյուրոպաղատը՝ Գյուրբաղը, Քարիատավանը՝ Քարադիվան, Քարվաճառը՝ Քելբաշար, Ճղոպուրկենցը՝ Չոփուրգենս, Բասենը՝ Փասինլեր և այլն: Տարածված մեթոդներից էր նաև հին բնակավայրերին նոր անուններ տալը՝ նրանց բուն պատկանելությունը մոռացության մատնելու ձգտմամբ: Անվանափոխվում էին նույնիսկ քրիստոնեական սրբավայրերը. օրինակ՝ նշանավոր Վարագավանքն անվանափոխվել է Եղիքիլիսե (յոթ եկեղեցի), թյուրքական ցեղերն անգամ Սուրբ Էջմիածինը վերանվանել էին ՈՒչքիլիսե (երեք եկեղեցի)⁴:

19-րդ դարի կեսերից թուրքական իշխանությունները որոշում են ոչ միայն անվանափոխել կամ աղավաղել հայկական նահանգների, գավառների, գյուղերի անունները, այլև իսպառ ոչնչացնել Հայաստան անունը: Այս քաղաքականությունը գործադրվեց հատկապես 1877–1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ Հայկական հարցն արևմտյան տերություններն օգտագործեցին՝ Թուրքիայի վրա ճնշում գործադրելու նպատակով: Արդուլ Համիդ Բ սուլթանի կառավարությունը Հայաստան անունը փոխարինեց հնարովի Քրդստան կամ Անատոլիա տերմիններով: 1880 թվականից պաշտոնական փաստաթղթերում արգելվեց Հայաստան անվան հիշատակումը: Այդպիսով Բարձր դուռը ձգտում էր արևմտյան տերություններին հասկացնելու, որ Հայկական հարց գոյություն չունի. չկա Հայաստանը, չկա և Հայկական հարցը: Արդուլ Համիդի օրոք թուրք կամ քուրդ գաղթականներով վերաբնակեցված վայրերի հին անունները փոխարինվում էին նորերով. դրանք կամ փաղիշահների կամ էլ գաղթական ցեղերի անուններ էին՝ Համիդիե, Ռեշիդիե, Ազիզիե, Մահմուդիե:

⁴ Տես *Լուսինե Սահակյան*, Տեղանունների թուրքացումն Օսմանյան կայսրությունում և հանրապետական Թուրքիայում: «Արարատ» ռազմավարական հետազոտությունների կենտրոն, 18.09.2009 (<http://blog.ararat-center.org/?p=284>):

Այս քաղաքականությունը հատկապես ակնառու դարձավ իրֆիհատականների իշխանության օրոք: Նրանք օսմանյան փաղիշահների անունները կրող և նախաօսմանյան շրջանին պատկանող տեղանունները փոխարինեցին իրենց անուններով՝ Էնվերիե, Շևքեթիե, Մահմուդշևքեփաշա և այլն⁵:

Երիտթուրքական իշխանությունները չափազանց կարևորում էին «ոչ մահմեդական» տեղանունները վերափոխելու գործը: Կայսրությունում տեղանունների համակարգված թուրքացմանն էր նպատակաուղղված 1913 թ. մայիսի 13-ին ընդունված «Գաղթականների բնակեցման կանոնադրություն» փաստաթուղթը: Հաջորդ քայլը 1916 թ. հունվարի 5-ին կատարեց երիտթուրքերի կառավարության ռազմական նախարար Էնվեր փաշան. ըստ թուրքական ռազմաքաղաքական իշխանություններին առաքված նրա հրամանագրի՝ պահանջվում էր Օսմանյան կայսրության հայերեն, հունարեն և բուլղարերեն տեղանունները փոխել թուրքերենի: Էնվերի հրամանագրով ոգևորվելով՝ թուրք հայտնի զինվորական Հուսեյն Ավնի (Ալփարսլան) բեյը, որը նաև թուրքերեն լեզվի և թուրքական մշակույթի մասին հողվածների հեղինակ էր, գրում է. «Եթե մենք ուզում ենք մեր երկրի տերը դառնալ, ապա ամենափոքր գյուղի անունն անգամ պետք է թուրքերեն դարձնենք, այլ ոչ թե թողնենք հայերեն, հունարեն, արաբերեն: Այսպիսով՝ մեր երկիրը կնեղկենք մեր գույներով»⁶:

Քեմալական Թուրքիայում տեղանունների փոփոխության առաջարկներ արվեցին դեռ 1920-ական թվականների սկզբներին: 1922 թ. անվանափոխվել են որոշ հայկական տեղանուններ, որոնք մինչ այդ էլ արդեն ենթարկվել էին աղավաղման, մասնավորապես՝ Մոկյուս անվանակոչված պատմական Մոկյը վերանվանվել և այսօր էլ կոչվում է Բահչիսարայ: 1928 թ. անվանափոխվել ու թուրքացվել են Եգեյան ավազանի հունական և Թուրքիայի հարավարևելյան շրջանների հայկական տեղանունները: Սակայն անվանափոխության ավելի լայն գործընթացն սկիզբ է առել 1940 թ., երբ Թուրքիայի ներքին գործերի նախարարությունը հրապարակել է հմ. 8589 շրջաբերականը, որտեղ հստակ կերպով նշվում է «օտար լեզուներից և արմատներից ծագող և գործածման մեջ թյուրընկալումների պատճառ հանդիսացող բնակավայրերի ու տեղանունների» թուրքերեն անվանումներ:

⁵ Տես նույն տեղում:

⁶ Տես նույն տեղում:

րով փոփոխման անհրաժեշտության մասին: Դրանից հետո նահանգապետարանները կազմել և նախարարություն են ուղարկել «օտարալեզու» տեղաբնակների ցուցակները: Ուշագրավ է նաև այս գործընթացի ժամանակաշրջանը՝ 1940-ական թվականներ, երբ Թուրքիայում ձեռնարկվել էին թուրքացման լայնածավալ գործընթացներ (օրինակ՝ տնտեսության մեջ), ոչ մահնեղական բնակչության հանդեպ կիրառվում էին տարատեսակ խտրականություններ: Տեղաբնակների համակարգված թուրքացումն սկսվում է 1957 թ., երբ հատուկ դրա համար ստեղծվում է «Տեղաբնակների փոփոխության մասնագիտական հանձնաժողով», որի մեջ ընդգրկվում են գլխավոր շտաբի, ներքին գործերի, պաշտպանության, կրթության նախարարությունների, Անկարայի համալսարանի լեզվական, ու պատմաաշխարհագրական ֆակուլտետների և «Թուրքական լեզվական ընկերության» ներկայացուցիչներ: Հիշյալ հանձնաժողովն աշխատել է մինչև 1978 թ.: Այդ ընթացքում ուսումնասիրվել է շուրջ 75 հազար տեղաբնակ և անվանափոխվել դրանցից 28 հազարը⁷:

Թուրք հետազոտող, Եփրատ համալսարանի դոցենտ Հարուն Թունչելը պնդում է, որ անվանափոխվել են ավելի քան 12 հազար գյուղերի անուններ (Թուրքիայի գյուղերի շուրջ 35 տոկոսը): Անվանափոխությունների թիվն ամենամեծն է Թուրքիայի արևելյան, հարավարևելյան և սևծովյան շրջաններում, այսինքն՝ հիմնականում պատմական Հայաստանում, ինչպես նաև հունական տարածքներում⁸: Ընդ որում, հայկական բազմաթիվ տեղաբնակներ ոչ թե թուրքացվել են, այլ քրդացվել, օրինակ՝ Անթեփը (հայերեն՝ Այնթափ), Խարփեթը (Խարբերդ), Էրզինգանը (Երզնկա), Չերմիզը (Չերմուկ), Կադրզմանը (Կադզկան), Գերսիմը, Տեկորը, Վեստանը (Ոստան), Գերչանիսը (Կերչանիս), Փալին (Բալու), Ջուլեմերկը (Ջուլամերկ), Բեդլիսը (Բիթլիս) Գոզսին (Կոկսի), Կերսը (Կարս), Փուլուրը (Բլուր), Փերթակը (Բերդակ), Գեդին (Քրդի), Չերմեն (Չերմե), Քոփը (Կոփ), Չամիշգեզը (Չմշկածագ), Թերջանը (Դերջան), Քեմահը (Կամախ), Իսփիրը (Սպեր), Չարուշատը (Չարիշատ), Արթեմեթանը (Արտամեդ), Էրդիշը (Արճեշ), Չեղկանը (Չատկան), Թաթոսը, Էգինը (Ակն), Թուխը, Քեբանը (Կապան), Ավշինը (Օշին), Սիվերեթը (Սև ավերակ), Ջիրմիքը (Չերմիկ), Սերթը

⁷ Տես *Ռուբին Մեյրունյան*, Տեղաբնակների թուրքացումը հանրապետական Թուրքիայում: «Նորավանք» հիմնադրամ (http://www.noravank.am/arm/articles/detail.php?ELEMENT_ID=420):

⁸ Տես նույն տեղում:

(Մղերդ), Էրիփկիրը (Արաբկիր), Էրխվան-Արզուվանը (Արզավան), նույնիսկ՝ Էրզրոմը (Էրզրում), Քիլիսը (Եկեղեցի բառի աղավաղված ձևն է) և այլն⁹:

Բոլոր վերոնշյալ անվանափոխությունների պատճառները քաղաքական էին՝ պետական սահմանների փոփոխություն, անվանակոչվող օբյեկտների ազգային պատկանելության շեշտում, արտաքին քաղաքական հանգամանքներ և այլն:

Ռուսաստանում 1917 թ. հեղափոխությունից հետո բոլշևիկյան իշխանությունները քարոզչական նպատակով անվանափոխեցին բազմաթիվ տեղանուններ, մասնավորապես՝ կրոնական բովանդակություն ունեցող տեղանունները¹⁰:

Մեր օրերում տեղանունները կիրառվում են նաև քարոզչական պատերազմներում, հատկապես՝ քարտեզների միջոցով: 2004 թ. «Նեյշնալ Ջեոգրաֆիկ» («*National Geographic*») հրատարակչությունը հրապարակեց քարտեզների հավաքածու, որոնցում Պարսից ծոց անվան կողքին փակագծերում ավելացված էր «Արաբական» բառը: Իրանում բողոքի ալիք բարձրացավ. սկսվեցին ցույցեր, երկրի խորհրդարանը այդ առթիվ որոշում ընդունեց ընդդեմ այդ հրատարակչության: Սակայն այսօր «Գուգլ» («*Google*») ընկերության քարտեզներում երկու անվանումներն էլ գործածվում են: Ամերիկացի որոշ հետազոտողներ կարծում են, որ «Իրանի տարածաշրջանային գերիշխանությունը խորհրդանշող» «Պարսից ծոց» անվանման հետ կապված ձեռնածությունները ամերիկյան բարձրաստիճան պաշտոնյաների և Կենտրոնական հետախուզական գործակալության աշխատողների նախաձեռնությունն է, քանի որ նրանք ձգտում են տեղանունների փոփոխության միջոցով «պարսիկ և արաբ մահմեդականների միջև ատելություն հրահրելու»¹¹:

Բ) Քննության առնենք քաղաքական նպատակով տեղանունների շահարկման երկրորդ մակարդակին համապատասխանող օրինակները:

Հյուսիսային Կովկասն այսօր աչքի է ընկնում սոցիալական ու քաղաքական լարվածությամբ: Այս տարածաշրջանում օրախնդիր են այնպիսի

⁹ Տես *L. Սահակյան*, Նշ. աշխ.:

¹⁰ Տես Վ. Ա. Նիկոնով, Նշ. աշխ., էջ 160:

¹¹ Տես *Николай Малишевский*. Картография как инструмент политики. «Фонд стратегической культуры», 01.03.2013 (<http://www.fondsk.ru/news/2013/03/01/kartografia-kak-instrument-politiki-i-19346.html>):

հարցեր, ինչպիսիք են քաղաքական ինքնիշխանությունը (Չեչնիա), իռե-դենտիզմը (օսեթներ և լեզգիներ), տարածքային վեճը (օսեթա-ինգուշական հակամարտություն), քաղաքական կարգավիճակի բարձրացումը (բալկար-ներ, նոգայներ), մշակութային ու ժողովրդագրական խնդիրները (ադրդե-ներ, չերքեզներ, կումիկներ): Այս իրավիճակում քաղաքական պահանջ-ների օրինականացման միջոց է դառնում տվյալ ժողովրդի «փառավոր անցյալի» վկայակոչումը. որի նախնիներն ավելի վաղ են հաստատվել Հյուսիսային Կովկասում, ստեղծել բարձրարժեք մշակույթ, պետականու-թյուն, ավելի շուտ ընդունել քրիստոնեությունը, մահմեդականությունը և այլն*:

Տեղական իշխանությունների լռելյայն խրախուսմամբ ծաղկեց այլ ժողովուրդների հաշվին իր ժողովրդի համար պատմության «ինքնատիպ» տարբերակների ստեղծման արատավոր գործելաժող: Հարևան հանրա-պետությունների գիտական դպրոցների ներկայացուցիչները «փաստերը ձեռքներին» ապացուցում են տրամագծորեն հակառակ գաղափարներ՝ ուշադրություն չդարձնելով հակասությունների և սխալների վրա: Հանուն փառավոր անցյալի մղվող պայքարի շրջանակներում անցկացվում են նաև տեղանվանագիտական հետազոտություններ: Ընդ որում, կարաչայներն ու բալկարները, մի կողմից, վայնախները՝ մյուս կողմից, համապատասխա-նաբար թյուրքական և վայնախյան տեղանուններ են փնտրում Հյուսիսա-յին Օսեթիայի տարածքում, իսկ օսեթներն, իրենց հերթին, հարևանների տարածքներում գտնում են օսեթական տեղանուններ: Այս ամենն արվում է պարզելու համար, թե ում նախնիներն են հնում բնակվել Կենտրոնական Կովկասի հողի վրա: Հետազոտող Լ. Գատազովան նկատում է, որ Հյու-սիսային Կովկասում «բազմաթիվ ժամանակակից էթնիկական հակամար-տություններ սաղմնավորվել են առավելապես հին աշխարհի և միջին դարերի պատմությանը վերաբերող աշխատություններում»¹²:

* «Փառավոր անցյալի» որոնումը սերտորեն կապված է Ոսկեդարի մասին առա-պելի հետ. մարդիկ փորձում են անցյալում գտնել բարոյական արժեքներ ու վարքագծի մոդելներ, որոնք կարող են հաջողության հասցնել ներկայում: Ոսկեդարի մասին հիշո-ղությունը մեծ դեր է խաղում ազգային ինքնության և ազգերի ձևավորման գործում, որովհետև որքան ավելի փառավոր է անցյալը, այնքան հեշտ է դրա շուրջ համախմբել մարդկանց (տես *В. А. Шнирельман. Быть аланами. Интеллектуалы и политика на Северном Кавказе в 20-м в. М., 2006* (polittheory.narod.ru/Library/Shnirelman_Alans.doc)):

¹² Տես նույն տեղում:

Տեղանվանագիտության գիտական ապարատի շահարկմամբ քաղաքական խնդիրների լուծման վառ օրինակ է Ադրբեջանի Հանրապետությունը: Ադրբեջանի նախագահը և այդ երկրի տարբեր բարձրաստիճան պաշտոնյաներ արդեն վաղուց հայտարարում են, թե Լեռնային Ղարաբաղը և Հայաստանի Հանրապետության մեծ մասը «ադրբեջանական հողեր» են, և դա «հիմնավորում» են նաև տեղանունների միջոցով: Ահա նրանց հիմնական պնդումները:

«Նախիջևանը հին ադրբեջանական հող է: Նախիջևանում պատմական հուշարձանները, կրոնական հուշարձանները, ճարտարապետական հուշարձանները, բոլոր տեղանունները պատկանում են ադրբեջանական ժողովրդին: ...Ջանգեզուրի այն ժամանակվա բնակչության բացարձակ մեծամասնությունը ադրբեջանցիներ էին: Ջանգեզուրի բոլոր բնակավայրերի անվանումներն ադրբեջանական էին» (Ադրբեջանի նախագահ, 08.04.2014)¹³:

«Լեռնային Ղարաբաղը Ադրբեջանի անքակտելի մասն է, մեր բուն հողը: Լեռնային Ղարաբաղում բոլոր տեղանուններն արտացոլում են ադրբեջանական ժողովրդի մշակույթը, պատմությունը: Եվ ոչ միայն Լեռնային Ղարաբաղը, այլև ներկայիս Հայաստանի մեծ մասը հին ադրբեջանական հողեր են» (Ադրբեջանի նախագահ, 20.03.2014)¹⁴:

